

20.359

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՅՈՒՍԱՐԵՐ» ԹԻՒ 6

Կ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
«ԼԻԿԻԻԴԱՑԻԱՆ»

(ԲՈՒՆԵՒԻՋՄԻ ՕՆԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

ԿՈՒՆԱԿԷ
ՏՊԱՐԱՆ «ՅՈՒՍԱՐԵՐ»

1924

329.14

Ա-38

Հասոյքն ամբողջութեամբ յատկացում է
Հ. Յ. Դաշնակցութեան տարագիրներին

Գրքոյկը ճրիարար շարել են
«Յուսաբեր»-ի աշխատանոցները



2963-2002

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
„ԼԻԿԻԻԴԱՑԻԱՆ“
(Բուլղերիզմի սնանկութեան անխրով)

Այս նշարանի տակ պայքար է սկսուել
Խորհրդային Ռուսաստանի բովանդակ տարա-
ձութեան վրայ, Հ. Յ. Դաշնակցութեան
ղէմ:

Պայքարի նպատակը—հին է, նոր չեն—
նաև միջոցները:

Երեւոյթների խորքը զիտող մտքի համար
առաջին իսկ հայեացքից պարզ է, որ կռուի
հին ձևերը, ամենայն հաւանականութեամբ,
արդիւնք չտուին (կամ տուին, սակայն ոչ
ցանկացած չափով) և ահա այդ պատճառով
զինապահեստից օգնութեան են կանչում պայ-
քարի «նոր» ու «անձանօթ» զէնքեր:

Փորձենք հասկանալ մեր հակառակորդնե-
րին, որովհետև այս պայքարի միջ թագնուած
է Հ. Յ. Դաշնակցութեան գենսունակութեան
ազդիւրը և պայքարողների անխուսափելի
մահը:

Սակայն նախապէս մի երկու խօսք բոլշեւիզմի էութեան մասին :

1917-ի հոկտեմբերին Համառուօական Ս. Դ. Բանուորական կուսակցութեան բոլշեւիկեան թևը, մէկ դաւադիր ըմբոստացումով, տիրացաւ բովանդակ երկրի պետական իշխանութեան : Եւ այդ օրերից զրօւնց մարդկային պատմութեան մէկ նոր և ընդարձակ հատորը : Հսկայածաւալ երկրի մէկ ծայրից միւսը հաստատուեց մի խումբ դաւադիրների սանձարձակ իշխանութիւնը, որոնց համար անթոյլատրելի ոչինչ չկար եւ որոնց նկատմամբ միջինները զրօւած էին ստրկական վիճակի մէջ : Նոր էր այս երեւոյթը ոչ միայն իր չափով, այլ և իր տեսակով :

Իշխելու իրաւունքը պետական կեանքի մէջ, սեղմուելով անսահմանօրէն և դառնալով մի փոքրաթիւ ու սահմանափակ խմբակի բացարձակ սեփականութիւնը, բռնակալութեան չափը դարձրել էր որակ և ստեղծել մի ինքնօրինակ և աննախընթաց երեւոյթ :

Խորհրդային Ռուսաստանի փորձի վրայ կարծես դալիս էր հաստատուելու Հեղեղեան այն տեսութիւնը թէ՛ քանակը, որոչ սահմաններից յետոյ, դառնում է որակ :

Որովհետեւ մարդկային բառարանի մէջ գոյութիւն ունեցող խօսքերը բացարձակապէս անզօր են պատկերացնելու այն վիճակը, որ ստեղծուեց Ռուսաստանում, յատկապէս 1917ի

յունուարից սկսած :

Բոլշեւիկեան տիրապետութիւնը նման չէր ցարական կարգերին, որովհետեւ ցարերի ժամանակ քաղաքացիական մի շարք իրաւունքներ անկապտելի սեփականութիւնն էին դարձած բոլոր նրանց, որոնք օրէնքի սահմաններից դուրս չէին նկատուած, ասել է՝ Ռուսաստանի բովանդակ ազգաբնակչութեան համար, աննշմարելի տոկոսի բացառութեամբ միայն :

Պատմութեան ծանօթ բռնապետութիւններից չէր այս, որովհետեւ նաև բռնապետութեանց ժամանակ կար ազատութիւնների մէկ նուազագոյն չափ, որից անհատը, այնուամենայնիւ, կարող էր օգտուել :

Մինչև իսկ ճորտատիրական կարգերը որոշ երաշխիքներ ունէին պահած բոլոր նրանց համար, որոնք այս կամ այն չափով դատապարտուած էին ճորտի կեանք վարելու :

Ստրկական կարգերին նմանող մէկ վիճակ էր այս, ուր Ներոնեան դաժանութեամբ կառավարում էին հսկայական բազմութիւնները, այն տարրերութեամբ սակայն, որ հին Հռոմի օրէնքը բացայայտօրէն յայտարարում էր, որ «ստրուկը—իր է» և, հետևաբար, ստրկատէրը իրաւունք ունի վարուելու իր ստրուկի հետ, ինչպէս իր սեփական իրի (ծախելու, կիսելու, նետելու նրան եւն.), իսկ բոլշեւիկեան «օրէնքը» այդ յայտարարութիւնը չէր անում և սա-

կայն վարուած էր ուս ջաղաքացու հետ ճիշտ
այնպէս, ինչպէս վարուել են աւանդութեանց
գիրկն անցած ստրուկներն հետ :

Ռուսաստանի քաղաքացին լեզու ունէր,
առանց սակայն խօսելու իրաւունքի. նա շար-
ժուելու իր ընդունակութիւնը պահել էր, սա-
կայն զրկուել էր այդ ընդունակութիւնը օգ-
տագործելու լիազօրութիւններից. նա ապրում
էր առանց իր կեանքի տէրը լինելու. նա ի վի-
ճակի չէր որեւէ պարտականութիւն ժխտելու
և զուրկ էր նախարարութիւնից որևէ իրա-
ւունքի վրայ պնդելու. անուանապէս նա «ա-
զատ» և «հաւասար» անդամն էր «քնկերվա-
րական մեծ հանրապետութեան», իսկ վաստա-
րէն վերջին ստրուկը՝ ստրուկին բնորոշող բո-
լոր յատկանիշներով :

Եւ դարմանային այն էր, որ կային
մարդիկ, սկզբում՝ Ռուսաստանի մէջ, իսկ
մինչև այսօր էլ՝ արտասահմանում, որ, ան-
կարող լինելով ազատագրուել խօսքերի կա-
խարդող ուժից, դժուարանում էին տեսնել
այն, ինչ կայ, և տեսնել այնպէս, ինչպէս
կայ :

Նրանց ուղեղի մէջ տեղ էր գտել «երկ-
րային դրախտը», որ բուշեւիկները կերտել է-
ին դեկրետների աշխարհում, և գոլորշիացել
այն իրական դժոխքը, որ նրանք ստեղծել է-
ին տիեզերքի մէկ վեցերորդի վրայ. Նրանց
հասկացողութիւնների բնագաւառում ստեղծ-

ուել էր մի շփոթ, մի այլանդակ քառս, ըմ-
բռնումների մի կատարեալ աշտարակալինու-
թիւն, ճիշտ նման այն Բաբելոնին, որ խորհր-
դային Ռուսաստան անունն է կրում :

Մարդիկ հրաժարում էին իրական ստրու-
կին տեսնել. շարունակելով մնալ կախար-
դանքի այն հզօր ուժի տակ, որ ստեղծել էր
բուշեւիկեան խօսքերի տարափը. նրանց
համար իշխանութեան տէրը բանուորն էր, ո-
րովհետև այդ էր պատգամը հոկտեմբերեան
դաւաղրութեան նրանց աչքին աշխատաւորին
էր աշխատանքի պատուը, որովհետև անու-
խընթաց վերնաշրջումների կարգախօսը այդ
էր. նրանց հոգու տեսողութեան առջև զըծ-
ուած էր մի ընդարձակ երկիր, մի չքնաղ աշ-
խարհ, մի կատարեալ դրախտ, ուր օրն ի բուն
ջախջախում են անհաւասարութեան շղթա-
ները, ուր ազատութեան կոթողն է կերտում,
ուր աշխատանքի թովիչ ուժի տակ կառուց-
ւում է եղբայրութեան զեղեցիկ տաճարը :

Ահա այսքան մեծ էր խօսքերի ուժը :

Մի իւրօրինակ, կուռ և անյաղժահարելի
Ֆետիլիլով, ճիշտ նման այն Ֆետիլիլովին, որի
մասին խօսում է Մարքսն իր «Կապիտալ»-ին
մէջ, փորձելով պարզել «ապրանքների գների»
գաղտնիքը :

Այնտեղ, «Կապիտալ»-ի մէջ, տնտեսա-
կան մրցադաշտի վրայ պայքարող անհատը
անկարող է ազատագրուել «ապրանքային գը-

ների» միրաժից և տեսնել հասարակական յարաբերութիւնների այն իրական պատկերը, որ կայ մասնատիրական կարգերին յատուկ ապրանքի մէջ, իսկ այստեղ, բոլշեւիկեան դեկրէտներին անձնատուր քաղաքացին բացարձակապէս անուժ է ազատագրուել այդ նոյն դեկրետների բռնակալ լծից և ամուր կանգնած մնալ այն ճշմարիտ բմբուռումի վրայ, թէ խօսքը ատանց գործի—իրօք մեռեալ է:

1848 թուի յեղափոխութեան տապալումից յետոյ, երբ «կոմմունիստական միութեան» մի փոքրաթիւ խմբակ ձգտում էր, այնուամենայնիւ, անմիջապէս ու նորէն հրահրել, հակառակ Մարքսի ցանկութեան, յեղափոխութեան կըրակը, վերջինս, մեղադրուելով մէկտեղ «հակայեղափոխութեան մէջ, գրում էր իր «հետեւորդներին»:

«Ինչպէս գեմոկրատները ժողովուրդ խօսքից կուռք են ստեղծել իրենց համար, ճիշտ նոյնպէս նաև գուք սրբութիւն էք ստեղծել պրոլետարիատ խօսքից: Ինչպէս եւ գեմոկրատները, գուք յեղափոխական գործունէութիւնը փոխարինում էք յեղափոխական ոճարանութեամբ»: *

Ահա դարչելիօ, էն միօրինակ դարձած այս «յեղափոխական ոճարանութիւնն» է, որ անց-

*) Կ. Կառնցկիյ. — «Տերրորիզմ եւ Կոմունիզմ», 1919, էջ 95—96 (Ռուս. թրգմ.):

քերի ահաւորութեան անձնատուր զանգուածների աչքում եկաւ «գործ» զառնալու:

Ապագային միայն, երբ գիտութիւնը հնարաւոր կը լինի հարստացնել ընկերային հոգեբանութեան և ընկերային տրամաբանութեան կարեորագոյն զէնքերով, *) թերևս յաջողուի, ի թիւս այլ զաղանիքների, որ ցուցադրեց ռուսական ալեկոծութիւնը, պարզել նաև դեկրետների այս ինքնօրինակ հմայքը: Այսպիսով, հոկտեմբերեան խօսքերից ժառանգութիւն մնաց մի սարսափելի, անզուսպ ու արիւնքուշտ բռնապետութիւն, որպիսին մարդկային ողջ պատմութիւնը գրեթէ չզգիւի:

Այդ բռնապետութեան ամէնէն յատկանշական զիծը իշխանութեան այն մենատիրական տենչն էր, որ ցուցադրեց ռուս դաւադիրներին խմբակը:

*) Հասարակագիտութեան այս ճիւղերն անշուշտ հնարաւոր պիտի լինի մշակել այժ, հարուստ նիւթից յետոյ, որ տուին վերջին պատերազմներն ու յեղափոխութիւնները և մասնաւորաբար բոլշեւիկեան դաւադրութիւնն ու տիրապետութիւնը: Այս ուղղութեամբ բեղմնաւոր գործունէութեան է լրծուած եւրոպական հռչակ ունեցող ռուս դիտնականներից նաև անուանի հոգեբան Վ. Մ. Բեխտերեւի, որ, հիմնւելով ռուսական երկու յեղափոխութիւններից (1903 ի և 1917 ի) քաղած հարուստ փաստերի վրայ, 1921-ին Պետրոգրատում լոյս է ընծայել իր մէկ արժէքաւոր ուսումնասիրութիւնը (432 մեծադիր էջերից բաղկացած, «Կոլոս» ի հրատարակութեամբ) «Կոլլեկտիվ Ռեձլեկտիւգիա» խորագրով:

Այդ տենչն այնքան անզուսպ էր, այնքան վճռական ու որոշակի, որ անաբեկել էր, դեռ մինչև հոկտեմբեր, ուստի կեանքի մէջ գործող յեղափոխական հոսանքներից շատերն էին:

Իսկ հոկտեմբերից յետոյ եւ յատկապէս 1918-ի սկզբնական օրերից սկսած, նա դարձաւ քաղաքական մի կատարեալ ախտ, որից ըստ հրեոյթին, անկարող էին ազատագրուել մինչև իսկ ամէնէն զգաստ դաւաղիրներն անգամ:

Ռուսաստանը դարձաւ մի խուճր մարդկանց ժառանգական կալուածը, ուր միակ իշխանութիւնը կալուածատիրոջ քմահաճոյքն էր:

Պետական ողջ մեքենան, վերէն վար, երկրի մէկ ծայրից մինչև մյուսը յայտարարուեց իբրև օրուան կուսակցութեան անձեռնմխելի սեփականութիւնը և բոլշեւիկը յայտարարուեց իբրև այդ սեփականութեան միակ տէրը:

Մենատիրական այս տենչը, յատկապէս իշխանութեան հարցում, հոկտեմբերեան դաւաղիրների թերևս ամէնէն բնորոշ դիժն է:

Սակայն արտայայտութեան իր երկու ձևերով:

Բոլշեւիկ դաւաղիրը ձգտեց մենատիրօրէն ո՛չ միայն իշխանութեան տիրանալ, այլ և որոշեց ոչնչացնել բոլոր նրանց, որոնք երբևէ պատմական անցքերի որևէ իրազարձութեանց

ընթացքին, կարող են այդ իշխանութեան համար իբրև թեկնածու հանդիսանալ: *)

Բոլշեւիկմի ղեկավար կենտրոնը ձգտում էր ոչ միայն ապրող ու պայքարող ուժերը խորտակել, այլ և քայքայում ու ոչնչացնում էր բոլոր նրանց, որոնք երբ եւև կարող են ծիւտալ եւ հանդէս գալ իբրև մրցակցող ուժ՝ ներսից կամ դրսից:

*) Վրոնտաբիտի քաղաքական կուսակցութեան ներքում անբաժնելի է խիստ կենտրոնացում և զիսցիպլին, —ասում է Լենինը,—գիմազընլու համար այն բանին, որ պրոլետարիատի կազմակերպիչ դերը (իսկ այդ նրա գլխաւոր դերն է) տարուի ուղիղ, յաղթական կերպով: Վրոնտաբիտի գիկտատուրան նշանակում է արիւնստ ու անարիւն, բուռն ու խաղաղ, ռազմական ու տնտեսական, մանկավարժական ու վարչական յամառ կռիւ՝ ուղղուած էին հասարակութեան ուժերի և տրագիցիաների դէմ: **)

Իսկ Էհին հասարակութեան ուժերը էին բոլշեւիկներից դուրս գտնուած հասարակական բոլոր կենսունակ տարրերը, որոնց դէմ ռուսական բոլշեւիկը բաց արաւ արիւնստ ու լանաբիւն, բուռն ու «խաղաղ», ռազմական ու տնտեսական, «մանկավարժական» ու «վարչական» ամէն կարգի դաժան, անզուսպ ու անսանձ պայքար, ոչնչացնելու ու հիմքից արմատախիւ անելու համար երկրի բոլոր տարրերը քաղաքական ազդակները:

**) Ն. Լենին. — «Ձախուրեան» էրիխայական Յիւանդուրիւնը կոմունիզմի մէջ», Թիֆլիզ, 1921, էջ 33:

Մի ոճրածին ծրագիր, որին երբեք ու որեւէ բռնակալ մինչև այսօր թերեւ չէ ձգտած։ Իշխել մենատիրորէն և իշխանութիւնը յարատե դարձնելու համար՝ ոչնչացնել բոլոր իրական և կարծեցեալ հակաակորդներին թէ՛ այսօրուան ու թէ՛ ապագայի համար. — ահա այն ամէնէն բնորոշ գիծը, որ ցեղապրեցին իրենց իշխանութեան բովանդակ ընթացքին բոլշեւիկ դաւադիրները։

Այս պայքարն ունեցաւ իր տարբեր փուլերը, որոնք նոյնպէս յատկանշական են բոլշեւիզմի էութիւնը ըմբռնելու տեսակէտից։

Սկզբնական շրջանին պայքարն ընթացաւ «Ֆիզիքական ուղեւորումի» նշանաբանի տակ։ Տիրապետող իշխանութիւնն առանց վարանու մի ֆիզիքական մահ յայտարարեց իր բոլոր իրական և կարծեցեալ թշնամիներին և ամէնէն դաժան միջոցներով սկսեց գործադրել իր որոշումը։

Բացարձակապէս անթույլատրելի պիտի լինէր, բոլշեւիկեան դաժանութիւնները բժրունելու համար, յիշատակել Սուլայի, Իվան Ահարկուի, Ռոչլիւի, Կրոմվելի, Ռոբեսպիէրի կամ մէկ ուրիշի անունը։

Այստեղ նոր է—բարոյականը, նոր են—կրօնի միջոցները, նոր են նաև—հիմնա որումներն այն դաժանութեանց, որ այնքան հետևողականօրէն գործադրեցին ու գործադրում են ռուս բոլշեւիկները։

«Մեզ մօտ նոր բարոյական է... մեզ ամեն ինչ բոյաւորուած է», — յայտարարում էր բոլշեւիկեան պաշտօնաթերթերից «Կարմիր Թուրք»^{*)} կրկնելով անշուշտ խորհրդային մամուլի յանկերգը դարձած խօսքերը։

Ահա այս մարդիկ, որոնց «բարոյական»-ը նոր էր նրանով, որ բացարձակապէս զուրկ էր որեւէ բարոյականից, ասպարէզ իջան Ռուսաստանը «անսամման հնարաւորութեանց» հայրենիքը դարձնելու։

«Գործի քննութեան ժամանակ մի որոնէք տուեալներ և ապացոյցներ հաստատելու համար, որ մեզադրեալը գործով կամ խօսքով ասպարէզ է եկել խորհուրդների գէմ։

«Առաջին հարցը, որ զուք պիտի տաք մեզադրեալին, հետեւալը պիտի լինի —

— Ի՞նչ դասակարգի է պատկանում, ի՞նչ ծագում ունի, ի՞նչ գաստիարալութեան, կըրթութեան ու արհեստի տէր է։

«Այս հարցերի պատասխաններն ինքնին պիտի կանխորոշեն մեզադրեալի նակատագիրը»։

«Ահա ինչի մէջ է—իմաստն ու էութիւնը կարմիր տերրորի»^{**)}

Այսպէս էր հրահանգում իր ստորագաս մարմիններին համառուտական դահճապետներից մէկը, Լացիսը, զեռ 1918-ի հոկտեմբեր 1 ին, «Կարմիր Տերրոր»-ի մէջ։

^{*)} «Չեկա» (ռուս.), Բեռլին, 1922, էջ 15.
^{**)} Ibid., էջ 16.

Ուրեմն, մեղադրեալին զնդակի բռնելու համար բնաւ անհրաժեշտ չէր հաստատել, թէ նա գործով (զէթ մէկ հատ) կամ խօսքով (որեւէ) պայքարել է (երբեւէ) խորհրդային իշխանութեան դէմ:

Բաւական էր ազացուցել, որ նա «հակաբոլշեւիկեան» «ղամտիարակութեան», «կըրթութեան» կամ «արհեստի» տէր է և կամ «հակաբոլշեւիկեան» ընկերային ծագում ունի:

Տերրորն իսկապէս որ այդքան «կարմիր» գոյն երբեք չէ ունեցել:

Սակայն այս քրէական թոթովանքները սոսկ պատրուակներ էին քողարկելու համար այն արիւնընուշա պայքարը, որ սարսափի մատնուած բոլշեւիկ դաւադիրները տանում էին իրենց հակառակորդների դէմ, նրանց ֆիզիքապէս ոչնչացնելու հրէշածին նպատակներով:

Եւ ամէնէն զարհուրելին այն է, որ բոլշեւիկեան զնդանի մէջ շուտով տուած անհամար գոհների խոչորագոյն տոկոսը իսկապէս պատկանում էր Ռուսիոյ ժողովրդների խոնարհ խաւերին, որոնք իրենց թէ՛ «կրթութեամբ», թէ՛ «ղաստիարակութեամբ» ու թէ՛ զբաղմունքով բնաւ «բուրժուաներ» չէին:

Ապագային, երբ ազատութեան շողը ծաթի նաև Ռուսաստանի վրայ, անշուշտ հնարաւոր պիտի լինի քրտնաջան ուսումնասիրու-

թիւնների օգնութեամբ անհերքելիօրէն հաստատել, որ բոլշեւիկեան եաթազաններին զոհ գնացածների խոչորագոյն տոկոսը իրապէս պատկանում էր աշխատաւոր զիւղացիութեան, կամ սեփականագուրկ բանուորական խաւերին եւ կամ այդ խաւերից ծագում առած ու նըրանց շահերին ու իղէալներին նուիրուած յեղափոխական մտաւորականութեան:

Մեր խօսքերը հաստատելու համար թեւեւ աւելորդ չլինի այստեղ յիշատակել մէկ փաստ միայն, որ ինքնին ի վիճակի է բաւական լոյս սփռելու մեր ասածների վրայ:

Սրանից մօտ չորս տարի առաջ Ռուսաստանի կենտրոնական իշխանութիւնը լոյս ընծայեց մէկ ծաւալուն աշխատանք՝ Համառուսական Չեկային նուիրուած:

Աշխատանքի նպատակն էր ցոյց տալ, ինչպէս ասում էր զրքին կցուած նախաբանը, *) որ հոկտեմբերեան յեղափոխութիւնը փրկուել է ոչ միայն կարմիր բանակի, այլ եւ կարմիր Չեկայի «աւձնուէր» պայքարի շնորհիւ:

*) Այս նախաբանը, կեանքի մէկ հեգնալից խաղով, գրուած էր... Գողոս Մակինցեանի կողմից: «Չկան ասելի վատ եւ արգամատելիօրէն ասելի նից բախող իսկական-ուռս մարդիկ քան նըրանք, որոնք դուրս են գալիս օտարագրիներից», — իւր փրտակցական կեանքի վերջին օրերին ասել է Լէնինը բոլշեւիկներից ոմանց հասցէին, անշուշտ փրանալով, թէ ինչու է ասում:

Այս գրքի մէջ թուած է, դանձին յատուկ աննկարագրելի դատանութեամբ, մի մասն այն անհամար սպանդներից, որ բոլշեիկեան դաւադիրները կազմակերպել են Ռուսաստանի տարբեր մասերում, իրենց արիւնոտ իշխանութիւնը երկարատեւ դարձնելու համար:

Սակայն ամէնէն ուշագրաւն այն է, որ իւրաքանչիւր արձանագրուած սպանդի արգահատելի մանրամասնութիւնները տալով հանդերձ (դատաւորների անունները, դատաւճռի բովանդակութիւնը, գործադրութեան եղանակը ևլն.), լուծեան արուած է—բացառութեամբ մի քանի հանրածանօթ դէպքերի և անունների—գնդակահարուածների անունները՝ անհրաժեշտ մանրամասնութիւններով մէկտեղ.— արդեօք ո՞ւր ծնուած է, ի՞նչ գործի էր, որքան տարիք ունէր գնդակահարուածը,—այս ու նման հարցեր անպատասխան են մնացած:

Եւ հասկանալի է թէ ինչու:

Այս մանրամասնութիւնները պիտի գային անառակելիօրէն վկայելու, որ գնդակահարուածների խոչորագոյն տակոսը դտարիւն աշխատաւորներ են՝ յեղափոխական բիւրեղ անցեալով, ջինջ ու կաշառող նկարագրով, ինչպէս այդ յաջողուել է ցոյց տալ Եարոսլավլի կրկնակ նախնիրներին ենթարկուածների նկատմամբ:

Հարկադրաբար նիւթից շեղուելով կանգ առինք միմիայն այս մէկ հատիկ փտատի վը-

րայ, որպէսզի ցոյց տանք, որ տերրորը կարմիր էր ոչ թէ իր փոխարեւական, յեղափոխական առումով, այլ կարմիր էր իր մերկ և իսկական իմաստով:

Այս—պարզապէս քողազերծ ու ալլանդակ սպանութեանց մի ամբողջ հեղեղատ էր, ուղղուած բոլոր նրանց դէմ, որոնք դաւադիրների «սեղմ ընտանիքին» չէին պատկանում:

Մենք անկարող ենք մոռանալ այն տպաւորութիւնը, որ մեզ վրայ ձգեց խորհրդայնացման ենթարկուած Բագուից պատանմամբ Երևան ընկած բոլշեիկ թերթուկներից (հայ) մէկ պատանական համարը, դեռ մինչև Երևանի անկախութեան խորտակումը:

Միմտո՞ք իսա թերթուկը, որի անունն ու թիւը չի ճախտարար, մոռացել ենք, առաջինը միայն յօդուածի մէջ ընդգծած տողերով յայտնում էր, որ բոլշեիկեան իշխանութեան միակ նպատակը պիտի լինի, տիրանալով Հայաստանին, *) Ֆիզիքապես ունեցայնէլ Լ. Յ. Իսչևակցուրիւնը:

*) Այդ յօդուածի մէջ Հայաստանը . . «Աւստանի սպիտակ շուն» տիպոսն ունէր վաստակած: Յօդուածը պատկանում էր մեր իրականութեան դժբախտ ծնունդներից Աւիս Նուրիջանեանին: Հայաստանի առաջին Յեղկոմի նախագահ Ս. կասեանը, չափազանց ուշ անդրադառնալով իր դժբախտ թաթախուս ոճրագործի բարոյական թերի նկարագրին ու անսանձան տգիտութեան,

2963-2002
2555



Ա. Պ ր ա կ



Այս քրէականական բաղձանքը հայ բողոքեցիկները մտքի ստեղծագործութեան պտուղը չէր :

Կապկորէն ամէն ինչ ընդօրինակելով իշխող սուսից, նաև այս գաղափարը նրանք փոխ առին կենտրոնից, այն տարբերութեամբ միայն, որ, լինելով, ըստ Լէնինի սուբզիստողութեան, օտարազգի, ոճրածին բաղձանքների մէջ էլ աւելի դաժան ու այլանդակ էին :

Ճիշտ է նկատում Կառուցիկն .

«Այն բոլոր երևոյթների մէջ, որ հանդէս բերեց բողոքեցիկութիւնը, սկսելով սպազորուած խօսքի ամէն ազատութեան կատարեալ ոչընչացումից և վերջացնելով օրհնեղբուած դանդուածային գնդակահարութեանց սխտեմով,

իբ մէկ յօգուածի մէջ— «Ճախութեան հիւանդութիւնը մեղանում— ուղղուած նուրիջանեանի դէմ, ի միջի այլոց, զբոււմ է .

«Կոմունիստական կուսակցութիւնը պահանջում է ծրագրի և վարչապետութեան սկզբունքների ըմբռնումի հետ միասին անհատական մաքրութիւն ու շիտակութիւն և կուսակցութեան շահերի, պատուի գերադասութիւն սեփական մանր կսական շահերից, զձուձ հաշիւներից ու անձնական պատուից :

«Ձախութեան հիւանդութեամբ, հետևաբար եւ խախտութեամբ ու մահերեսային տրամաբանութեամբ պայմանաւորուած այդ մտածելակերպը, որ պարզ արտայայտութիւն է գաւել վերոյշեալ բանաձևի մէջ (Ա. Նուրիջանեանի մէկ բանաձևը, որի դէմ ուղղուած է յօգուածը. Վ. Ն.), աւելի խտացաւ միզանում մայիսին Ալէքսանդրապոլում և . Լայաստանի

անբրորն ամէնէն ապշեցուցիչն ու ամէնէն վանողն է, որ սուցանում է ամէնէն մեծ տեւութիւնը դէպի բողոքեցիկները» : *)

Կառուցիկն միայն մոռանում է անմիջապէս աւելացնել, որ ո՛չ թէ տերրոյլը, այլ պարզ սպանութիւնը միաժամանակ նաև ամէնէն յատկանշական զիժն է բողոքեցիկեան տիրապետութեան, ամէնէն հարազատ արտայայտութիւնը նրաներքին էութեան :

Տերրորը կարող է գոյութիւն ունենալ աւելի ընդարձակ չափերով, ինչպէս Ֆրանսա-

*) Վ. Կառուցիկի . — «Տերրորիզմ եւ Կոմունիզմ», էջ 204 :

«Ովտոլղացիայի առաջին շրջանում» **)

Սակայն թէ որքան սխալ է ըմբռնում Պ. Կասեանը կոմունիզմի էութիւնն ու նրա պատմական կոչումը, այդ ցոյց է տալիս հէնց այն մէկ հատիկ պարագան, որ «շիտակ», «մաքուր», «օշխիտակ» ու «օշմակերեսային» Պ. Պ. Կասեանը (նախորդ վարչապետ) այսօր մեկուսացրուած է իշխանութիւնից, իսկ անշիտակ, անմաքուր, խախտակ, մակերեսային և ըն. և ըն. ոճրագործ Նուրիջանեանը նորէն գտնոււմ է... իշխանութեան գլուխ :

Թերեւս նաև այս պարզամտութիւնն է պատճառը, որ իբ գաղափարակիցները խորհրդային Լայաստանի անդրանիկ կոմիսարապետին՝ Պ. Կասեանին՝ «սարկաւազ» տիտղոսն են տուել :

** «Նոր Աշխարհ» (բողոքեցիկեան ամսագիր), Թիֆլիս, թ. 2, էջ 18 :

կան առաջին կոմմունայի օրերին էր (1794ին), կամ աւելի զսպուած ձեերով, ինչպէս Փրանսուսական երկրորդ կոմմունայի ժամանակ էր (1871-ին), սակայն տերրորը յեղափոխական իշխանութիւնների ձեռքին երբեք պայքարի միակ զէնքը չէ եղած և նրա միակ նպատակը չէ ու չի կարող լինել երբեք բոլոր հակառակորդների—իրական և կարծեցեալ—ֆիզիքական բնաջնջումը: Երբ տերրորն ա՛յս չափերին է հասնում և ա՛յս բնոյթն է ստանում, նա արգէն դադարում է յեղափոխական պայքարի զէնք լինելուց և կրում է պարզապէս զազիր ու դարչելի սպանութեանց բնոյթ:

Անշուշտ բուլչելիները բնածին ոճրագործներ չէին, սիրահար սպանութիւնների:

Անժխտելի է մինչև իսկ, որ նրանց մէջ կային զէնքեր՝ յեղափոխական մաքուր անցեալով և մարդասէր խառնուածքով:

Այսպէս էին սակայն բուլչելիները, բայց ոչ—բուլչելիզմը:

Բուլչելիկեան կարգերը մի արիւնոտ ու քրէական մթնոլորտ ստեղծեցին Ռուսաստանում, իրենց յորձանուտի մէջ առնելով նաև բուլչելիկներին ու գրեթէ նրանց ամենքին անխտիր:

Մենատիրական տենչը իշխանութեան հարցում, պետական ղեկավարութեան փոխանցումը ազգաբնակչութեան մէկ աննշմարտովութիւն և այս տոկոսի սեղմումը որքան զէ-

պի վեր, այնքան աւելի շատ և այնքան աւելի սեղմ ձեռով,—ստեղծեցին մի հոգեբանութիւն, որ յատուկ է մահուան դատապարտուածներին:

Առատորէն հոսած անմեղ արիւնը մթազնեց նրանց դիտակցութիւնը, դարձրեց բուլչելիկին վախկոտ ու կասկածամիտ, մոլի ու անզիջող: փոխադարձ սարսափներով լի հնարաւոր պարտութեան հեռանկարները ղեկավարներին աւելի ուժգնորէն կապեցին իշխանութեան մեքենային և ինչ որ անասնական դաշնութեան հասնող դաժանութիւն պատուաստեցին ամենքին:

Պայքարի ընթացքում (ու թերևս պայքարողից անկախ) տերրորը դարձաւ կռուի սովորական զէնք:

Միանգամայն բնական ձևով տերրորի սովորոյթը դարձաւ բուլչելիկի երկրորդ բնաւորութիւնը,—սկզբնական շրջանին կրելով մասնակի բնոյթ և ուղղուած լինելով միայն որոշ հակառակորդների դէմ, յետագային նա դարձաւ պայքարի ընդհանրական զէնք և ուղղուեց ամենքի դէմ անխտիր:

Տերրորը փոխարինուեց սպանութեամբ:

Ընկերավարութիւնն ու յեղափոխութիւնը, իրենց յատուկ բարձր բարոյականով, պարտուեցին Ռուսաստանում, սակայն փրկուեց բուլչելիզմը՝ արեան ճապաղիքների և զանգուածային սպանութիւնների գնով:

Բոլշեւիկեան տիրապետութեան տակ հեծող Ռուսաստանը իր հակառակորդները դէմ մղած էւուում շունեցաւ, — հնչպէս տասնամեակներ առաջ, դեռ 1902-ին, նկատել էր Կառուցիին, — տնտեսական, քաղաքական և բարոյական աւելի զօրաւոր զէնքեր, քան մարդկային արիւնն է: *)

Պայքարը դատան բնոյթ ստացաւ թերեւս նաև այն պատճառով, որ յեղաշրջումը տեղի ունեցաւ տարիներ տեւող աննախընթաց պատերազմից յետոյ: Կռուի ճակատները վրայ գազանութեանց ընտելացած սովալլուկ բազմութիւնները տուն վերադարձան և ամբոխավար ղեկավարների գրգռիչ նշանաբանների տակ թե տալով իրենց անտնտեսական բնազդներին, քաղաքացիական կռուի ճակատները դարձրին դժոխք: Այս նոյն բնազդներն էին տիրապետողը նաև ճամբարիտ յեղափոխական կուսակցութիւնների դէմ մղուած պայքարի մէջ: Հրնարաւոր պիտի լինի արդեօք երբեք ճշտել զոհերի այն քանակը, որոնք իրենց շունչը տըւին բոլշեւիկեան զնդաններում: Զգիտենք: Հաւանորէն, ոչ: Որովհետև յաճախ բոլշեւիկեան դահիճը հնձել է առանց հետք, հաշիւ, որեւէ ցուցակ թողնելու: Սակայն այն քանակն իսկ, որ երբեւէ պիտի ճշտուի, անշուշտ սար-

*) Կ. Կառուցիյ, — «Իշխանութեան տանող ուղին», (Ռուս.) էջ 28, Բերլին, 1918:

սուռ պիտի բերի ամենքին:

Արդ, այսքան զոհերից և արիւնից յետոյ դաւադիրները հասա՞ն արդեօք իրենց նպատակին: Կարողացա՞ն արդեօք արմատախիլ աւնել բոլոր կենդանի սաղմերը և մահուան տիրապետութիւն ստեղծել ընդարձակածաւալ երկրի մէջ: Հարկաւ, ոչ: Մի աւելորդ անգամ բուսական փորձի վրայ հաստատուեց այն լաւէրժական ճշմարտութիւնը թէ՛ կենդանի գաղափարների դէմ անզօր են ամէնէն արիւնը-տուշտ բռնակալութիւններն ու ամէնէն դատան դահիճներն անգամ: Զոհացանքսով ծածկուեց ամբողջ երկիրն իր մէկ ծալրից միւսը, սակայն չմեռան այն գաղափարները, որոնց լոյսի տակ տասնամեակներով պայքարել են Ռուսիոյ ազգաբնակչութեան լաւագոյն սերունդները:

Այս զգաց սարսափի մատնուած իշխանաւորը և հարկադրուած գործադրութեան զրաւ պայքարի նոր զէնքեր:

Բոլշեւիկեան հաւատաքննական և լրտեսական մտքի ստեղծագործութեան առաջին արտայայտութիւնը եղաւ «յայտագրերի» այն հեղեղատը, որ սկսուեց Ռուսաստանի մէջ:

Տարբեր քաղաքական հոտանքների «վարիչ մարմինները», որոնք մինչ այդ այս կամ այն ձևի տակ պայքարել էին խորհրդային իշխանութեան դէմ, ասպարէզ եկան և յայտաքարեցին, որ իրենք վերջ են տալիս պայքա-

րին և իրենց ակնկալիքների իրականացումը սպասում են միայն և բացառաբար խորհրդային իշխանութիւնից :

Այս յայտագրերն ամբողջութեամբ վատագոյն տեսակի կեղծիք էին ի հարկէ : Ստում ու կեղծում էին թէ՛ յայտագրերի հեղինակները և թէ՛ բուլշեւիկ դաւադիրները , որոնց եաթ՝ դանի կախարդական ուժի տակ ծնունդ էին առնում սարսափահար անհատների այս նոր քարոզները : Այս անարգ երևոյթի մէջ միայն խօսքն էր փոխ առնուած ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնից : Այնտեղ , աւատապետական կարգերի դէմ ըմբոստացած յեղափոխական Ֆրանսան իր գեղեցիկ ընդվզումի օրերին ազատօրէն և ինքնաբերաբար երկնել էր «Մարդու և Քաղաքացու Յայտագիրը» , իր նոր կերան քարոզը , իսկ այստեղ , դահիճների անիծակուռ կարգերի տակ սարկական վիճակի մասնուած կամազօրկ և իրաւազօրկ անհատը , անկախ իր կամքից և հակառակ իր բովանդակ էութեան , կամակատարօրէն երկնում էր իր այլանդակ «Մտի և կեղծիքի Յայտագիրը» :

Անմահ Մոնթեսքիօն իր «Օրէնքներ» Ոգին» ուսումնասիրութեան մէջ , որ մօտ մէկ զարմարդկութեան պետական իմաստութեան աւետարանի հմայքը պահեց , թւում էր այն սկզբունքները , որոնք յատուկ են տարբեր պետական կարգերին և , բռնապետութեան մասին

խօսելով , հետեւեալ իմաստալից տողերն էր գրում .

«Բռնապետական կառավարութեան հիմը ցարսափն է : Բայց երկչոտի , տգէտի և բարոյապէս ընկճուած ժողովրդների համար շատ օրէնքներ հարկաւոր չեն :

«Ամէն բան դառնում է երկու կամ երեք դադափարների շուրջ , ուրիշ պէտք չկայ : Եթէ որեէ անասուն էք կրթում դուք , զգուշանում էք նրա դերը , դասի եղանակը փոփոխելուց , մէկ երկու օրոշ շարժու մներով միայն ազգում էք նրա ուղեղի վրայ : *)

«Բռնապետական կառավարութիւնների մէջ արժանապատուութեան զգացում ունեցող մարդիկ կարող են յեղափոխութիւններ կատարել , հետեւաբար պէտք է որ սարսափը ընկճի նրանց կորովը : Որեէ չափաւոր կառավարութիւն կարող է , որքան որ կամենայ և առանց որեէ վտանգի , իր զսպանակները թուլացնել . նա կը պահի իր գոյութիւնը չնորհիւ իր օրէնքների , Բայց երբ ոեէ բռնապետ դադարի գէթ մէկ վայրկեան իր բռունցքը չբարձրացնել , երբ նա անկարող լինի վայրկենապէս ջախջախել նրանց , որոնք իրեն դէմ գըլուխ են բարձրացնում , ահա այդ ժամանակ ամէն ինչ կորած է :

*) Montesquieu, — «De L'Esprit des Loïs» , Պարիզ , 1918 , էջ 68 :

«Հաւանարար այս մտքով էր, որ դատի-
ները միշտ պաշտպանեցին թէ՛ սուլթանը պար-
տական չէ խոստում պահել կամ երգում յար-
գել, երբ իր այդ խոստումը կարող է սահմա-
նափակել իր իշխանութիւնը:»^{*)}

«Բնապետական տէրութիւնների մէջ կա-
ռավարութեան բնոյթը ծայրայեղ հնազան-
դութիւն է պահանջում և երբ իշխանի կողքը
մի անգամ յայտնուեց արդէն, պէտք է հետե-
ւանք ունենայ միևնոյն անսխալականու-
թեամբ, ինչպէս նետուած մի գնդակ մի ու-
րիշ գնդակի վրայ կ'ունենայ իր անխուսափե-
լի հետեւանքը:

Այդ հրամանի դէմ «անզօր է որևէ բնա-
կան զգացում»^{**)}

Ահա այս սարսափն էր, յարատևօրէն օ-
գի մէջ բարձր բռնած բոլշևիկեան այս եա-
թաղանք, որ սպանութիւններով նպատակի
չհասած «համայնավար» դահձին մղեց զէպի
«յայտագրերի» գիւտը, իսկ ռուսական քաղա-
քական կեանքի յետամնացութիւնն էլ աւելի
գիւրացրեց նրանց ծնունդը:

^{*)} «Համայնավար» գատիները նոյնպէս այս տե-
սակէտն են պաշտպանում, գտնելով որ «խոստումն»
ու շերտումը» բարձրական նախապարտումները
են, որոնք գիւրութեամբ կարող են տրուել ու չկա-
տարուել, երբ այդ «խոստումը» որևէ չափով սահ-
մանափակում է իրենց սահմարձակութիւնը:

^{**)} Ibid., էջ 33—35.

Որպէսզի մեր ասած խօսքերի ճշմարտու-
թիւնն իր ամբողջ անաւորութեամբ ցցուի բն-
թերցողի տեսողութեան առջև, կանգ առնենք
մեզ ծանօթ իրականութեան մէջ ծնունդ ա-
ռած մի քանի յայտագրերի վրայ:

1923 թուի օգոստոս և սեպտեմբեր ա-
միսներն իրաւամբ կարելի է «յայտագրերի»
չրջան համարել Անդրկովկասի համար: Այդ
չրջանին խորհրդային մամուլն ամբողջապէս
զբաղուած էր այդ խնդրով: Օգոստոս 16 ին
Մոսկուան այս յայտագրերի մասին հրճուան-
քով հաղորդում էր Ռուսաստանի բոլոր կող-
մերը և յատկապէս արտասահմանի իր ներկա-
յացուցիչներին, որպէս մի «յաղթանակի», որ
խորհրդային իշխանութիւնը տարել է հակա-
խորհրդային հոսանքների վրայ:

Մէկը միւսի յետևից յայտագրեր էին հրա-
պարակել:

Ա. — Վրաց Ազգային Դեմոկրատ կուսակ-
ցութիւնը.

Բ. — Միացեալ Դեմոկրատ կուսակցութիւ-
նը, կրկին վրացական.

Գ. — Մենչեւիկ Սոցիալ Դեմոկրատական
կուսակցութիւնը, նոյնպէս վրացական.

Դ. — Ազրբէյջանի Մուսավլաթը և

Ե. — Հ. Յ. Դաշնակցութեան «Ալչխատա-
ւոր» կոչուած անդրկովկասեան խմբակ-
ցութիւնը.

Վրաց Ազգային Դեմոկրատ կուսակցու-

Թիւնն օգոստոսի առաջին կէսին հրապարակում է իր «գեկլարացիա»-ն, խիստ քննադատութեան ենթարկելով իր անցեալ գործունէութիւնը և խոստանալով «պաշտօնական լիկււրացիոյի ենթարկել, կուսակցական խորհրդաժողովի որոշումով, Գեմոկրատ կուսակցութիւնը» :

Յայտագիրը ստորագրել էին վրաց թունոտ ազգայնականներից այնպիսի մոլեռանդ հակաբոլշևիկներ, որպիսիք են՝ Գեթուա Ալեքսանդրովիչ, Լորդկիպանիդէ, Եասոն Միրաբովիչ, Իօսեֆ Մաչաւարեանի, Աէրգէյ Գանիլիս և մի շարք ուրիշները :

Ազգային Գեմոկրատ կուսակցութեան այս յայտագրին միացաւ Վրաստանի Միացեալ Գեմոկրատ կուսակցութիւնը և վրաց ժողովրդի համար վնասակար յայտարարեց բոլոր դադանի աշխատանքները և խոստացաւ վերջ տալ իր գոյութեան :

Այս յայտագրի տակ դրել էին իրենց ոտորագրութիւնները Ռուսաստանի և «համայնավարութեան» այնպիսի ուխտեալ հակառակորդներ, որպիսիք էին Ալեքսանդր Ախմետելի, Կոնստանդին Տիւպալազէ, Ա. Լորդկիպանիդէ :

Նոյն օգոստոսի սկզբներին Թիֆլիզում տեղի է ունենում վրացական կեանքի մէջ դիրք և ազդեցութիւն ունեցող մենչեւիկ սոցիալ-գեմոկրատիկների բազմամարդ խորհրդաժողովը, որի նպատակն էր յայտարարել ի

լուր աշխարհի, որ իրենք կողմնակից են խորհրդային իշխանութեան և թշնամի այն բոլոր տարրերին, որոնք կր համարձակուեն որևէ ձևով ընդդիմանալ խորհրդային իշխանութեան ամրացման Վրաստանի մէջ :

Յոյցն աւելի ցայտուն և ազդեցիկ դարձնելու համար՝ խորհրդային վարիչները 38 մենչեւիկների բանտարկութիւնից ազատել և Մեմբի բանտից բերել էին . . . խորհրդաժողով :

Այս խորհրդաժողովին մի ընդարձակ ճառով հանդէս է գալիս յայտնի «համայնավար» Օրժինիկիդէ, որ, խարազանելով մենչեւիկական կուսակցութեան բովանդակ անցեալը, յայտարարում է, ի միջի այլոց, թէ Վրաստանն երբեք անկախ չի եղել և լինել չէր կարող, ուստի քանի որ Վրաստանում պիտի լինեն աշխարհակալ որևէ պետութեան զօրաբանակները, ուստի նախընտրելի է, որ այդ բանակները լինեն ռուսական և կարմիր :

Ճիշտ այդ նոյն օրերին լոյս է տեսնում նոյն կուսակցութեան կենտ. Կոմիտէի թոռացիկը, որով յայտարարում է, թէ հանրաքուէով եթէ վրաց ժողովրդի գէթ մէկ-երրորդը թեր արտայայտուի խորհրդային իշխանութեան և ռուսական հովանաւորութեան, կուսակցութիւնը պարտաւորում է վերջ տալ իր գործունէութեան :

Օրժինիկիդէն այս թոռացիկը կարդում է խորհրդաժողովում, յայտարարելով, որ իրենք

այսպիսի դադարնի գրութիւններն զէմ գիտեն
երկաթով պայքարել :

Եւ ինչպէս հէքեաթիւների մէջ է պատա-
հում, նաև այս խորհրդածողովը «գալիս է»
այն եզրակացութեան, որ վրաց աշխատուոր
ժողովրդի բարգաւաճումը, անդորրութիւնն
ու շահը «պահանջում են», որ ուսական
կարմիր զորամասերը մնան Վրաստանում :

Չմոռանանք, որ Վրաստանի բոլոր քա-
ղաքական կուսակցութիւնների շարքում մեն-
չեւիկների կուսակցութիւնն արգարտէն ա-
մենաանհաշտն է համարում հանդէպ խորհրդ-
ային իշխանութեան, Այդ կուսակցութիւնը
կանգնած է Վրաստանի կատարեալ անկախու-
թեան տեսակէտի վրայ և պատրաստ է սատա-
նաների հետ անգամ գաշն կռելու, միայն թէ
կարողանայ ուսական զօրքերը միանգամ ընդ-
միշտ դուրս վանել իր երկրի սահմաններից :

Սակայն ամէնէն ուշագրաւն ու զաւելչ-
տականը անշուշտ թաթար «Մուսավվաթ»-ի
յայտագիրն է, որ մենք անկարծիւ ենք ամ-
բողջութեամբ այստեղ չիշատակել :

Ահա այդ յայտագիրը :

«Մենք, ստորև ստորագրող «Մուսավվաթ»-ի
կենտրոնական Կոմիտէի և նոյն կուսակցու-
թեան սոսկական անդամներս, նկատի ունե-
նալով, որ կատարելապէս գիտակցում ենք
թուրք ժողովրդների ղեկավար տարրի վրայ
ընկած պատասխանատուութիւնը, որ մենք

միշտ կողմնակից ենք եղել արևելեան ազգերի
ազատագրմանն Անտանտի աշխարհակալ սար-
կութիւնից, որը ձգտել է հիմքի մէջ խնդրել
ստորագաս ժողովրդների ազատագրական շար-
ժումները և շահագործել այդ ժողովրդներին
իր շահերի համար. նկատի ունենալով, որ մենք
միշտ կողմնակից ենք եղել առանձնապէս
թուրք ժողովրդների ազգային զարթօնքին,
ձգտելով ամէն տեսակ կեղեքումից զերծ ու
անկախ կեանքի, — ահա նկատի ունենալով այս
ամէնը՝ հարկ ենք համարում յայտարարել հե-
տեւալը .

«Մենք լիովին նկատի ունենք տիրող ընդ-
հանուր հանգամանքների դասաւորումը, մենք
առանձնապէս կարեորութիւն ենք տալիս Ա-
դրէյլանի զարգացմանն ու բարձրացմանը այն
պատմական դերի համար, որ պարտադրում է
նրան ազատագրել Արևելքը. այս առթիւ մենք
անհրաժեշտ ենք համարում յայտնել, որ Ռու-
սաստանի Կոմմունիստական կուսակցութեան
VII-րդ համագումարի և Անդրկովկասի Կենտ-
րոնական Գործադիր Կոմիտէի կողմից ազգա-
լին հարցի մասին ընդունուած որոշումները
այժմ աւելի իրական կերպարանք են տալիս
խորհրդային հանրապետութիւնների միութեան
մէջ ապրող ազգութիւնների հաւասարութեանը
և միւս կողմից՝ աւելի յուսատու և ամուր յե-
նակներ են ստեղծում Արևելքի ազատագը-
րական շարժման համար .

Հաշուի առնելով սոյն նկատումները, նաև այն, որ աշխատաւորութեան շահերի պաշտպան խորհրդային իշխանութիւնը ժողովրդական լայն խաւերը մասնակից է անում քաղաքական կեանքին, որ նա ստեղծեց կովկասեան ազգութիւնների միջև անխզելի հաշտութիւն, որի կողմնակիցներն ենք եղել միշտ, որ համաշխարհային պատերազմի ու նրան յաջորդող քաղաքացիական պատերազմի հետեանքով՝ Ազրբէյջանի ժողովրդական զանգուածները փիզիքապէս, տնտեսապէս ու կուլտուրապէս ընկճուեցին ու կարիք ունեն կրկարատե անգորութեան:

«Մենք կտրալանապէս դատապարտում ենք բոլոր նրանց, որոնք այս պատասխանատու ժամանակաշրջանում կռուի ճակատ կը ստեղծեն խորհրդային իշխանութեան դէմ անկախ այն բանից, թէ նրանք որտեղից են ստանում արդեօք կռուի իրենց նիւթական և բարոյական միջոցները:

«Մենք թուրք ազգի թշնամի ենք յայտարարում բոլոր այն տեղական ու արտաքին կազմակերպութիւնները, խմբակներն ու անհատները, որոնք կը արամադրուեն ունէ ձեռով կռուի հրաւիրել բազմութիւնները Ազրբէյջանի խորհրդային իշխանութեան դէմ:

«Այս բոլորի հետ միասին մենք մեր բոլոր ուժերը արամադրում ենք խորհրդային իշխանութեան նրա քաղաքական գծի վրայ աշ-

խատելու համար և որպէսզի միանգամ ընդմիշտ վերացնենք ամէն տեսակի կասկածներ ու անվստահութիւն՝ յայտարարում ենք, որ «Մուսավվաթ»-ի գաղանի կազմակերպութիւնը լուծուած է:

Կենտրոնական Կոմիտէի անդամներ՝

Արգույ Վեհար Մոհամէզ-զատէ, Սադըկ Կուլի-զադէ:

Անդամներ՝

Ալեքսեր Սալման-զադէ, Համիդ Ղաբան, Նովրուզ Ազա-զադէ, Սէյիդ Հիւսէյն Սադրկ, Նարիման Բէկ Նարիման Բէկլի, Բերբալայ Վելի Միքայէլ-զադէ, Զաֆար Զարթար-զադէ, Ռափիտ Վեքիլով, Ալի աղա Ալի-զադէ, Մահմեդ Սայիդ Ախունդ-զադէ, Ալի Աֆսեր Նազաֆ զադէ»:

Ով գէթ ամենահեռաւոր գաղափարն անգամ ունի «Մուսավվաթ»-ի անցեալ գործունէութեան, դաւանանքի, քաղաքական և ընկերային ձգտումների և երազների մասին. ով գիտէ, թէ Անդրկովկասի թաթար ժողովրդի ծոցից ելած այդ կալուածատիրական խաւը ինչ ատելութիւններ ունի ընդհանրապէս դէպի Ռուսաստանը և յատկապէս դէպի խորհրդային վարչաձևն ու համալնատիրական կարգերը. ով չի մոռացել այն entente cordiale-ը, որ կար «Մուսավվաթ»-ի և սուլթանական Թուրքիոյ միջև և ով ղեռ բանականութիւն ունի ըմբռնելու համար, որ այդ կապը այսօր շատ աւել-

լի ամուր է, քան երբեք,—նա չի կարող չընդունել, որ աւելի մեծ հեղնանք քան այս յայտագիրն է, «Մուսավվաթ»-ի կողմից Մուսկուլայի հասցէին չէր կարող լինել:

Մակայն եզրակացութիւնների յանդելուց առաջ յայտնենք նաև, որ Դաշնակցութեան «Աշխատաւոր» կոչուած խմբակի յայտագիրը, որ առաջին անգամ լոյս տեսաւ «Խորհրդային Հայաստան» և «Զարիա Վաստակ» թերթերում միևնոյն օրը, Յուլիս 31-ին, արտասպուռեց խորհրդային գրեթէ բոլոր թերթերի կողմից, որոնք մի շարք խմբագրականներ ու յօդուածներ—վայելուչ ու անվայելուչ—նըւիրնցին նրան, մի այլանդակ աղմուկ ստեղծելով նրա շուրջը:

Մոսկուան Օգոստոսի 16-ին անթելով հազորդում էր աշխարհին «Աշխատաւոր» Դաշնակցութեան քայլը և յայտագրի համառօտ բովանդակութիւնը:

Այս յայտագիրը ստորագրել էին՝ Դրօ, Կ. Ղազազեան, Բ. Թովչեան, Մ. Մակարեան, Ա. Նալչաջեան, Տ. Աւետիսեան և Ա. Իսրայէլեան, բոլորն էլ, բացառութեամբ Դրօի, Վրօստանի նախկին Կենտրոնական Կոմիտէի անդամներ:

Արդ, լոկ այն փաստը, որ անդրկովկասեան տարբեր ժողովրդների տարբեր քաղաքական հոսանքները, տարիների լուսթիւնից յետոյ, ճիշտ միևնոյն օրերին ու գրեթէ նոյնա-

նման խօսքերով բնորոշում էին Ռուսաստանի քաղաքական վիճակը և ճշտում իրենց դիրքը զէպի խորհրդային իշխանութիւնը,—այս մէկ հատիկ փաստը արդեօք չէ՞ր գալիս ասելու, որ Դանիոյ մէջ, Իրօք, մի բան հոտած է:

Անշուշտ, այո:

Աւելին:

Այս մէկ հատիկ փաստը գալիս էր վկայելու, որ խորհրդաւոր դանձապետութեան մէջ մէկից աւելի բան կայ հոտած:

Անկասկած է, որ այս յայտագրերի տարափը ստեղծեց միայն մէկ ձեռք, որ երկարած էր Մոսկուայից զէպի Ռուսաստանի խորքերն ու նրա եզրային երկրները:

Երկու կարծիք չի կարող լինել այն մասին, որ այս այլանդակ ստեղծագործութեան բուն հեղինակը ինքը խորհրդային իշխանութիւնն էր:

Սպանութիւններով նա չկարողացաւ արժատախիլ անել ստորադաս ժողովրդների ու նրանց ծոցում շնչող քաղաքական հոսանքների գոյութիւնը և ահա նա փորձեց դիմել մի միջոցի, որ միայն գարշանք կարող է սնուցանել արժանապատուութեան զգացում ունեցող ամէն մէկ անհատի մէջ:

Դեռ Չեկայի զնդանների մէջ արեան հետքերը չէրցած, բռնակալները անմիջապէս բարձրացրին իրենց բռունցքը՝ նոր հարուած տալու համար իրենց հալածող ստուերներին:

ինչո՞ւ սակայն :

«Երբ որեւէ բռնապետ դադարի գէթ մի վայրկեան իր բռունցքը բարձրացնելուց, — կրկնենք անմահ Մօնթեսկիօի խօսքերը, — երբ նա անկարող լինի ջախջախել նրանց, որոնք իր դէմ գլուխ են բարձրացնում, ահա այդ ժամանակ ամէն ինչ կորած է» :

Այս գրեւէ դաւադիր Մոսկուան և այդ պատճառով իր կողմից մշտապէս սեղմած է պահում բոլոր նրանց գլխին, որոնք իրեն հետ չեն :

Սակայն հարց կարող է ծագել, թէ ինչո՞ւ արդեօք նրանք, որոնք համամիտ չէին Մոսկուայի թելադրանքներին, երգեցին այն երգը (անչուշտ աննշան շտկումներով) : Ինչ նրանց բերնի մէջ էր դրել երկրի իշխանաւորը :

Միամիտ պիտի լինել այս հարցը տալու համար :

«Բռնապետական տէրութիւնների մէջ կառավարութեան բնոյթը ծայրայեղ հնազանդութիւն է պահանջում, — վերստին կրկնենք նոյն Մօնթեսկիօի խօսքերը, — և երբ իշխանի կամքը մէկ անգամ յայտնուեց արդէն, պէտք է հետեանք ունենայ միեւնոյն անսխալակա՛նութեամբ, ինչպէս նետուած մի գնդակ մի ուրիշ գնդակի վրայ կ'ունենայ իր անխուսափելի հետեանքը :

«Այդ հրամանի դէմ անզօր է որեւէ բնա-

կան զգացում» :

Անզօր է, մանաւանդ, երբ կեղծիքը, անզուսպ ու անսանձ դաժանութեան շնորհիւ, այլ ևս յեղափոխական առաքինութիւն է դառնում : Անչուշտ կը գտնուեն անհատներ, որոնց էութիւնը կ'ըմբոստանայ ժամանակաւոր կեղծիքի դէմ իսկ, թէկուզ կատարուած յանուն ամէնէն նուիրական սկզբունքների, սակայն հերոսի մահով մեռնելու զգացումը ամենքին չէ տրուած : Սովորականը, բռնապետական երկրների մէջ, փոխադարձ կեղծիքն է : որին դիմում են նոյնպիսի յաջողութեամբ վերէն ու վարէն : Բռնակալը չի ասում այն, ինչ մտածում է, իսկ հպատակը ասում է այն, ինչ չի մտածում և ահա այսպէս փոխն ի փոխ ու միաժամանակ կեղծելով՝ երկուսն էլ առիթ են որոնում փոխադարձաբար մահացու հարուած տալու միմեանց :

Ով գիտէ, չգիտէ քաղաքական պայքարի այս զազիր ու անարգ ձևի մասին, յամենայն պէպս բոլոր նրանք, որոնք ապրել ու շնչել են սուլթանների, ցարերի ու բոլշևիկ բռնաւորների արնահոտ լծի տակ, նրանք աւելի քան գիտեն այս խօսքերի մերկ ու դառն ճշմարտութիւնը : Ընդհատ այդ պատճառով գիտէ այս ճշմարտութիւնը բովանդակ հայ ժողովուրդը, որին, ճակատագրի մէկ դաժան խաղով, վիճակուեց իր ազատագրական պայքարը տանել այս վատթարագոյն բռնապետու-

Թեանց սահմանների մէջ :

Սակայն գոհացա՞ւ արդեօք օրուան քմա-
հած իշխանաւորը այն յայտագրերով, որ ի՛ր
ստեղծագործութիւններն էին, իջեցրե՞ց ար-
դեօք իր բռունցքը, որ այնքան ամուր բռնած
ունէր իր հանգիստը խռովող ուժերի գլխին :
Հաճոյք զգա՞ց արդեօք այն անարգ պարից,
որ իր նուագի տակ բռնեցին հակագիր քաղա-
քական հոսանքները :

Անշուշտ ո՛չ :

Եթէ զգար, ապա վերջ կը տար այն պայ-
քարին, որ սկիզբն առաւ հոկտեմբերեան ա-
ռաշին օրերից և առանց դադարի շարունակ-
ուեց մինչև մեր օրերը :

Նա չէր կարող գոհանալ, որովհետև այդ գէժ
կը լինէր իր էութեան, իր պատմական կոչու-
մին, բռնակալութեան բնոյթին ու նկարա-
գրին :

Յայտագրերի արձագանգը զեռ չլաած, նա
նոր գիւտ արաւ և երկրի մէկ ծայրից միւսը
ողողեց «զաւանափոխներով» ու նրանց հա-
մագումարներով :

Սկիզբը նորէն մայր երկրի մէջ դրուեց ու
միայն յետագային, որոշ ժամանակ յետոյ,
չարժման ծփանքները հասան մինչև Ռուսիոյ
եզրերն ու նաև մինչև... Հայաստան :

Պիտի խոստովանել, որ այս երեւոյթը ու-
րոշ չափով նոր էր իր տեսակով :

Զանգուածօրէն հանդէս պիտի գային խոր-

հրդային կարգերի ուխտեալ հակառակորդները
և, ինչպէս պահու՞մ էին իրենց սպանիական
Ֆերդինանդ VII-րդ թագաւորի ժամանակ
սարսափահար բազմութիւնները, ճիշտ նոյնը
պիտի անէին նաև նրանք :

Այստեղ, ստի ու կեղծիքի այս ալլանդակ
մթնոլորտում, Չեկայի սրած ժանիքների սար-
սափ բերող ուժի տակ, զաւանափոխ ստրուկ-
ները, ճիշտ այն պատճառով, որ անկախ ի-
րենց կամքից և հակառակ իրենց ցանկութեան
«փոխել» էին իրենց դաւանանքը, պիտի կրկ-
նէին այն, ինչ սպանիական ժողովուրդն ի
պատասխան սահմանադրութեան ոչնչացման,
բացազանչում էր բռնաւորի երեսին, — *vivan*
Ies cadenas, — կեցցե՛ն շղթաները :

Կեցցե՛ն շղթաները, որովհետև այդ շրջ-
թաները ստրկական վիճակի դատապարտուած
առաւ «քաղաքացուն» ազատում էին ազատօ-
րէն ու անկախաբար խորհելու որևէ պարտա-
կանութիւնից և պարտադրում նրան նոյնու-
թեամբ կրկնելու այն, ինչ «հոգատար» իշխա-
նութիւնն էր հրահանգում :

Այս, իրօք, «մի քիչ» չափազանց նոր ե-
րեւոյթ էր տապալւած ցարերի հայրենիքում,
ուր մինչև «համայնավար» կարգերի տիրա-
պետութիւնը, աւանդական միապետների իշ-
խանութեան տակ, կար անկախ և անկաշկանդ
մամուլ, խօսքի ու խղճի ազատութիւն, ժո-
ղովների ու հաւաքոյթների իրաւունք, ուր

անհատը մարդ էր բայց երբեք ստրուկ :

Ահա այս ստրուկները որոշուած ձեով , որոշուած ժամանակին պիտի գային որոշուած տեղն ու նոյնութեամբ կրկնէին նախապէս ճշտուած խօսքերը :

Նրանք գարշելի լուտանք պիտի թափէին իրենց հին դաւանանքի ու հին կուսքերի հասցէին , պիտի անարդէին իրենց բովանդակ անցեալը , կրքեմնի զաղափարներն ու խտելանքը պիտի թափէին փողոց և իրրև նեխած ու հոտած աղբ աւելին միանգամայն ու նետէին մէկ կողմ :

Նրանք միաժամանակ գովքը պիտի անէին օրուան իշխանաւորի , քծնանքի ու շոյանքի ամէնէն նուրբ խօսքերով ողջունէին նրա ծրնունդը , արեւատութիւն , փառք ու յաղթանակ մաղթէին նրան և իրենց հպատակութեան ու կոյր հաւատարմութեան զգացմունքները յայտնէին :

Եւ , վերջապէս , դաւանափոխները պրուելուց առաջ պիտի յայտնէին , որ իրենք լուծում , « լիկւիդացիայի » են ենթարկում իրենց նախկին կուսակցութիւնը , ուստի արտասահմանեան այն բոլոր կազմակերպութիւնները , որոնք այս կամ այն ձևի տակ դեռ պահում են իրենց գոյութիւնը և հանդէս բերում որեւէ դործունէութիւն , այդ կազմակերպութիւններն ապրելու իրաւունք այլևս չունեն :

XV-րդ դարի վենետիկեան օրէնսդիր մար-

մնի նշանաւոր երկրորդ պալատն էր այս , « Non Sinceris »-ն , « Ողջ-Անկեղծների » հաւաքօյթը , ուր , ինչպէս յայտնի է , գոժերը ժողովուում էին միայն չորս պարտականութիւն կատարելու , այն է՝ լուռ լսելու կառավարութեան օրինազօնքը , լուռ քուէարկելու , ապա ծափահարելու և վերջն էլ լուռ ու անխօս իրենց սնները մեկնելու :

Մենք սխալուեցինք սակայն :

Վենետիկեան « Ողջ-Անկեղծները » գոնէ պարտաւոր չէին խօսելու , իսկ այստեղ , բոլշեւիկեան արնահոտ իշխանութեան տակ , դաւանափոխը , ուստական non sinceris-ն , ոչ միայն պիտի լռէր , քուէարկէր ու ծափահարէր , այլ և պիտի թուրթակէր իր բերանը դրած ամէն լուտանք ու հայհոյանք . . . ի՛ր իսկ հասցէին :

Մեր նկարագրութիւնը թերևս ամէնէն ազատ պատկերն անգամ չի տալիս այն անարգ երևոյթի , որ « դաւանափոխների համագումարներ » անունն է կրում :

Բոնաւորը անհատին հասցնում է պատուարժանութեան զգացումից այսքան զուրկ մէկ աստիճանի , առանց իրենից գարշանք ըզգալու :

Դաւանափոխը , տուրք տալով ինքնագոյութեան իր կոյր ու յամառ բնազդին , կատարում է այն , ինչ իրեն հրահանգուում է :

Ահա ամբողջ էութիւնն այն համագումարների , որոնք հեղեղեցին Ռուսաստանը , նրա մէկ ծայրից միւսը :

Բաղաքական այս նոր հարկատուութեան ենթարկուեցին Ռուսաստանի գրեթէ բոլոր յեղափոխական հասանքները, սոցիալ յեղափոխականներից ու սոցիալ դեմոկրատներից սկսած:

Հոգեբանօրէն նորէ՛ն հասկանալի է միանգամայն այս խայտառակ խեղկատակութիւնների ամբողջ իմաստը:

«Ինչպէս բռնապետական կառավարութեան սկզբունքը սարսափն է, ասում է Մոնթեսկիօն, այդպէս էլ նրա նպատակը հանդարտութիւնն է, բայց ոչ խաղաղութիւնը, այլ նման այն քաղաքների լուսքեան, որոնք մօտ են թշնամու կողմից գրաւելուն»: *)

Ահա այս «հանդարտութիւնն» է, որ դէպքից-դէպք ստուգում ու վաւերացնում է մահուան դատապարտւած բռնաւորը, լուռ ու անխօս երկրում:

Նրան հարկաւոր է համոզուել, որ ռուսական մեծ ովկիանոսը «անդորր» է. նրան անհրաժեշտ են նորանոր փաստեր համոզուելու համար, որ փոթորկի վախ այլևս չկայ. նրա խօթարուած հաւատքին պէտք են յարատեւներարկումներ, կառչած մնալու համար այն միակ յոյսին, թէ իրենից դուրս ողջ երկրի մէջ կենդանութիւն այլևս չկայ:

Սերիչը դաւանանք պիտի փոխի, որպէսզի ինքն իր դաւանանքին հաւատարիմ մնայ:

*) Ibid., էջ 70.

մահուան նշաններ պէտք է ցոյց տան իրենից դուրս դանուած ուժերը, որպէսզի ինքն իր մէջ ուժ և կենդանութիւն զգայ ապրելու:

Այս համագումարների ծայրը, ինչպէս ասացինք, մի օր հասաւ մինչև Հայաստան, սակայն աւելի այլանդակ չափերով:

Չեկայի և այսպէս կոչուած Գոլխորիւրօի (քաղաքական լրտեսական բաժանմունք) գործակալները մի աննախընթաց արշաւանք կաղմակերպեցին դէպի Հայաստանի քաղաքները, նրա բոլոր գիւղերն ու աւանները՝ դաւանափոխ դաշնակցականներ որսալու համար:

Ըստ նախագծուած ծրագրի, գործակալները պիտի կաղմէին դաւանափոխների ցանկերը, ապա այդ դաւանափոխները յատուկ յայտագրերով հանդէս պիտի գային խորհրդային մամուլում՝ միշտ նոյն խօսքերը թոթովելու համար և վերջն էլ, այս նախապատրաստական աշխատանքները կատարելուց յետոյ, «լիկւիդացիոն» համագումարներ տեղի պիտի ունենալին՝ գիւղերում, գաւառակներում, գաւառներում, քաղաքներում ու նահանգներում, իսկ ամենից վերջը՝ նաև Հայաստանում ու համայն Անդրկովկասում՝ միանգամ ընդմիջաւ դաւանափոխների ձեռքերով Դաշնակցութիւնը գերեզման դնելու համար:

Այս նպատակի համար խորհրդային իշխանութիւնն անդրանիկ դաւանափոխներից ըստեղծել էր մի «Նախաձեռնող Բիւրօ», շէնք ու

դրամ տրամադրել նրան, իրաւունք տուել նաև իր օրդանն ունենալու՝ «Լրաբեր» անու- նով: *) Միաժամանակ խորհրդային մամուլը լալսօրէն բաց էր արել իր էջերը դաւանա- փոխների «գրական» արտադրութեանց համար, օրը-օրին ամբողջ սիւնակներ յատկացնելով անհատական կամ խմբական զղջմեադրերին:

Այդ ամբողջ «գրականութեան» մէջ մի- աշն խորագրերն էին տարբեր, որովհետև նը- բանց մէջ իշատակութիւն կար վայրերի մա- սին, իսկ գծից վար եղած ամբողջ արտադր- ութիւնը նոյն ընդմիջումն էր՝ յար և նման խօսքերով:

Նոյեմբեր 20-ին, մօտ 250 «պատգամա-ւորների» մասնակցութեամբ, Երևանի պետա-

*) Ահա «Հայաստանի նախկին Դաշնակ-ցականների Համագումար Նախա ձեռնող Բիւ-րօի» կազմը. Աղ. Բակունց, Սիմ. Փոյեան, Արտ. Պետրոսեան, Նիկ. Կրմենանց, Սալ. Դանիէլեան, Միհ. Սերգանեան, Դրիգ. Բա-լասարեգեան, Յովհ. Միրզայեան, Պօղ. Տէր Պօղոսեան, Համ. Եպիսկոպոսեան, Արտեմ Թումեան, Նիկ. Դորունց, Միս. Հայրապետեան, Վահ. Ամբարեան, Ռուբ. Տոնեան եւ Կամ. Տէր. Մարտիրոսեան—մարզիկ, որոնց ոչ ներս գալը և ոչ էլ դուրս գնալը Դաշնակցու-թիւնը չիմացաւ, եւ մտածել թէ սրանք... զե-կավարներն են դեռ:

կան թատրոնի շէնքում, Չեկայի և Պոլիտքիւ-րօի հսկողութեան տակ բացուում է Համագու-մարը, ուր «Նախաձեռնող Բիւրօն» ներկայա- նում է 3247 դաւանափոխների յայտագրերով:

Այս քանակի մէջ չեն մտնում մինչեւ նոյեմբեր 20-ը ալլեայլ պատճառներով որոշ շրջաններից դեռ չտպացուած յայտագրերի դաւանափոխները, ինչպէս, օր., Ալէքսանդ-րացոյն է, Ղարաքիլիսան, Իրիլջանի շրջանը, Ղամարլուն, Լոռին, Ջալալ-Օղլին, Բաշ-գեառնին և Դարալագեագը:

Անհատական կամ խմբական յայտագրերով հեռացող «փոքրաքանակ ապրանքից» բացի, հեռացել են, ըստ տեղեկատուութեան, նաև «անյայտագիր» ճանաչարհով. այս—Դաշնակ-ցութեան զանգուածն է, որ աճուրդի է հան-ւում բազմ ութիւններով, «մեծաքանակ ապ-րանքի» ձևով:

Անգրկովկասեան խորհրդային իշխանու-թեան կենտրոնական օրդան «Ջարիա Վօստո-կա»-ն (Արևելքի Արշալոյս) իր մէկ առաջնոր-դող յօդուածի մէջ հրճուալից շեշտով յայտա-բարում էր, որ ճարճատում է Դաշնակցու-թեան հնամեայ շէնքը, որից ամէն օր հազար-ներով հեռանում են նախկին դաշնակցական-ները, Չմոտանանք աւելացնել, որ «դաւա-նափոխութեան» համաճարակը սկսուում է Հա-յաստանում 1923-ի օգոստոսի վերջերը և մօտ

չորս ամիս յետոյ, նոյն թուի նոյեմբեր 20-ին, մի ամբողջ շարան տեղական համագումարներէից յետոյ, առժամապէս վերջանում... դաւանափոխների «Համահայաստանեան» անդրանիկ համագումարով: *)

Այդ համագումարը մի քանի օրուայ «բեղուն աշխատանքից» յետոյ վերջացնում է իր աշխատանքները, Չեկայի խմբագրութեամբ և ուուսերէն լեզուով ընդունելով մի բանաձև, որով ընդմիջա գերեզման է գրուում Հ. Յ. Գալստիակցութիւնը:

Յայտագրերի բնոյթի և դաւանափոխներէի հոգեբանութեան հետ ծանօթանալու համար թերևս աւելորդ չլինի մի երկու նմոյշներ յիշատակել այդ գրութիւններից:

*) Նոյն երեանի մէջ կուսակցական ընդհանուր համագումարից մօտ կրկու ամիս յետոյ տեղի է ունեցել դաշնակցական երիտասարդների — միշտ նախկին — համագումարը, ու թեուն պատգամաւորներէ մասնակցութեամբ: Լերթը այժմ պատկանում է Լայստանի նախկին դաշնակցական տիկիներին և օրիորդներին: Լաւատանք, որ այդ հերթը, մասուկներին և ծերերին չպիտի համնի:

Մէկ դիտողութիւն «Լասակաւոր» նախկին գալստիակցականներից մէկը, վիճակագրական բուսումնասիրութեան ենթարկելով «Լամահայաստանեան» անդրանիկ համագումարի շուրջ խմբուած ընախկին դաշնակցականների տարիքը, իր մէկ յօդուածի մէջ, ի միջի այլոց, գրում էր. **)

**) Տե՛ս «Լրաբեր», թ. 1, 1923, Երեւան:

Ահա, օրինակ, մի կտոր այն խմբագրականից, որ «Նախաձեռնող Բիւրօ»-ն իր օրգանի միջոցով ուղղել է անդրանիկ համագումարին:

«Հայաստանի համագումարը որոշել է իր կարմիր ուղին, որ անցնելու է աշխատաւորութեան կրած արիւնոտ կատաստրօֆայի յանցաւորների՝ Անտանտի մեծ ու փոքր դիւանագէտների ու նրանց օտքերի առաջ սողացող անձանց դիակների վրայով դէպի կոմունիզմ:

«(Ողջոյն նոր ուղուն, ողջոյն Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարին»:

Ահա մի փոքրիկ կտոր նաև անմիջական «Կոչ»-ից:

«Դաշնակցութիւնից հեռացողների մաքսիմալիստ ընկնում է 30-ից մինչև 40: Հասկանալի է թէ ինչու է ընկնում տոկոսը 40-ից յետոյ, մինչև 40-ը, յատկապէս մինչև 20 և 25 այդ տոկոսը շատ է թոյլ, որովհետև Դաշնակցութիւնը հետամուտ չէր երիտասարդ զւարդիայի կազմակերպման և ապա այդ զւարդիան Դաշնակցութիւնից վաղուց է հեռացել եւ իբր աւելի յեղափոխական տարր լուծուել մարտական պայքարի տարի շարքերում»:

Սակայն ու թեուն պատգամաւորներին մասնակցութեամբ տեղի ունեցող «Նախկին դաշնակցական» երիտասարդութեան համագումարը գալիս է վիայելու, որ մեր աշատ ճիշդ թափօղ յօդուածագրի թէ... «վիճակագրական թւերն» են բարձրեւելեան» և թէ... յոսետես եզրակացութիւնները:

«Միայն հրաժարուելով հին մտայնութիւնից և կանգնելով կոմունիստական կուսակցութեան պրատֆորմայի վրայ, դաշնակցական մասան կարող է լինել այս երկրում ոչ իբր վարձու պաշտօնեաների կամ քաղաքականութիւնից հեռու մի զանգուած, այլ Հայաստանի կոմունիստական կուսակցութեան ակտիւ յեղափոխականների մի բանակ, որ երկրի վերաշինումից զատ դիմադրելու է նոցա, որոնք կը փորձեն մեր երկրի խաղաղութիւնը վրդովել զրսից կամ ներսից:

Կեցցէ՛ երրորդ Ռեսերնացիոնալը:

Կեցցէ՛ համաշխարհային Յեղափոխութիւնը»:

Ահա նաև համագումարի կողմից ընդունուած բանաձևի վերջին կտորը.

«Ի հետևումն վերոյիշեալի (այսինքն՝ բանաձևի բացատրական մասի. Վ. Ն.) Համագումարը որոշում է. —

1. — Կիկվիդացիայի ենթարկել Հ. Յ. Դաշնակցութեան բոլոր կազմակերպութիւնները Հայաստանում:

2. — Հաստատել գաւառական և շրջանային կոնֆերենցիաների որոշումները դաշնակցական տեղական կազմակերպութիւնների լիկվիդացիայի մասին:

3. — Առաջարկել Ադրբէջանի, Վրաստանի և Խորհրդային Հանրապետութիւնների սահմաններում, այլ և Տաճկաստանի ու գաղու-

թանայ միւս վայրերում գտնուող դաշնակցական աշխատաւոր շարքերին մեր օրինակով լուծել դաշնակցական կազմակերպութիւնները և ջրել զեկավար մարմինները տեղերում:

4. — Անվաւեր յայտարարել Դաշնակցութեան բարձր կուսակցական մարմինների կողմից արուած կուսակցական մանդատներն ու յանձնարարութիւնները:

5. — Վճռական կերպով արգիւել Հ. Յ. Դաշնակցութեան արտասահմանում գտնուող բարձրագոյն մարմիններին հրապարակ գալ կամ յայտարարութիւններ անել Հայաստանի կազմակերպութիւնների անունից:

6. — Սոյն որոշումներն ուղարկել Բ. Խնտերնացիոնայի միջազգային բիւրոյին ի գիտութիւն:

7. — Ինել մեր բովանդակ ուժերը միջազգային բանուոր-գիւղացիական յեղափոխութեան և նրա մարտական շտաբ Գ. Կոմինտէրնի արամադրութեան տակ և լինել պատրաստ նրա ղեկավարութեամբ պաշտպանելու հոկտեմբերեան մեծ յեղափոխութիւնը և նրա ծնունդ Խորհրդային իշխանութեան նուսճումները բոլոր հակայեղափոխական ուժերից և վտանգներից, լինեն նրանք զրսից թէ ներսից»:

*) Տե՛ս «գիտական գրական» «Արեգ»-ի (գաւանափոխ), թ. 2, 1924:

Ահա այն մտքերը, որ աննշան տարբերութիւններով կրկնում են գրեթէ բոլոր յայտագրերը, կոչերն ու բանաձևերը:

Սակայն հաւատով, որևէ արժէք տալիս են արդեօք բոլշեւիկներն իրենց այս աշխարհակ խեղկատակութիւններին:

Նրանք ընդունում են արդեօք, որ բոլոր «դաւանափոխները» իրապէս դաւանափոխներ են և որ նրանց ձեռքով խկապէս որ Հ. Յ. Դաշնակցութիւնը գերեզման է դրուել:

Ոչ, չեն հաւատում:

Ընդունենք, վերջապէս, որ բոլշեւիկները բնաւ այսքան միամիտ ու յիմար մարդիկ չեն:

Ահա, օրինակ, թէ ինչ իմաստալից դաս է տալիս բոլշեւիկեան «խելօքիկ» Լայնոլլան, Պ. Աշոտ Յովհաննիսեանը, մեր յիմարակորոյս հակառակորդներին (ու նաև, ի հարկէ, «խելօքից» պատուհասուած ռամկավարներին):

«Մենք այսօր շարքային դաշնակցականներից վճռական խօսք ենք սպասում. — յայտարարում է մեր դժբախտ երկրի հաւատաքննիչն իր մէկ դասախօսութեան մէջ, կարգացած Ալէքսանդրապոլում, — նրանք պէտք է ցոյց տան, որ անկեղծօրէն նրաժարուած են իրենց նիւն ծրագրից, այլ ոչ բէ՛ն անակախօրէն. (Տեսանք, որ նրանք ձեւականօրէն չէ, որ հրաժարուած են. վ. Ն.):»

Շարքային դաշնակցականները պէտք է վճռական խօսք ասեն այն մասին, որ Դաշ-

նակցութիւնն իր տխմար քաղաքականութեամբ հայ ժողովրդին հասցրեց ծայրայեղ թշուառութեան և այսօր նա այլևս հետու պիտի լինի ընդմիշտ քաղաքական հորիզոնից. (Ինչ վերը տեսանք, որ ասել են. վ. Ն.):

Նրանցից ամէն մէկը պէտք է պարզի իր գիրքը և ցոյց տայ, թէ արդեօք ինքը յեղափոխութեան հե՞տ է թէ յեղափոխութեան դէմ. (Տեսանք, որ ամենքն էլ «պարզել» են և ամենքն էլ «յեղափոխութեան» հետ են. վ. Ն.):

«Այն գեկլարացիները, որ տուում են մեր թերթերում և որոնց մէջ նրանք խորհրդային իշխանութեան հասցէին գովեստներ են կարդում — այդ գեկլարացիները մեզ պետք է համոզեն, որ շարքային դաշնակցականներն իրօք անկեղծ խաչ են քաշում Դաշնակցութեան վրայ... (Տեսանք, որ խաչ են քաշում. վ. Ն.):»

«Այստեղ պէտք է շեշտել, որ կոմմունիստական կուսակցութիւնն ու խորհրդային իշխանութիւնը դաշնակցականներից չէ, որ պէտք է ատտեստացիա ստանան: Բանն այդ գովեստների մէջ չէ, այլ նրանում, որ շարքային դաշնակցականները կենդանի օրինակով մեզ համոզեն, որ իրենք խորհրդային Հայաստանի անկեղծ են նախանձախնդիր քաղաքացիներ են և այսուհետեւ, ինչպէս էլ լինի, ոչ մի դէպքում խցընդուտ չեն դառնայ նրա շինարարական և ստեղծագործական մեծ ճանապար-

հին» .^{*)} (Ասացին , որ խոչընդոտ չեն դառնայ . Վ . Ն .) :

Ճիշտ այս մտքերն են արտայայտուած — թերևս աւելի ձկուսն և զգոյշ խօսքերով — նաև մնացած վարիչների գրութիւնների մէջ , «դաւանափոխներն» հասցէին :

Ուշադրութեամբ կարդացէք մեր յիշատակած կտորը ու մանաւանդ մեր ընդգծած տողերը , ըմբռնելու համար այն խոր ողբերգութիւնը , որ թագնուած է այդ տողերի տակ :

Որովհետև ով գէթ նուազագոյն չափով ընտելացած է բոլշեւիկների եզովբոսեան լեզուին , նրան այս տողերը շատ բան պիտի առան :

Խորամուխ եղէք Չեկայի գաղափարախօսի , այդ տիպիկ Լայեոլլօյի արծարծած մըտքերի մէջ և դուք այնտեղ պիտի գտնէք հարուածուած հաւատի մի ամբողջ թունալից աշխարհ :

Յայտագրերի նոգեւոր հայրն ու հակադաւնակցական պայքարի եռանդուն քարոզիչը չի հաւատում այն լուտանքին , որ իր թելադրբանքի տակ դաւանափոխներն ամէն օր թաթում են իրենց նին դաւանանքի հասցէին :

*) «Բանասր» , 1923 , թ . 76 , Ալէքսանդրապոլ :

Նա նրանցից պահանջում է «անկեղծութեան» այնպիսի օրինակներ , որոնք ի վիճակի են իրեն հաստատապէս «համոզելու» , որ դաւանափոխներն իրօք «նախանձախնդիր են» արնահոտ բռնակալութեան :

Նա միայն չի ասում , թէ «անկեղծութեան» ի՞նչ օրինակներ պիտի տալ արդեօք , որ Չեկան իրօք «համոզուի» , թէ դաւանափոխի մէկ ոտքը այլևս դուրսը չէ :

Ու չի ասում ոչ այն պատճառով , որ գիտէ ու լուում է , այլ լուում է , որովհետև չըզիտէ թէ ինչ է իր պահանջածը :

Ստրուկի կամակատարութեան նա չի հաւատում , նա սարսափում է նրա հնարաւոր ըմբոստացումից , նա բնազդօրէն զգում է , որ իր շուրջը զաւարդութեան մի ընդարձակ ոտտայն է հիւսւում , ուր վաղն իսկ առաջին թելքաչողն այսօրուան առաջին ծափ զարկողը պիտի լինի անշուշտ :

Նա գիտէ , որ քաղաքական սադիզմը կարող է մարդը սպանել մէկի , միւսի՝ մէջ . սակայն անկարող է բազմութիւնները տեսականորէն արժանապատուութեան զգացումից զուրկ անասունների հօտի վերածել :

Նա լսում է սարսափահար զանգուածների այս այլանդակ գովքը , առանց ամենափոքրիկ ջերմութիւնն իսկ զգալու իր հոգում . Ո-

րովհետև նա չի հաւատում այն վերամկրտութեան, որ կատարուել է Չեկոյի գաղափարական աւազանում:

Ահա ձիշտ այստեղ պիտի որոնել խորհրդային դահճապետութեան հոգեկան գալարումները բանալին:

Նա շարունակ հալածանքի էր զէնքերը պիտի փոփոխի՝ առանց երբեւէ հանգիստ առնելու, ու շարունակ շրջանքի ու քծնանքի նորանոր ապացոյցներ պիտի պահանջի՝ առանց դէթ մէկին հաւատ ու արժէք ընծայելու:

Որովհետև միակ միջոցը, համոզումը միակ աղբււրը, հաւատի միակ զէնքը—ազատութիւնը՝ նա անկարող է իր ճիրաններում գալարուող բազմութիւններին տալ. իսկ հաւատալ անազատ ստրուկին—այդ նոյնպէս վեր է նրա մարդկային կարողութիւնից:

Ահա այն փակուղին, որից մեր օրերի միջնադարեան հաւատաքննիչները անկարող են ելք գծել:

1921-ին հայերէն մէկ ծաւալուն ժողովածուի մէջ, հրատարակուած Թիֆլիս, բոլշեւիկները քաղաքական պոստիկներ էին անուանում այն դաշնակցականներին, որոնք բոլշեւիկներից հրահարանգուած յատուկ յայտադրով ողջունում էին... խորհրդային իշխանութեան հաստատուածը Անդրկովկասում և անարզանք

թափում... Դաշնակցութեան հասցէին: *)

Եւ միթէ՞ զժուար է հասկանալ այն խորունկ ողբերգութիւնը, որ կատարուած է դիւանար բռնակալի և ստրկական վիճակի գոտապարտուած անհատի հոգում:

Առարկայօրէն այս ձևի պայքարի ձախողանքի պատճառներն աւելի քան պարզ են, քնական ու հասկանալի:

Մեր մրտքն աւելի պարզած ինելու համար բերենք մէկ հատուած միայն Մարքսի այն մտքերից, որ ուղղուած էին ցնորատես ընկերվարականների դէմ:

*) Ինչպէս յայտնի է, Վրաստանի նախկին կենտրոնական կոմիտէն (եւ Սոցիալատարբ կոչուած խմբակը) բոլշեւիկեան բռնապետութեան տակ երկու անգամ հանդէս եկաւ երկու առանձին յայտագրերով: Դրանցից մէկի մասին քիչ վերը խօսեցինք: Իսկ մյուսը նայն կենտրոնական կոմիտէն բաց է թողել 1920-ին, բոլշեւիկեան իշխանութեան հաստատման սկզբնական օրերին Վրաստանում: Այս յայտագրի մէջ պարսականների անարգական խօսքեր կան Դաշնակցութեան Բիւրօի հասցէին, մի բան, որ բացակայում է նայն խմբակի երեք տարի վերջ [զբառատանալուց յետոյ] հրատարակած յայտագրի մէջ:

Եւ ուշադրաւ այն է, որ առաջին յայտագրի առիթով, ուր անարգանք կար Դաշնակցութեան Գերագոյն Մարմնի հասցէին, «քաղաքական պոստիկներ» անուանեցին յայտագրի հեղինակներին, իսկ երկրորդի մէջ, ուր այդ անարգանքը չկար, այդպիսի ամփոփան էլ... չտուին:

Այս՝ նաև ու մի՛նչև իսկ բոլշեւիկները գիտեն իրենց կետևողական ու հաստատամիտ հակառակորդներին յարգել:

«Ուտոպիստներն ասում էին . —
«Մարդիկ ծնունդ են պայմաններին և դաս-
տիրակութեան .

«Որպէսզի մարդկանց լաւ դարձնենք,
մենք ցանկանում ենք զէպի լաւը փոխել այն
պայմանները, որոնց տակ մարդիկ ապրում և
դաստիրակում են .

«Բայց, — առարկում էր Մարքսը, — զուք
ինքներդ ծնունդ էք նոյն պայմանների, այդ
պատճառով էլ զուք ոչ մի արամաբանական
իրաւունք չունէք հասարակութիւնից ձեզ վեր
դասելու .

«Երկուսից մէկը .

«Կամ *) այն պայմանները, որոնց ծնունդ-
դըն են ձեր բարենորոգչական ձգտումները,
իրենցից ներկայացնում են մի ինչ որ բացա-
ռիկ բան .

«Այդ զէպըում զուք ոչ մի հիմունք չուն-
նէք յուսալու, որ մնացած հասարակութիւնը,
որ զարգանում է բոլորովին այլ պայմաններին
տակ, երբեք համակիր կը լինի ձեր այդ ձգտ-
ումներին .

«Կամ քե այն պայմանները, որոնց գո-
յութեամբ կեանքի են կոչուել ձեր ձգտում-
ները, և ոչ մի բացառիկ բան իրենցից չեն
ներկայացնում, այլ ազդում են, բացի ձեզ-

*) Այս և յետագայի բոլոր ընդգծումները
բնագրինն են .

նից և ամբողջ մնացած հասարակութեան, կամ
թէ, ծայրայեղ զէպըում, նրա մեծագոյն մա-
սի վրայ .

«Այդ զէպըում զուք լիակատար հիմք
ունէք յուսալու, որ այդ հասարակութիւնը
կամ նրա այդ մասն ունեն կամ պիտի ունեն-
նան այն ձգտումները, ինչ զուք ունէք .

«Առաջին զէպըում ձեր ենթակայական
(սուբեկտիվ) ձգտումները հակասում են հա-
սարակական զարգացման առարկայական (օբ-
եկտիվ) ընթացքին .

«Երկրորդ զէպըում նրանք զուգադիպ-
ւում են նրա հետ և այդ պատճառով ձեռք
են բերում այն բոլոր ուժը, ինչ յատուկ է
նրան .

«Եւ որովհետե յաղթութիւնը՝ ձեր ձգտ-
ումներին իրագործումը, — հնարաւոր է մի-
այն երկրորդ զէպըում, այդու պարզ է, որ
երբ զուք ցանկանում էք ձեզ և ուրիշներին
համոզել նրանում, որ ձեզ անպայման յաղ-
թութիւն է սպասում և ոչ պարտութիւն,
զուք պէտք է ապացուցէք, որ ձեր ենթա-
կայական ձգտումները չեն հակասում հասա-
րակական զարգացման առարկայական ըն-
թացքին . այլ զուգադիպւում են նրա հետ եւ
հանդիսանում են իբրև նրա արտայայտու-
թիւնը» . *)

*) Պլեխանով — «Պաշտպանողականից յարձա-
կողականի» (ռուս.), Մոսկուա, 1908, էջ 604 .

Այն հին ու երանելի օրերին . երբ բուլն-
բիկներից ոմանք դեռ մարքսիստ էին , նրանք
դատում ու զործում էին համաձայն այն կուռ-
թելադրանքի , որ քիչ վերը բերինք :

Եւ որովհետեւ Մարքսն իր մտածողու-
թեան այս կէտի մէջ անխոցելի է մնացել մին-
չև այսօր , ուստի թող ներուի մեզ չակերտ-
ները բանալ և մի քիչ աւելի կանգ առնել մեր
յիշատակած կտորի մէջ արծարծուած մտքերի
վրայ :

Ի՞նչ է Մարքսի ասածը :

Յուրիէ , Օուէն ու Սէն Սիմոն , ուսուցիա-
կան ընկերվարութեան այդ փայլուն ներկա-
յացողացիները , ինչպէս յայտնի է , համոզ-
ուած էին , թէ իրենց վարդապետութեան ի-
րագործման լաւագոյն ճանապարհը մարդկանց
դաստիարակութիւնն է :

Նրանք գտնում էին , որ բաւական է
հանրութեան բացատրել տիրող հասարակա-
կարգի ցաւալի կողմերն ու յստակ և վառ
խօսքերով գծել հնարաւոր ապագայի փայլուն
պատկերը , որպէսզի մարդիկ , ազդուած այդ
խօսքերից , ձեռք ձեռքի ու համերաշխաբար
յարդարեն դէպի այդ ապագան տանող ուղի-
ները :

Ընկերվարութեան գիտական դպրոցը ,
Կարլ Մարքսի և Ֆրեդրիխ էնգէլսի գլխաւո-
րութեամբ , եկաւ ջուր ցանելու այս վառ
մտքերի վրայ և ապացուցելու , որ ընկերվա-

րութեան յաղթանակը պայմանաւորուած է
բոլորովին այլ ազդակներով , որոնք , բղխե-
լով հին հասարակակարգից , նոր հասարակար-
գի համար մանկաբարձուհու դեր են կատարում :

Մարքսի խօսքերը մահացու հարուածներ
էին ցնորածին ընկերվարութեան հասցէին :

Աշխատաւոր մարդկութեան կարող վար-
պեալը յստակօրէն զատորոշում էր սուբեկտիվ
և օբեկտիվ , ենթակայական ու առարկայա-
կան երկու տարբեր աշխարհների ուրոյն սահ-
մանները և գծում այն հունը , որով կարող է
գնալ ու պիտի գնայ հանրային կեանքը :

Առանց վարանելու նա մէկ կողով էր
նետում բոլոր ժամանակների ու բոլոր վար-
դապետութեանց երազատես առաքելներին ,
որոնք փորձ կ'անեն ուղեղով դեգերել երկըն-
քում , առանց ոտքերով իրական երկրի վրայ
մնալու :

Թերևս չգիտէր գիտական ընկերվարու-
թեան մեծանուն վարպետը , որ ամէնէն վառ ,
ամէնէն անհող ու միաժամանակ ամէնէն ա-
նարգ ու դաժան երազատեսները ծնունդ պիտի
առնեն ի՞ր իսկ դպրոցում , խօսեն ու զործեն
ի՞ր իսկ անունից և ամէն քայլափոխի ու ա-
մէն ինչ աւերեն՝ շարունակ Մարքսը վկայ
բերելով :

Թերևս չգիտէր :

Սակայն այլևս փաստ է այսօր , որ մարդ-
կային պատմութիւնն անըմբռնելի երազների

այնքան մեծ ու հարուստ հատոր շունեցաւ երբեք, որպիսին ունի այսօր, 1917-ից ի վեր. շնորհիւ բուլղերիկեան կարգերի տիրապետութեան Ռուսաստանում:

Մարքսի դպրոցից սերուած մէկ ամբողջ քաղաքական հոսանք լըջօրէն երբեք չմտահոգուեց այն խնդիրներով, որ ուսուցիչն իբրև պատգամ թողել էր «իբ» աշակերտներին:

Եւ իսկապէս:

Եթէ բուլղերիկեան դաւանանքը մի այնպիսի արտառոց ուսմամբ է, որ մի խումբ դաւադիրներից բացի այլևս ոչ ոքի հարազատ լինել չի կարող, ապա ի զուր է յուսալ թէ Չեկայի դաժան միջոցներով ու այլանդակ յայտագրերով կարելի է այդ ուսմունքը մի ամբողջ ժողովրդի սեփականութիւնը դարձնել, որը շնչում ու ապրում է հասարակական ուժերի զարգացման բոլորովին այլ պայմանների տակ:

Կամ թէ, ընդհակառակը, եթէ բուլղերիկեան վարդապետութիւնը բղխում է մեր կեանքի պայմաններից և հարազատ է մեր իրականութեան, ուստի պիտի յուսալ, որ այդ դաւանանքը սեփականութիւնը պիտի դառնալ մեր ժողովրդի բացարձակ մեծամասնութեան և, հետևաբար, հարկ չկայ այլևս ներոնեան դաժանութեամբ այդ ժողովուրդը յանուն այդ դաւանանքի նահատակելու:

Առաջին դէպքում իշխող խմբակի ենթա-

կայական ձգտումները հակասած կը լինեն հասարակական զարգացման առարկայական ընթացքին և այդ իսկ պատճառով դատապարտուած վերջնական պարտութեան:

Իսկ երկրորդ դէպքում՝ նրանք կը բղխեն նրանից և այդ պատճառով ի վերջոյ կը վաստակեն յաղթութեան գափնին:

Ահա իրականութեան ճշմարիտ ըմբռնումի այն միակ ընթացքը, որ գծել ու ժառանգութիւն է թողել Մարքսը, սակայն ոչ բուլղերիկներին:

Որովհետև եթէ բուլղերիկները Մարքսի ճշմարիտ հետևորդները լինէին, ապա մերժելով կը մերժէին սարսափահար դաւանափոխների այլանդակ յայտագրերն ու Չեկայի զնգանը և կը նախընտրէին պայքարի այնպիսի ձևեր, որոնք ծնունդ են առնում իրենց գաղափարների աշխարհից և մէկ ներդաշնակ միութիւն կազմում իրականութեան պայմանների հետ:

Եւ որովհետև հարցի ամէնէն հետաքրքրական և ամէնէն ծանրակշիռ կողմը ճիշտ ա՛յս ուղղութեամբ է թեքուած, ուստի աւելի հանգամանօրէն էլ կանգ առնենք ա՛յս կէտերի վրայ:

Մեր հիմնական դիտողութիւնը բացարձակապէս անխոցելի է, բոլոր պայմանների տակ: Որովհետև յաւիտենական ճշմարտութիւն է, թէ որ և է գաղափար թաղելու համար պիտի թաղել բո՛ւ՛ գաղափարը և ոչ թէ այդ գա-

զափարը կրողին :

Հալածանքը մարդկանց դէմ, նրանց նը-
կատմամբ գործադրած բռնութիւնները, աք-
սորը, բանտն ու տարագրութիւնները, գնդա-
կըն ու կառավնատը և այս ամէնը մէկտեղ
բացարձակապէս անզօր են գաղափարապաշտ-
ների դէմ, եթէ նրանց դաւանած գաղափար-
ները ճշմարիտ են, կենսունակ ու ապրող,
արդար ու իրաւացի :

Այս, գլխատել պէտք է գաղափարը և ոչ
թէ այդ գաղափարը կրողին, կամ, յոսեգոյն
պարագային, նախ՝ գաղափարը պէտք է նը-
մայքից զրկել և ապա՝ նրա ուխտաւորին ձեռ-
նամուխ լինել :

Հակառակ պարագային անիմաստ են ու
ապարդիւն այն բոլոր դաժանութիւնները, ո-
րոնք գործադրուած են այս կամ այն հոսանքի
դէմ :

Աւելին :

Եթէ պայքարի մէջ հալածուած դաւա-
նանքը յաղթանակել է ու հարուածն ուղղը-
ւել է այդ դաւանանքը դաւանողի դէմ, ապա
նախապէս համոզուած կարելի է լինել, որ իւ-
րաքանչիւր նոր հալածանք, իւրաքանչիւր նոր
զոհ կրկնակ ուժ ու հմայք պիտի տայ թէ՛
զոհին ու թէ՛ նրա դաւանած ուխտին :

Մեր այս խօսքերը մէկն են մարդկային
պատմութեան այն յաւերժական ճշմարտու-
թիւններից, որոնք բացառութիւն չգրտեն, ու

րոնք երբեք վրիպում չեն տուած :

Գլխատիւր գաղափա՛րը և նրա կրողը գըլ-
խատուած է արդէն. անկարօղ են ասալինն ա-
նել, ուրեմն երկրորդն անպատու աշխատանք
է այլևս, նրանով մի զբաղուի՛ր. մի զբաղ-
ուի՛ր, որովհետեւ ուսերից թռած մէկ գլխի
փոխարէն համաճարակի ձեռով հազարները կը
բուսնեն հազարաւորների ուսերի վրայ :

Արդ, քանի որ ա՛յս է միակ ճշմարիտ և իւ-
րական ուղին, ապա ինչո՞ւ պայքար չտանել
Դաշնակցութեան, նրա քարոզած գաղափար-
ների, հայ մեծ քաղաքական կազմակերպու-
թեան որդեգրած դաւանանքի դէմ և տանել
պայքար՝ դաշնակցականների դէմ :

Ինչո՞ւ դաշնակցականներին հալածել, փո-
խանակ Դաշնակցութիւնը հալածելու :

Ինչո՞ւ «լիկւիդացիայի» չենթարկել Դաշ-
նակցութեան ուխտը (փոյթ չէ՝ թէ ի՛նչ մի-
ջոցներով և ո՞ւմ ձեռքերով) և «լիկւիդացիա-
յի» ենթարկել դաշնակցականներին (այն էլ . .
«նախկին դաշնակցականներ») . . . այնքան ու-
շաղած «յայտագրերով» : *)

*) Ի դէպ, քերականական տարրական դասագրքը-
քելից մենք գիտենք, որ անցեալը մեռած ժամա-
նակ է, իսկ ներկան՝ սպրող, արդ, ինչպէ՞ս կարող է
նախկին դաշնակցականը, որ անցեալի մէջ—նե-
ռաւոր կամ մօտաւոր—իր դաշնակցական շունչը ար-
դէն փչել է, «լիկւիդացիայի» ասաքելութեամբ յա-
րութիւն առնել և գերեզման դնել . . . ալլլուդ դաշ-
նակցականին :

Չեկան այն հանելուկը արդեօք չէ՞ր կարող լուծել :

Պարզ է թէ ինչու: Անկարելի է հաշտուել այն մտքի հետ, թէ բոլշևիկ բռնաւորներն այսօրան տարրական ճշմարտութիւնները չգիտեն: Նրանք անվերջ թուղթ ու մելան ըսպառեցին Դաշնակցութեան դէմ. վայելուչ ու անվայել խօսքերի հեղեղատով քամիներին տըւին Դաշնակցութեան գաղափարական շէնքը, սակայն և այնպէս այդ շէնքը մնաց կանգուն ու անվիճար, իր փարթեամբ ու հոյակապ կեցուածքով:

Եւ ամէնէն ուշագրաւը, ամէնէն նշանակալիցն ու կարեւորը այն է, որ «լիւիւրդացիայի» են ենթարկուում դաշնակցականները ճիշտ այն ժամանակ, երբ գաղափարական պայքարի մէջ վերջնականապէս յաղթանակում է Դաշնակցութիւնը և կատարեալ սնանկութեան գատապարտուում բոլշևիզմը:

1890-ական թուականների սկզբին խմորուեց հայ մեծ քաղաքական կաղմակերպութիւնը և չանցած երկու-երեք տարի, 1892-ին, ունեցաւ իր առաջին համագումարը, իսկ 1894-ին լոյս ընծայեց իր անդրամիկ ծրագիրը:

Դաշնակցութիւնն ասպարէզ իջաւ, որդեգրելով իբրև դաւանանք ընկերվարական մեծ ուսմունքը:

Նա յարեց ընկերվարութեան այն դպրոցին, որի ամէնէն կարկառուն ներկայացուցիչներն էին ուսական սոցիալիստ-յեղափո-

խականներ:

Այդ աշխատանքը Դաշնակցութիւնը կատարեց ո՛չ միանգամից և որդեգրեց իր հասարակական նոր դաւանանքը ո՛չ նոյնութեամբ:

Որոշ սրբագրութիւններ—յաճախ կարեւոր—եղան անշուշտ այդ դաւանանքի մէջ, որի առանցքը միշտ կար ու միշտ էլ է Հայ Դատը մնաց:

Սակայն իր գլխաւոր գծերով, իր սկզբունքային հիմնաւորմամբ նա մնաց նոյնը, ինչ սոցիալիստ-յեղափոխականների դաւանագիրն էր:

Եւ որովհետեւ ընկերվարական կուսակցութիւնները տարբերոււմ էին ոչ թէ իրենց վերջնական նպատակով (որ ամենքի մօտ նոյնն էր), այլ այն ուղիներով, որոնք այդ կուսակցութիւնները տանում են դէպի ընկերվարութիւն, ուստի նաև Դաշնակցութիւնը նեւուեց պայքարի այն բուռն, կրքոտ ու ընդարձակ ասպարէզի մէջ, որ բազուած էր այդ ուղիների շուրջ:

Այդ պայքարի գլուխը կեցած էին երկու գլխաւոր հոսանքներ, իրենց շուրջը համախմբելով ընկերվարական մտքի գրեթէ բոլոր երանգներն ու թևերը, բազառութեամբ անիշխանականների:

Այդ հոսանքներից երկրորդը սոցիալ-դեմոկրատներն էին:

Եւ այն պայքարը, ինչ տեղի էր ունե-

նում ռուսական երկու մեծ հասանքների միջև, ճիշտ նոյն պայքարն աւելի մեծ կամ փոքր չափերով (նայած տեղին ու պայմաններին) ընթանում էր մեր իրականութեան մէջ, հայ ընկերվարական մտքի երկու գլխաւոր թեւերի միջև՝ Դաշնակցութեան և սոցիալ-դեմոկրատիայի:

Այս պայքարի մէջ հայ սոցիալ-դեմոկրատներին յաճախ օգնութեան էին գալիս իրենց ռուս գաղափարակիցները, իսկ գրեթէ միշտ նրանք պայքարի իրենց գէնքերն առնում էին ռուսական մարքսիզմի գլխական շտեմարանից:

Արդ, որո՞նք էին տարբերութեան կէտերը և ինչի՞ շուրջն էր պայքարը:

Դաշնակցութեան քաղաքական դաւանանքը կառուցուած էր չորս գլխաւոր սիւների վրայ:

Դաշնակցութիւնն ընկերվարութեան ձրգտում էր հասնել:

Ա. — Ազգային հարցի սահմանում՝ լուծելով հայ քաղաքական դատը և կազմակերպելով աղքատներին իր շարքերը:

Բ. — Քաղաքական պահանջների շրջանում՝ կիրառելով պետական ապակենտրոն սկզբունքը:

Գ. — Հողային հարցում՝ իւրացնելով հողերի համայնացման տեսակէտը և

Դ. — Պատմափիլիսոփայական ըմբռնումների բնազաւառում՝ ընդունելով անհատի դերը պատմութեան մէջ, ռուսի կիրառելով նաև այսպէս կոչուած «մեծ» ու «փոքր» ահաբեկումների սկզբունքը:

Այս չորս կէտերը ժխտելով ժխտում էր ռուսական մարքսիստական դպրոցը, Համարձակ կարող ենք պնդել, որ վերջին չորս տասնամեակների ռուսական յեղափոխական կուսակցութիւնների հասարակական պատմութիւնն ընթացել է առաւելապէս այս սկզբունքների շուրջ մղուած պայքարի հունով, Անկարելի է չափը տալ այն հսկայական եռանդի ու աշխատանքի, որ գրչով ու խօսքով — լեզու ու անլեզու, խաղաղ ու կրքոտ, անհատաբար ու հաւաքականօրէն, զուսպ ու անսանձ ձևով — թափուել է այս մարզի մէջ:

Անսպառ մեղան, անհատնում թուղթ եւ անվերջ ու անսկիզբ խօսք, — ահա երկու բառով այդ պայքարի համառօտ պատմականը:

Տեսնենք սակայն, թէ յիշատակած չորս կէտերից իւրաքանչիւրի մէջ ինչո՞վ սկսուեց ու ինչպէ՞ս վերջացաւ մարքսիստների պայքարը սոցիալ-յեղափոխականների մեծ դպրոցի ու նաև, ի հարկ է, Հ. Յ. Դաշնակցութեան դէմ:

Նախապէս մի երկու խօսք Հ. Յ. Դաշնակցութեան էութեան մասին, անկախ ծրա-

զրային ըմբռնումներինց և տեսական վէճերինց :
 Բաղաքական հոսանքները , մեր խորին
 համոզումով , բնորոշուած են աւելի շուտ ի-
 ըննց որդեգրած դաւանանքի ներքին ոգիով ,
 քան այդ դաւանանքի բառով ու տառով :

Երբ խօսքերը , դարձուածքներն ու բա-
 նաձևերը ֆեախչի բնօրթ են ստանում , այն
 ժամանակ հարցի իսկական իմաստը , նրա ներ-
 քին էութիւնը , բուն ոգին վերանում է և մը-
 նում անմիտ ու անարիւն խօսքերի մի ցրտա-
 շունչ կայան :

Ահա ճիշտ այդպէս էր Դաշնակցութեան
 հակառակօրդների մօտ : *)

Նրանք անվերջ մեղան սպառեցին ապա-
 ցուցելու համար , որ Դաշնակցութիւնը ըն-
 կերվարական չէ , իսկ նրա ընկերվարութիւնն
 էլ—անկեղծ չէ : Ու չի կարելի ասել , թէ նրանք
 միշտ համոզուած չէին իրենց խօսքերի ճշմար-
 տութեան մէջ :

Մենք այս կարծիքին չենք :

Շատերն ու թերևս յաճախ , երբ վրնւում
 էին Դաշնակցութեան ընկերվարութեան դէմ ,
 իրապէս համոզուած էին , որ ճիշտ ու արդար
 են իրենց յարձակումները : Եւ այս՝ այն պատ-
 ճառով միայն , որ ընկերվարութիւնն այդ
 մարդկանց համար դարձել էր ֆեախչ , զրկուել
 իր հզօր ու հմայիչ ուժից , մարել ներքին կը-

*) Մեր այս աշխատութեան մէջ նկատի ունենք
 միայն ընկերվարականներն :

բակն իր մէջ և դարձել համազօր քրմական
 պատգամների :

Սակայն ընկերվարական էր արդեօք Դաշ-
 նակցութիւնը :

Ե՛ւ այո , և՛ ոչ :

Ընկերվարական էր այնչափով , որչափով
 ինքն ընկերվարութիւնը դէմ չէր ազատու-
 թեան , հաւասարութեան ու համերաշխու-
 թեան նուիրական սկզբունքներին : Եւ հա-
 կաընկերվարական էր այնչափով , որչափով
 ընկերվարութիւնը դէմ էր հաւասարութեան
 այս սկզբունքներին՝ անհատների , դասակար-
 գերի ու ազգերի միջև :

Որովհետև ընկերվարութիւնը կոչուած էր
 ծառայելու այն գերագոյն նպատակներին , ու-
 բոնք Դաշնակցութեան դաւանանքի ոգին ,
 նրա էութիւնն ու իմաստն էին կազմում :

Այս ըմբռնումով ընկերվարութիւնը պարզ
 միջոց էր դէպի վերջնական նպատակը տանող
 և ոչ թէ նպատակ :

Եւ այդ պատճառով Դաշնակցութիւնը ,
 լինելով ընկերվարական , մէկ օր կարող էր իր
 ամբողջ հասակով ծառանալ ընկերվարութեան
 դէմ , եթէ պարզուէր , որ աշխատաւոր մարդ-
 կութեան երազած ապագայ հասարակակարգի
 մէջ դեռ պիտի շարունակուի , այս կամ այն ձե-
 ւի տակ , մարդկութեան մէկ մասի շահագոր-
 ծումը—նիւթական կամ ոչ-նիւթական—միւս
 մասի կողմից :

Չէ՞ որ ընկերվարութիւնը սոսկ գծում է մարդկային զարգացման ընթացքը, տալիս է ապագայ հասարակակարգի ընդհանուր բնոյթը, նա միանգամ ընդմիջտ չի ճշտում այն հանգրուանը, ուր մարդկութիւնն իր յաւիտեանական հանգիստը պիտի առնի:

Եւ ո՞վ կարող է ասել, թէ ընկերվարական մեծ վարդապետութեան առջև փակուած են մարդկային ոռոնող մտքի բոլոր ճամբաները: Ո՞վ կարող է պնդել, թէ անվերաքննելի են այն ուղիները, — ու նաև, ի հարկէ, ընկերվարական, — որոնք մարդկութիւնը առաջնորդում են դէպի ճշմարիտ հաւասարութեան երազական կառուցում:

Մարքսիզմի ու մանսականք նրա սուսական թևի համար սակայն այսպէս չէր:

Քաղաքական այս հոսանքի համար ընկերվարութիւն խօսքն իր կատեխիզիսով մէկ ֆետիչ դարձաւ, զոկուեց իր կենդանի շունչից, գործը փոխարինուեց խօսքով, ոգին՝ տառով ու միջոցները դարձան նպատակ:

Ընկերվարական վարդապետութեան ըմբռնումի և իւրացման այս նուրբ ընազաւառի մէջ պիտի որոնել, մեր խորին համոզումով, ուղղափառ մարքսիզմի անվերջ սայթաքումներն ու Հ. Յ. Դաշնակցութեան դաւանած դադափարների վերջնական յաղթանակի պատճառները:

Դադափարական այս երկու աշխարհներ

բի միջև տեղի ունեցած պայքարի պատճառներից մէկը ազգային հարցն էր:

Դաշնակցութիւնն իր դաւանագրի անկիւնաքարերից մէկը դարձրեց այս հարցը:

Հա՛յ Դատի, որ ասել է՝ նաև բոլոր մնացած ճնշուած ազգերի քաղաքական դատերի լուծումը նա դարձրեց իր հասարակական դաւանանքի անխախտ սիւներից մէկը:

Ազգային հարցը Դաշնակցութեան համար միջոց չէր, այլ — նպատակ. նա ինքնարժէք մի մեծութիւն էր, դարաւոր անցելով և յաւերժական ապագայով, — որքա՛ն, ի հարկէ, մարդկային միտքը կարող է ընդհանրապէս պատմութեան հեռու հորիզոնները զիտել:

Երբեք չպիտի մոռանալ, որ այն օրերին, երբ ծնունդ առաւ Դաշնակցութիւնը, ազգային հարցը տեսականօրէն դեռ իր փթթման շրջանն էր ապրում:

Ազգութիւնն իր ժամանակակից ըմբռնումով անձանօթ էր պայքարող քաղաքական ուժերին:

Յատակ էր պետութեա՛ն գաղափարը, որ առաւելապէս տերրիտորեալ իմաստ ունէր, ծուղավղի՛ հասկացողութիւնը, որ ինքնին «քաղաքական մրութեան արտայայտութիւն» էր, ինչպէս Բլոճնչին է ասում, սակայն դեռ պարզ ու որոշ չէր ազգութիւն կոչուած առեղծուածը:

Պէտք չէ մոռանալ, որ առաւելապէս ֆըրանսական Մեծ Յեղափոխութեան օրերից

սկսած է, որ ազգութեան գաղափարն իր նորագոյն իմաստով ցցուում է հանրային մտքի առջև :

«Մարդու և Քաղաքացու Յայտագիրը» կարծես գալիս էր ընդհանուր, սկզբունքային առումով գծելու այն երազական աշխարհի պատկերը, ուր ներդաշնակօրէն պիտի գուգորդուեն քաղաքացու և մարդու, մէկի եւ բոլորի, ֆրանսացու եւ մնացեալ ժողովուրդկերի, մէկ ազգի և համայն մարդկութեան փոխազարձ շահերն ու իրաւունքները և կազմեն իրաւահաւասար և հաւասարաժէջ քնդամաների մէկ, գեղեցիկ, ազատ ու համերաշխ ընտանիք :

Որովհետեւ եթէ ճիշտ է, որ ազգային պայքարներ տեսել են մինչև իսկ հին Յունաստանն ու հին Հռոմը, ապա ճիշտ է և այն, որ դարերի գաղարից յետոյ, այդ նոյն պայքարները նորէն սկսել են ծայր տալ XII-րդ դարից սկսած, որպէսզի յետագային, XVII և լատկապէս XVIII ու XIX-րդ դարերի ընթացքում արտայայտուեն աւելի մեծ ու հզոր թափով :

Սակայն սրանից մօտ չորս տասնամեակ առաջ ազգութեան գաղափարի այսքան լստակ ու որոշ հասկացողութիւնը չկար :

Կարելի է թուել մի շարք հասարակագէտների անուններ, որոնք, ընդունելով հան-

դերձ ազգութեան գաղափարը, դժուարանում էին, այնուամենայնիւ, վերջնական որոշումը տալ, տարբերուելով միմեանցից ոչ միայն երկրորդական, այլ և հիմնական կէտերում :

Սկզբին :

Ստեղծուեցին ազգային հարցի ըմբռնման մինչև իսկ յատուկ դպրոցներ (օր'եկաիւ, սուրբ'եկաիւ, իտալական դպրոց), որոնք ազգութեան ընտրուած համար կարևոր էին համարում յատկանիշների այս կամ այն գումարը :

Բլունչի, Ելլինեկ, Ջաքարիէ, Եղէր, Գումպլովիչ, Պերներստորֆեր, Բաուէր, Գոբինա, Լեբոն, Դանիւլովսկի, Սինոպոսիկուս, Ռենան, Նոյման, Կաուցկի, Սոլովեով, Պլեանեով, Պամանիկ, Ռատներ, Ժիալովսկի, «Սերպ»ի շուրջ խմբուած գրիչները և ընդհանուր — ահա մի քանի անուններ միայն մարդկային մտքի այն փայլուն բանակից, որ փորձեց տարբեր ձևերով ու տարբեր ուղիներով ազգութեան առեղծուածը պարզել և սակայն ձախողեց :

Խնդրի դժուարութիւնը չսպառեցին նաև այն մի շարք պատկառելի համազումարները, որոնք վերջին տասնամեակների ընթացքում հրաւիրուեցին եւրոպական մի շարք պետութիւնների մէջ, յատկապէս ազգային հարցի համար :

Եւ եթէ այսօր ազգագէտների ստուար բանակի մէջ երկարատեւ պրպտումներից յետոյ

իշխող կարծիքն այն է, թէ ազգութիւնը բը-
նա-հոգեբանա-պատմական մի բարդ շաղախ
է, իսկ ազգը՝ կրողն է այդ շաղախի, այս
երբեք ասել չէ, թէ վերջնականը, ճշմարիտն
ու հանրապարտադիրը այս է:

Փաստն այն է, որ ազգութիւնը կայ, ե-
ղև է դեռ հին Արևելքում, Հռոմում, Յու-
նաստանում ու հին Եգիպտոսում, ապա իր
ներքին էութեամբ աւելի ու աւելի բարդա-
նալով, նա մի նոր թափով սկսել է արտա-
յայտուել XIII-րդ դարից սկսած ու միանգա-
մայն ծաւալուն կերպարանք առել մեր օրե-
րին, — ա՜հ կարևորն ու էականը այն է, նո-
րից ենք կրկնում, որ մարդկային պատմու-
թեան այս հզօր ազդակը եղել է ու կայ, իսկ
ներա բացատրութիւնը սակայն պակասում է
տակաւին *):

Ի այց բացատրութեան բացակայութիւ-

*) Ազգային հարցին նուիրուած մէկ ընդարձակ
յօդուածով փորձ ենք արել ցոյց տալ, թէ ազգու-
թիւնն առաւելագէտ բնա-պատմական ծագում ու-
նեցող ընկերային բնազդների մի բարդ շաղախ է,
որ կուտակուած է դարերի ընթացքում համակրօքէն
վերապրած փոխադարձ օգնութեան անհամար դէպ-
քերի հետեւանքով:

[Տե՛ս, Դաշնակցութեան Անդրկովկասեան Ուսա-
նողական Միութեան ռուսերէն լեզուով անլեզալ
«Պայքար» ամսագրի «Ազգային հարց» խորագրով
մեր յօդուածը, 1908, Թիֆլիզ, 2 թ.]:

նը բնաւ չի ժխտում ազգութեան գոյութիւ-
նը:

Այդ ցոյց է տալիս ինդրի բարդութիւնն
ու մարկային մտքի ահարութիւնը միայն:

Դաշնակցութեան համար այս հարցի ըմ-
բանումը դիւրանում էր այն պատճառով յատ-
կապէս, որ նա, ինչպէս ասացինք, անխա-
թար հասկացողութիւն ունէր ընկերվարու-
թեան ներքին էութեան մասին:

Նա ասպարէզ էր իջել պայքարելու այն
բոլոր բռնութիւնների դէմ, որոնց ենթարկ-
ւում էր հայ ժողովուրդը, միանգամայն ան-
կախ այն բանից՝ թէ այդ բռնութիւնը որտե-
ղից է գալիս արդեօք, ի՞նչ պիտակի տակ և
յանունն ի՞նչ նշանաբանների:

Նա ձգտում էր մի այնպիսի կարգերի, ուր
չահագործումը (որևէ ձևի) այլևս տեղ չունի,
ուր անհատներն ու հաւաքականութիւնները
(ամենքն անխախտ) ապրում են զարգացման
ազատ և հաւասար պայմաններում (և աշխարհի
բոլոր երկնակամարների տակ):

Եւ եթէ Դաշնակցութեան հարազատած
ընկերվարական մեծ վարդապետութիւնը դէմ
լինէր այս նուիրական սկզբունքներին, Դաշ-
նակցութիւնը ոչ միայն ընկերվարական չէր
լինի, այլ, ինչպէս ասացինք, իր ամբողջ հա-
սակով կը ծառանար այդ ուսմունքի դէմ:

Դաշնակցութիւնն ամբողջութեամբ իւ-
րացրեց ազգութեան գաղափարը և միաժա-

մանակ որոշեց, յանուն իր պայքարի յաջողութեան, կազմակերպուել նաև ազգայնօրէն:

Այս քայլը կրկնակի արժէք էր տալիս ազգութեան գաղափարին:

Ազգայնօրէն կազմակերպուելու որոշումը գալիս էր վկայելու, թէ Դաշնակցութիւնն իրապէս օրքան անկեղծօրէն ու խորապէս փարած է ազգութեան գաղափարին:

Նա գալիս էր յստակ ու որոշ դարձնելու հայ մեծ կազմակերպութեան վերաբերումը դէպի չլուծուած ազգային դատերի կնճիռը:

Արդ, ի՞նչ վերաբերում ունեցաւ, նախ՝ դէպի ազգութեան գաղափարն իր տեսական առումով և ապա՝ դէպի ազգայնօրէն կազմակերպուելու ձգտումը ռուսական մարքսիզմը երէկ և ի՞նչ վերաբերում ունի նա այսօր:

Պայքարի այս գծի վրայ գաղափարօրէն արդեօք պարտուե՞ց մարքսիզմը (թէ՛ տեսական առումով և թէ՛ գործնականապէս), թէ՛ նա դուրս եկաւ այս պայքարներից, անվստաս փրկելով իր հնօրեայ դիրքերը:

Թէ օրքան քիչ արժէք էին տալիս ազգային հարցին այսպէս կոչուած գիտական ընկերվարութեան հիմնադիրները՝ կարլ Մարքսն ու էնգէլսը՝ այդ երեւում է հէնց նրանից, որ այդ երկու կարկառուն ղէմքերը լրջօրէն երբեք չզբաղուեցին ազգային հարցով և իրենց հետևորդներին չթողին և ոչ մէկ լուրջ ուսումնասիրութիւն այս մասին:

Թէ՛ Մարքսի և թէ՛ էնգէլսի համար համար ազգային հարցն ընկերվարութեան հետ անմիջական ազերս չունեցող մէկ խնդիր էր և այդ պատճառով, իբրև այդպիսին, իբրև ընդհանուր ուսմունքի ոչ-օրգանական մի մասնիկ, նա չարժանացաւ այս երկու մեծ տնտեսագէտների լուրջ ուսումնասիրութեան:

«Կոմունիստական Կուսակցութեան Մանիֆեստ»-ի մէջ, որ լոյս տեսաւ 1848-ին, մի քանի տողով ճշտուած են սակայն ազգային հարցի ըմբռնման գլխաւոր սկզբունքները:

Այս գրքոյկի մէջ Մարքսն ու էնգէլսը, չփութելով ու նոյնացնելով հայրենիքի եւ ազգութեան գաղափարները, հետեւեալ ուշադրաւ մտքերն էին յայտնում.

«Կոմունիստներին մեղադրում են նաեւ նրա մեջ, թէ նրանք կամենում են ոչնչացնել հայրենիքը, ազգութիւնը, Բանուորները հայրենիք ջունեն: Նրանցից չի կարելի խել այն, ինչ նրանք ջունեն: Անկասկած պրոյետարիատը պետք է նախ եւ առաջ տիրանայ բաղաբաղական բովանդակ իշխանութեան, հասնի ազգային գերիշխան դասակարգի բարձրութեան եւ ինքն իրեն կազմակերպի իբրև ազգ.— եւ այս իմաստով նա տակաւին կապուած է ազգութեան: Բայց ոչ բուրժուական իմաստով:

«Արդէն բուրժուագիայի գարգացումն ինքնին, ազատ առեւտուարը, համաշխարհայնացումը եւ արտադրող արդիւնաբերութեան եւ

նրան համապատասխանող գոյութեան պայմանների միանմանութիւնը աստիճանաբար ոչնչացնում են ազգութիւնների միջեւ եղած սահմանագծումներն ու հակամարտութիւնները» : *)

Այն սոսկական փաստից, որ իշխանութիւնը հայրենիքում ժամանակաւորապէս գտնուում է ոչ-պրոլետարիատի ձեռքը, նըրանք եզրակացնում էին, որ պրոլետարիատը, հետեւաբար, հայրենիք չունի, նոյնացնելով այսպիսով համադասակարգային հայրենիքի եւ դասակարգային սեփականութեան հասկացողուները :

Նրանք միաժամանակ յայտարարում էին, որ պրոլետարիատը կարող է հասնել ազգային դասակարգի բարձրութեան, երբ աէր դառնայ իշխանութեան, այսպիսով բանուոր դասակարգի իշխանութիւնը հոմանիշ դարձնելով ազգութեան գաղափարին, որ գոյութիւն ունի անկախ այս կամ այն դասակարգի տիրապետութիւնից և ընդգրկում է իր մէջ ազգային հաւաքականութիւնն իր ամբողջութեանը մէջ և ոչ թէ նրա այս կամ այն հատուածը միայն :

Ապա Մարքսն ու Էնգելսը այդ նոյն «Մանիֆեստ»-ի մէջ համոզում էին յայտնում, որ արդիւնաբերական ուժերի, ընդհանրապէս տնտեսութեան անխուսափելի կենտրոնացման

*) Karl Marx et F. Engels. «Le Manifeste Communiste», Փարիզ, էջ 50 :

զուգընթաց պիտի վերանան նաև ազգային հակամարտութիւններն ու բաժանումները, այսպիսով ազգն ու ազգութիւնը դարձնելով պատմական մէկ կատեգորի, որ գոյութիւն ունի այսօր, շնորհիւ տիրող մասնատիրական կարգերի, և որ վաղը, ընկերվար հասարակարգի յաղթանակի հետ մէկտեղ, ընդմիջտ պիտի վերանայ և պատմութեան սեփական գրութիւնը դառնայ :

«Մանիֆեստ»-ի մէջ խտացուած ձևով ասուած է այն, ինչ Մարքսն ու Էնգելսը յետագային, մի շարք գրուածքների մէջ, ուղղակի կամ անուղղակի կերպով չօջափել են :*)

Այս մտքերը հիմնադիրներից փոխանցուցին Մարքսի և Էնգելսի աշակերտներին :

Լիբկնիխտը (հայրը) սրանից մօտ 32 տարի առաջ, 1892-ին, Մաքսէյլում արտասանած իր նշանաւոր ճառի մէջ այն միտքն էր պարզում, որ սոցիալ-դեմոկրատիայի համար

*) Չափազանց ուշագրտւ է այն յօդուածը, որ բլաւոն ժողովուրդների դէմ է գրուած եւ կրում է «Իեմոկրատիական նամատաւանակաճութիւն» խորագիրը :

Սյդ թունայից յօդուածի մէջ Մարքսը սլաւոն ազգերը «բէհակսիոն» և «եղազլուխ» է անուանում և նախատեսում է նրանց մօտայուտ և իսպառ ոչնչացումը համաշխարհային պատերազմի յօրձանուտի մէջ :

Մարքսի գրչին են պատկանում նաև այն տողերը թէ՛ բերեցէք ուստին և նրա տակից թաթարը կը ցցուի :

Ասինք, ի միջի այլոց, որ շեխատեաց Մարքսի

միայն երկու ազգութիւն գոյութիւն ունի՝ շահագործողների ու շահագործուողների, որոնցից վերջինին պատկանում են իրենք :

Ու մինչև իսկ Կառուցկին, ամէնէն զգոյշն ու տաղանգաւորը մարքսեան տեսաբաններից, ազգութեան նուիրած իր անդրա՛նիկ յողուածի մէջ («Ժամանակակից ազգութիւնը») խորագրով) այն միտքն էր արծարծում, թէ ազգերը ծնունդ են առաւելագէս տիրող տնտեսաձևի, որի չքաղման հետ մէկտեղ աստիճանաբար պիտի հարթուեն ու վերանան նաև ազգային տարբերութիւնները :

Այս ժխտական վերաբերումը այնքան բացայայտ էր, որ 1897-ին Բրուսնի մէջ կայացած աւստրիական սոցիալ-դեմոկրատիայի համագումարում (ազգային հարցի վերաբերեալ) զեկուցող Չէլիզերը հարկադրուած էր խոստովանել, թէ ինչպէս «կոմմունիստական

նախատեսութեանց մէջ էր մտնում և այսօրուայ փարթամ, ազատ ու դեմոկրատիկ չեխօ-սլովակ ժողովրդների կատարեալ ոչնչացումը :

Պակաս ուշադրաւ չէ հրեայ Մարքսի մէկ փոքրիկ եւ թունալից գրքոյկը «Լըբեական հարցի մասին», ուր Մարքսը նախատեսում է, որ տնտեսական շահագործման վերացման հետ մէկտեղ՝ պիտի չքանայ նաև հրեայ ազգի գոյութիւնը, որ ծնունդ է առաւելագէս տնտեսական գործօնի :

Պակաս ատելութեամբ չէ գրել Մարքսը նաև դանիացիներն ու սկանդինաւիացիներն զէմ, համարելով նրանց ազգութիւնը չզափան, ծովահենական ու կեղտոտ :

Մանիֆեստ»-ի օրերից սկսած միանգամայն անտարբեր վերաբերում ստեղծուեց դէպի ազգային խնդիրները սոցիալ-դեմոկրատիայի մէջ, որը ազգութիւնը համարում էր բուրժուազիայի ծնունդ : *)

Սակայն թերևս և՛ ոչ մէկ տեղ ազգային հարցը այնպիսի թշնամանքի չի հանդիպել, ինչպէս Ռուսաստանում և ռուսական սոցիալ-դեմոկրատների կողմից, Ե՛ւ ոչ մէկ ածական չի խնայուել հանդէպ նրանց, որոնք փորձել են տեսնել այն յամառ իրականութիւնը, որ գոյութիւն ունի մարքսիստական «դոգմա»-ից դուրս : Յանուն ազգութեանց յարատեման ասուած իւրաքանչիւր մի խօսք սրբապղծութիւն է նկատուել «ընկերվարութեան» և «յեղափոխականութեան» հասցէին՝ ռուս սոցիալ-դեմոկրատիայի կողմից, որ այդ տխուղ տեսների օրինաւոր տէրը միայն իրեն էր համարում :

Ո՛ր ազգերը պիտի չքանան, ո՛ր նրանց յարատեւելու յամառ փափագը մանր-բուրժուական թուլութիւն է միայն, ո՛ր տնտեսական ամենազօր «կենսորոնացումը պիտի գայ ու պիտի սրբէ ազգային «քնքոյշ ծաղիկները»՝ փոքր ազգերը, — այս վեր էր համարւում ամէն մի կասկածից :

Հարցը այնքան պարզ էր, այնքան որոշ ու յստակ (անշուշտ ռուս սոցիալ-դեմոկրատ

*) Գ. Խամակ. — «Լուց և ազգութիւնը», 1912, Պոլիս, էջ 127 :

տիայի համար), որ ոռոսական մարքսիստներին և ոչ մէկը յօգնութիւն ստանձնեց լրջօրէն երբեք զբաղուելու ազգութեանց կնճռով:

Գրուեց ամէն հարցի մասին, գրիչներ մաշուեցին հազար ու մի խնդիրների շուրջ, ամբողջ հատորներ նուիրուեցին տեսական ու գործնական մինչև իսկ ամէնէն աննշան տարակուսանքներին, ստեղծուեց հասարակագիտական հսկայական զրահանութիւն, սակայն լոյս չտեսաւ և ոչ մէկ լուրջ ու ծաւալուն աշխատանք, ուր հանգամանօրէն, հարցի ծանրութեանը համապատասխանող մտահոգութեամբ, քննութեան առնուած լինէր ազգային հարցը:

Մի երկու լղրճուկ գրքոյկ, վեհանձնօրէն գրի առնուած մի քանի ղիպուածական տողեր ու մէկ քանի յօդուածներ, — ահա այն ամէնը, ինչ ոռոսական սոցիալ-դեմոկրատիան տուաւ ազգային հարցի մասին:

Եւ այս էլ մի երկրում, որ ազգային թաքուն կրքերի ու ձգտումների մի կատարեալ հնոց էր, ուր երկրի պատկերը, ազգային տեսակէտով, այնքան գունբարնգ էր, ուր ազգերը՝ հերոսական մաքառումների գնով՝ պահում ու պահպանում էին իրենց ազգութիւնը յատկանշող բոլոր մասնայատկութիւնները:

Սակայն ոռոսական սոցիալ-դեմոկրատիան ոչ միայն արհամարհոտ վերաբերում ունէր դէպի ազգային հարցը, այլ և պարզ թշնամական է

Եւ այս թշնամութիւնը սուր կերպով արտայայտում էր առաւելագէս գործնական կեանքի մէջ. հասարակական գործունէութեան այն ընդարձակ ասպարէզում, ուր հազար ու մի առիթներով ու տարբեր հարցերի շուրջ ոռոսական սոցիալ-դեմոկրատիան հանգրիպում էր ստորադաս ազգութեանց ազգային ընկերվարական հոսանքների հետ:

Ռոսական սոցիալ-դեմոկրատիայի ստեղծագործական միտքը «կուլտուրական ինքնավարութիւնից» այն կողմը չանցաւ: Մինչև իսկ հրէական «Բուռնը» (մարքսիստական), որ ամէնէն արմատականն էր այդ խնդրում, ազգային հարցի հետեեալ ըմբռնումն ունէր:

«Ազգային կուլտուրական ինքնավարութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ազգային ինքնավարութիւն (Ստորագծումները հեղինակինն են): Այդ դէպքում ազգն ինքնավար է այն հարցերում, որոնց մէջ երեան է գալիս ազգային կեանքը, ինչպէս այդպիսին, այսինքն՝ կուլտուրական հարցերում: Դրանով է սահմանափակում նրա իրաւասութիւնը: Միւս բոլոր գործերի և փունկցիաների համար «ազգային միութիւնը» կարծես բոլորովին գոյութիւնից զազարում է»^{*)}

*) Մեղեմ. — «Ազգային Հարցը եւ սոցիալ-դեմոկրատիան», (Քաղում ենք Սամակի նորն աշխատութիւնից, էջ 122—123):

Այս էր այն միակ շնորհը, այն անմիտ, անարիւն, անորոշ ու անբովանդակ դարձ-
 ուածքը, որ ուսական սոցիալ-դեմոկրա-
 տիան բարեհաճել էր հնարել ստորագաս ազ-
 գութեանց համար:

Ուղղափառ մարքսիզմի ուսու հետևորդ-
 ների աչքում «կուլտուրա» էր ազգային երկ-
 դասեան դպրոցը (միշտ ստորագաս ազգերի
 համար, ի հարկէ), սակայն «կուլտուրա» չէր
 այդ նոյն ազգի սեփական պետութիւնը.
 «կուլտուրա» էր թատրոնը, սակայն «կուլ-
 տուրա» չէր հարազատ կառավարութիւն ու-
 նենալը. «կուլտուրա» էր, երբ ինքնորոշուես
 ու ազատ լինես ազգային լեզուի ու գրչի գոր-
 ծածութեան ստորին հիմնարկութիւններում՝
 թանգարանից մինչև մատուռ, սակայն «կուլ-
 տուրա» չէր, երբ ինքնորոշուես ու ազատ
 լինես նաև քաղաքականացէս, քո ազգային
 սեփական, հարազատ ու ազատ պետական
 շէնքի մէջ:

Ահա թէ ինչ ըմբռնում կար «ընկերվա-
 րութեան», «յեղափոխութեան», «ազատու-
 թեան» ու «կուլտուրա»-ի մասին:

Այս ազգամերժ ախտով ուսական սո-
 ցիալ-դեմոկրատիան վարակեց ընդհանրապէս
 անգրկովկասեան և մասնաւորաբար նաև հայ
 իրականութիւնը:

«Միջազգայնութեան» ջահակիրներն էին,
 ի հարկէ, վրացի սոցիալ-դեմոկրատները: Նը-

րանց համար կար «միայն մարքսիզմ» — աղգա-
 յին հարցից դուրս և ազգային հարցից վեր և
 ուրիշ ոչինչ, և այս վերամկրտութիւնն այն-
 քան «խորն» էր ու «հիմնական» (անշուշտ
 արտաքնապէս), որ անկարելի էր վրացի սո-
 ցիալ-դեմոկրատի մէջ գէթ աննշան ձևով նաև
 իր ազգային բաղձանքները տեսնել:

Նոյ ժողովանիայի գլխաւորութեամբ Դաշ-
 նակցութիւնն ենթակայ էր սարսափելի հալա-
 ծանքների իբրև «հակաընկերվարական ու շո-
 վէն» քաղաքական հոսանք, որովհետև Դաշ-
 նակցութիւնը հետապնդում էր, նախ իր ազ-
 գային դատը, և, երկրորդ՝ կազմակերպում էր
 ազգայնօրէն իր շարքերը: Գրեթէ այս նոյն
 մտքերն էին թոթովում և հայ սոցիալ-դե-
 մոկրատները, շարունակ ընկերվարական նի-
 զակ ձօճելով Դաշնակցութեան «ազգայնակա-
 նութեան» բերդի դէմ: Այս տեսակէտից ուս
 ստորագաս ազգերից և ոչ մէկի այսպէս կոչ-
 ուած սոցիալ-դեմոկրատական տարբերը այն-
 քան ուժգնօրէն չէին ենթարկուել ուսական
 մարքսիզմի ազգամերժ ախտին, որքան այդ
 հոսանքի հայ հետևորդները: Եւ այդ իսկ
 պատճառով բովանդակ Ռուսիոյ մէջ պայքա-
 րը նոյն ազգութեան ծոցում թերևս և ոչ մէկ
 տեղ այնքան սուր բնօյթ չէր կրում, որքան
 Հայաստանում և որքան հակադաշնակցական
 «ընկերվար» բանակի կողմից՝ ընդդէմ Դաշ-
 նակցութեան «հակաընկերվարութեան»:

Դաշնակցութիւնը մահացու մեղք ունէր գործած «ընկերվարութեան» դէմ, հետապնդելով, նախ՝ հայ ժողովրդի ազգային դատը և ապա՝ պայքար տանելով ազգայնօրին կազմակերպուած քաղաքական հոսանքի միջոցով:

Վրաց մենչեւիկները, որ տեղ էին զըտել համառուսական սոցիալ-դեմոկրատիայի շարքերում, ծպտեալ վիճակի մէջ, պատըսպարուելով համապետական ապառքային ու «պրոլետարական» դրօշի տակ, ամէնէն աւարգ ձևերով ձգտում էին ազգային գերիշխան գիրքի Անդրկովկասում, իսկ նրանց էապէս ապառքային հայ համարները՝ չըմբռնելով ոչ հարցի էութիւնը և ոչ էլ վրացական մենչեւիկեան պայքարը թաքուն նպատակները, բոլոր ներելի ու աններելի միջոցներով հրահրում էին բորբոքուած կրքերը և «համամարքսիստական» (կարգա՝ հակահայկական) մէկ և ընդհանուր ճակատ ստեղծում Հ. Յ. Դաշնակցութեան դէմ:

Այդպէս էր սակայն երէկ:

Մէկ առանձին թափով, յատկապէս 19-րդ դարի վերջին յիսնամեակին, ծաւալուն կերպարանք առին ազգային պայքարները:

Ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնը զօրաւոր խթան եղաւ ազգային զարթօնքի, ոյժ աուաւ ազգերի ազատագրական պայքարին և յստակօրէն ցուցադրեց ազգային կըն-

ճիւղի նուրբ, գերազանցօրէն յառաջադիմական և առաւելապէս ներքին կուլտուր-պատմական բովանդակութիւնը:

Չանցած մի քանի տասնամեակ, արդէն 19-րդ դարի առաջին յիսնամեակի վերջերին՝ «Երիտասարդ Իտալիա», «Երիտասարգ Շուեւտիա», «Երիտասարգ Եւրոպա» անունների տակ յար և նման ազգային շարժումներ ըսկըսուեցին Եւրոպայի տարբեր մասերում:

Ազգային վերածննդի մի աննախընթաց կրակով բոցավառուեց Բալկանեան ամբողջ թերակղզին: Սկսեց ամբողջանալ և շեշտուած ազգային կերպարանք առնել գերմանական բաժան-բաժան երկիրը: Վերաստեղծուեց Իտալիան: Իրեթէ ամէն տեղ, յատկապէս եւրոպական ցամաքամասի վրայ, ազգերի ծոցում սկսեց մէկ առանձին թափով փթթիլ ու մարմին առնել ամէն ազգի կամքը, ինքնագիտակցումն ու մշակոյթը մարմնաւորող մըտաւորակաւուրիւնը:

Մի չնայխարհիկ երեւոյթ էր սա, որ գալիս էր յատուկ փայլ ու գոյն տալու մարդկութեան նորագոյն պատմութեան:

Ազգերը, հակառակ մարքոսեան տեսութեան, փոխանակ բեկոր-բեկոր, աստիճան աստիճան ճգմուելու և անհետանալու, հզօրների խնկելի աւերակների վրայ ծնունդ էին առնում և իրենց նոր ու խոստմնալից կեանքի խարխիւր նետում:

Յար և նման խմորումներ տեղի էին ունենում նաև Ռուսաստանում, ուր այլ և այլ ազգերի թիւը հարիւրից այն կողմն էր անցնում :

Ռուսաստանի մէկ ծայրից միւսը , Ֆիննական ջրերից մինչև Անդրկովկասի սահմաններըն ու ապա դէպի Անդրկասպեան երկիրներն ու դէպի Մայրագոյն Արևելք անյայտութեան ծոցից մի ինչ որ շքեղ , հզօր ու անյազթահարելի ոյժ էր ծնունդ առնում , որ ազգերը կարծես զիտամբ դարերով ու գաղտնապէս պահել էին իրենց ծոցում :

Անժխտելի է , որ Ֆինն , էսսա , լատիշ և լիտուական ժողովուրդներն իրենց ազգային զարթօնքի համար մեծապէս պարտական են 19-րդ դարին :

Այդ դարը ի զուր չանցաւ նաև Անդրկովկասեան ազգերի համար :

Նրանցից մէկը , յատկապէս Ադրբէյջանցիք , պարզապէս մեր օրերին օտքի ելան , կազմաւորուեցին , ազգային շեշտուած գոյն աւ կերպարանք սուին անկերպարան հաւաքականութեան և ապազգայնացած տարածութիւններն աշխարհագրօրէն դարձրին Ադրբէյջան :

Ամբացաւ նաև հայ տարրը (թէ՛ թւով ու թէ՛ ազգայնօրէն) և մեծամեծ զոհողութիւններ զնով կարողացաւ Ռուսիոյ նայկական շքշանները դարձնել Հայաստան :

Ի զուր չապրեց այս դարը նաև վրաց ժո-

ղովուրդը , որ իրաւամբ այդ չրջանն իր ազգային զարթօնքի փայլուն էտապներից մէկը պիտի համարի :

Սակայն ամէնէն յատկանշականն ու նըշանակալիցը այն է , որ նոյնանման շարժումներ սկսուեցին մինչև իսկ միևնոյն ազգութեան տարբեր ծալքերի մէջ , մի երևոյթ , որ բոլորովին խորթ էր անցեալ բովանդակ պատմութեան և որ սաղմնաւորում էր բացառաբար մեր օրերին :

Մենք , օրինակ , մինչև այսօր այնպէս զիտէինք , որ ռուս ժողովուրդը բաղկացած է միայն երեք գլխաւոր հատուածներից , այն է՝ վելիկորոս , մալորոս և բելորոս , որոնք բոլորն էլ կատարելապէս ռուս են , փոքրիկ տարբերութիւններով միայն : Սակայն լեզուական , պատմական անցեալի և սովորոյթների մինչև իսկ ոչ մեծ զանազանութիւններն անգամ պատճառ դարձան , որ վելիկորոսից թւով քիչ և համեմատաբար թոյլ մոլորոսն ու բելորոսը ձգտեն անջատուել նրանից և իրենց սեփական անկախ և ազատ տունն ունենալ :

Այս ձգտումը սրբագործուեց առատօրէն թափուած արիւնով , այս ժողովուրդները մի որոշ չրջան ապրեցին մինչև իսկ բացարձակապէս անկախ և նուիրական դարձրին այն դատը , որ թէև այսօր պարտուած , օակայն վաղըն անխուսափելիօրէն յաղթական պիտի

դառնայ, Բայց եթէ գեռ մի չափով կարելի էր հասկանալ մալորոսի և բելորուսի անջատողական ձգտումները, ապա առաջին հայեացքից բացարձակապէս անկարելի էր ըմբռնել այն, ինչ կատարուեց յետագային.

Իսկ յետագային եղաւ հետեւեալը.

Պարզուեց, որ Ռուսաստանում կան ոչ միայն վելիկորոսներ, բելորուսներ և մալորոսներ, այլ և կան Դոնի ուսուսներ, Կուբանի ուսուսներ, Թերեքի և Սիբիրի ուսուսներ:

Եւ ցանկացան կիսանկախ վիճակ ունենալ թէ՛ Դոնը, թէ՛ Կուբանը, թէ՛ Թերեքն ու թէ՛ Սիբիրը:

Ոչ միայն ցանկացան, այլ և պայքարեցին այդ նպատակի համար, զոհեր տուին, յաղթուեցին ու պարտուեցին, սակայն անխորտակելի մնաց նրանց ցանկութիւնը՝ մի օր վերստին տիրանալ նոյն կիսանկախ վիճակին:

Եւ այս ո՛չ թէ ռուսական նախարարական շրջանի պատմութեան կրկնութիւնն էր, ուր ամէն մէկ իշխան ձգտում էր, նախ լինել միանգամայն անկախ և ապա՝ իր իշխանութիւնը տարածել միւսներէ Վրայ, այլ այս մի ինքնօրինակ և աննախընթաց շարժում էր, ուր թէ՛ աշխարհագրորէն, թէ՛ պատմական անցեալով ու թէ՛ բարքերով եւ սովորոյթներով ամբողջից շատ քիչ տարբերուող շրջանները ձգտում էին իրենց ինքնութիւնը պահել և պահելու համար համապատասխան քաղաքա-

կան անօթներ ձուլել:

Այստեղ յատկապէս պէտք է ընդգծել մի չափազանց ուշադրաւ և նշանակալից կրեւոյթ:

Քաղաքական անօթների անջատման աստիճանը համապատասխանում էր սզգութիւնների տարբերութեանց աստիճանին:

Տարբեր են ազգութիւնները, — ուրեմն նրանք ձգտում են բացարձակ անջատման եւ կատարեալ անկախութեան: Շփման կէտեր չա՞տ կան, — այդ դէպքում նրանք պատրաստ են և դաշնակցային հիմերի վրայ կառուցուած մէկ ընդհանուր հովանու տակ մընալ: Այդ կէտերը բաւականի՞ն շատ են, — ապա անկասկած է, որ ազատութեան ձգտող շրջանները պարզ ինքնավար կեանքից այն կողմը պահանջներ չունեն:

Եւ հէնց այստեղ է յատկանշական կողմը նորագոյն պատմութեան:

Այսօրուայ Դոնի, Կուբանի, Թերեքի կամ Սիբիրի ուսուր բնաւ ցանկութիւն չունի մալրերկրից անջատուելու ընդհակառակը, եթէ անջատես, նա արեան գնով կը գայ իր մայր հայրենիքին միանալու, նրա պահանջը, ինչպէս ասացինք, պարզ ինքնավարութիւնից այն կողմը չի անցնում:

Մալորոսն, ընդհակառակը, որ վելիկորոսից շատ աւելի է տարբերում, քան, օրինակ, Կուբանի ուսուր, բնաւ տրամադիր չէ պարզ ինք-

դառնայ, Բայց եթէ դեռ մի չափով կարելի էր հասկանալ մալորոսի և բելորուսի անջատողական ձգտումները, ապա առաջին հարկացքից բացարձակապէս անկարելի էր ըմբռնել այն, ինչ կատարուեց յետագային.

Իսկ յետագային եղաւ հետեւեալը.

Պարզուեց, որ Ռուսաստանում կան ոչ միայն վելիկորոսներ, բելորուսներ և մալորոսներ, այլ և կան Դոնի ուսուսներ, Կուբանի ուսուսներ, Թերեքի և Սիբիրի ուսուսներ.

Եւ ցանկացան կիսանկախ վիճակ ունենալ թէ՛ Դոնը, թէ՛ Կուբանը, թէ՛ Թերեքն ու թէ՛ Սիբիրը.

Ոչ միայն ցանկացան, այլ և պայքարեցին այդ նպատակի համար, զոհեր տուին, յաղթուեցին ու պարտուեցին, սակայն անխորտակելի մնաց նրանց ցանկութիւնը՝ մի օր վերստին տիրանալ նոյն կիսանկախ վիճակին.

Եւ այս ո՛չ թէ՛ ռուսական նախարարական շրջանի պատմութեան կրկնութիւնն էր, ուր ամէն մէկ իշխան ձգտում էր, նախ լինել միանգամայն անկախ և ապա՝ իր իշխանութիւնը տարածել միւսները վրայ, այլ այս մի ինքնօրինակ և աննախընթաց շարժում էր, ուր թէ՛ աշխարհագրօրէն, թէ՛ պատմական անցեալով ու թէ՛ բարքերով եւ սովորոյթներով ամբողջից շատ քիչ տարբերող շրջանները ձգտում էին իրենց ինքնութիւնը պահել և պահելու համար համապատասխան քաղաքա-

կան անօթներ ձուլել.

Այստեղ յատկապէս պէտք է ընդգծել մի չափազանց ուշադրաւ և նշանակալից երեւոյթ.

Քաղաքական անօթների անջատման աստիճանը համապատասխանում էր սզգութիւնների տարբերութեանց աստիճանին.

Տարբե՞ր են ազգութիւնները, — ուրեմն նրանք ձգտում են բացարձակ անջատման եւ կատարեալ անկախութեան. Շփման կէտեր չա՞տ կան, — այդ դէպքում նրանք պատրաստ են և դաշնակցային հիմերի վրայ կառուցուած մէկ ընդհանուր հովանու տակ մընալ: Այդ կէտերը բաւականին շատ են, — ապա անկասկած է, որ ազատութեան ձգտող շրջանները պարզ ինքնավար կեանքից այն կողմը պահանջներ չունեն.

Եւ հէնց այստեղ է յատկանշական կողմը նորագոյն պատմութեան.

Այսօրուայ Դոնի, Կուբանի, Թերեքի կամ Սիբիրի ուսուսը բնաւ ցանկութիւն չունի մալրերկրից անջատելու ընդհակառակը, եթէ անջատես, նա արեան զնով կը գայ իր մայր հայրենիքին միանալու, նրա պահանջը, ինչպէս ասացինք, պարզ ինքնավարութիւնից այն կողմը չի անցնում.

Մալորոսն, ընդհակառակը, որ վելիկորոսից շատ աւելի է տարբերում, քան, օրինակ, Կուբանի ուսուսը, բնաւ տրամադիր չէ պարզ ինք-

նավարութեամբ գոհանալու, այլ պատրաստ է իր ազգակից վեհիկորոսի հետ մէկտեղ դաշնակցային հիմերով մէկ տուն կառուցելու և հաւասար իրաւունքներով տեղաւորելու նրա ընդհանուր հովանու տակ:

Իսկ վրացին, էստոնցին, ֆիննը, լատիշը ևլն., որ հիմնովին տարբերուած են ուսումնական շրջանից, — և՛ ոչ մէկ ցանկութիւն ունեն նրա հետ մէկտեղ մէկ ընդհանուր պետական շէնքի մէջ ապրելու:

Քաղաքական անօթների անջատման աստիճանը, նորից ենք կրկնում, ուղիղ յարաբերական է ազգութեանց տարբերութիւնների աստիճանին, եթէ միայն, ի հարկէ, կողմնակի հանգամանքները դեր չունեն այստեղ, ինչպէս, օրինակ, հայ ժողովրդի երբեմնակի նարկադրական ձգտումը դէպի Ռուսաստան՝ թրքական եաթաղանից ազատելու համար:

Ազգային զարթօնքի այս շնչեղութիւնը և ակնբախ փաստերն աննկատ չէին կարող մնալ նաև ուսական սոցիալ-դեմոկրատիայի համար:

Մարքսիզմի եւրոպական հատուածն ազգային հարցում արդէն դաւաճանել էր իր զաղափարակից ուսական թեին և տեղի տրուել պայքարի գրեթէ բոլոր կէտերում:

Մէկ ներքին հզօր տարերքի մղումով ըսկըսել էին ազգայնօրէն կազմակերպուել նաև

մի շարք ստորագաս ազգերի սոցիալ-դեմոկրատական հոսանքները:

Այս կէտում տեղի տուին մինչև իսկ ուղղափառներից ուղղափառները՝ հայ սոցիալ-դեմոկրատները, որոնց համար «ազգութիւնը, որպէս հասարակական կատեգորիա, պատմական անցողակի մի երևոյթ է եւ ոչ «բնական», «յաւիտենական»:^{*)}

Մեղաշականի ժամանակ նրանք ամենքն էլ, ի հարկէ, օրիշ խոստովանութիւններ էին անում, սակայն փաստն այն է, որ մեղաշականը մնում էր անշնջելի:

Այլևս նախկին ժխտական վերաբերումը — անշուշտ խօսքով, առայժմ տեսականօրէն — դէպի ազգութիւնները չկար:

Ռուսական մարքսիզմը երկունքով, շատ մեծ դժուարութեամբ, տեսական մի շարք կոկետութիւններից յետոյ հարկադրաբար տուրք էր տալիս մարդկային յառաջադիմութեան կարևորագոյն ազգակին՝ ազգային պայքարներին:

Այս «Ա»-ն էր, որից յետոյ պիտի գար «Բ»-ը, պիտի ծառանար ուսական մարքսիզմի առջև, իր ամբողջ ցցուն հասակով, ազգային հարցը և վերջնական անձնատուութիւնը դարձնէր անխուսափելի:

*) Միքայել Վարանդեան. — «Հոսանքներ», 1910, Ժընեվ, էջ 186:

Այս շրջանին, յատկապէս XX-րդ դարի սկզբնաւորութեան, ազգային շարժումներն այնքան ուժգնօրէն սկսել էին ծաւալուել և հանրային գիտակցութեան մէջ տեղ գտնել իրեն միանգամայն կենսական և իրաւացի եւրեւոյթներ, որ այլևս բնական էր ու հասկանալի, որ ազգերը, յանձինս իրենց ամէնէն արդարամիտ, ամէնէն խաղաղասէր, ամէնէն յառաջադէմ ու միջազգայնական թւերի, այն է՝ յանձինս ազգային ընկերվար կուսակցութիւնների՝ քով-քովի գան և միատեղ պայքարի պայմանները գծեն:

† Դեռ 1904-ին, առաջին անգամը լինելով, Պարիզի մէջ տեղի ունեցաւ Ռուսիոյ ազգութեանց ընդդիմադիր տարրերի հաւաքոյթը, ուր կնքուեց այսպէս կոչուած «Յեղափոխական Իւլն» ընդդէմ ազգահալած ուսական ցարիզմի: *)

Մի քանի տարի վերջ, ուսական Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութեան գլխաւորութեամբ, տեղի ունեցաւ նոյն կուսակցութեան հասարակական դաւանանքին փարած ազգային ընկերվար հոսանքների համագումարը, ուր պաշտօնապէս քննութեան առնուեցաւ—թէ՛ տեսական ու թէ՛ գործնական

*) Տե՛ս «Իրօչակ»-ի հրատարակութեամբ «Յեղափոխական Իւլն» գրքոյկը:

առումով — ազգային հարցը: **)

Ապա, 1916-ին, Լոզանի մէջ կայացաւ ուսական մի շարք ազգութիւնների համագումարը (ֆինների, էստերի, լատիշների, լիտուիցիների, չէրքէզների, զաղստանցիների, լեհների, վրացիների, թաթարների, մալորոսների, բելորուսների, ղըրղըզների, թաթարների, խիւացիների ու բուխարեացիների), որոնք ամենքն էլ, այս կամ այն ձևի տակ, իրենց ազգային անկախութեան պահանջներն էին առաջադրում:

Այս բոլորը, ինչպէս ասացինք, անհետեւանք չէր կարող անցնել ուսական մարքսիզմի համար:

«Մարդ ուղղակի ապշում է տեսնելով, — կրկնենք Վ. Արարատսկիի խօսքերը, — թէ ի՞նչ հսկայ քայլերով կարող է բարեշրջուել «ամբողջացած», ոսկրացած դօզմը անողոք ճակատագրի՝ այսինքն իրական կեանքի հարուածների տակ, որին խաբել չի յաջողուում ոչ մի

**] Այս համագումարը, որքան յիշում ենք, տեղի ունեցաւ 1908-ին (կամ 1909-ին) Պետրօքրատում (կամ մերձակայ վայրերից մէկում): Համագումարը տպագրած ձեւով լոյս ընծայեց իր աշխատութեանց մօտ 100—150 էջնոց արձանագրութիւնները: Համագումարին պաշտօնապէս մասնակցում էր նաև Զ. Յ. Դաշնակցութիւնը: Արձանագրութեան մէջ ամփոփուած է Դաշնակցութեան ըմբռնումը ազգային հարցի մասին:

խորամանկութեամբ) : *)

Ահա ճիշտ այս պատճառով, դեռ 1913-ին, Կրակովի մէջ լոյս է տեսնում Լէնինի խմբագրութեամբ ուսական մարքսիզմի բոլշեւիկեան հատուածի «Յայտագիր»-ը ազգութեանց մասին :

Այդ «Յայտագրով» բոլշեւիկեան հոսանքը (այն ժամանակ անունով դեռ եւս... սոցիալ-դեմոկրատ) պաշտպան էր կանգնում ազգութեանց անկախութեան և դէմ գուրս գալիս պետութիւնների ամէն կարգի կցումի—քողարկուած կամ քողագերծ—ձրգտումներին :

Զուգընթացաբար նոյնանման խմորումներ տեղի էին ունենում և ուսական մարքսիզմի միւս թևի, մենշեւիզմի ծոցում, սակայն այս անգամ վարէն՝ ստորագաս ազգերից սկսելով, ուր անկախութեան ձգտումը յետագային պիտի արտայայտուէր այնքան յայտուած, այնքան կրքոտ ու մոլեգին ձեով :

Կրակովեան «Յայտագիր»-ն ազգային հարցի ըմբռնման դարձակէտը դարձաւ (անշուշտ տեսականօրէն) բոլշեւիկների համար, որոնք յետագային, իշխանութեան տիրանալուց յետոյ, մանաւանդ հոկտեմբերեան դա-

*) Արարատսկի.— «Բաղարական կուսակցութիւնները Ռուսաստանում», Հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, 1906, Ժընեվ, էջ 33.

ւաղրութեան սկզբնական շրջանին, այլևս անկարող էին այն ուղիով չգնալ, ինչ գծել էին իրենց համար վերջին տարիների վերիվարումները :

Պակաս ուշագրաւ չէր այս տեսակէտից նաև Ուիլսընեան 14 կէտերից բաղկացած պատգամագիրը, որ գալիս էր զուգահեռաբար բուրժուական աշխարհի կողմից ազգային շարժումներին յարգանքի տուրքը տալու և օրինականացնելու նրանց անկախական ձգտումները :

Գաղափարապէս սա մի մեծ յաղթանակ էր, որ պատմութեան համար անհետեանք անշուշտ չպիտի անցնէր :

Լսենք, սակայն, ազգային տեսարան բուշեւիկ Ստալինին .

«Այն վստահութիւնը,—ասում է Ստալին,— որ մենք ձեռք բերինք հոկտեմբերին, կը կորցնենք մինչև վերջին մնացորդները, եթէ մենք բոլորս չզինուենք այն նոր, կրկնում եմ, վելլկորոս ազգամոլութեան դէմ, որ անձեռանդիմակ սողում է, կաթիլ առ կաթիլ ծծուելով մեր աչքերի ու ականջների մէջ, կաթիլ առ կաթիլ փոխելով ոգին, ամբողջ հոգին մեր աշխատաւորների, որոնց կարող ենք այլևս բնաւ չճանաչել :

«Ահա այդ վտանգը, ընկերներ, մենք պէտք է, որ երկու թաթերի վրայ պառկեցնենք, հակառակ պարագային մեզ սպառնում է մի հեռանկար, երբ մենք զրկուած կը լի-

նենք այն վստահութիւնից, որ ճնշուած ազգերը տածում են դէպի մեզ, մի հեռանկար, որ բաժանում պիտի ստեղծի այդ ազգութիւնների և ռուսական պրոլետարիատի միջև, մի հեռանկար՝ որ ճեղքուածք պիտի ստեղծի մեր զիկտատուրայի ամբողջական կառուցուածքի մէջ:

«Չմոռանանք, ընկերներ, որ երբ ծածանուող գրոչակներով մենք դուրս եկանք կերենակու դէմ և տապալիցիւնք ժամանակաւոր կառավարութիւնը, մենք յաղթեցինք, ի միջի այլոց, նաև նրա համար, որ մեր ետեւն ունէինք ստորադաս ազգերի վստահութիւնը, որոնք իրենց ազատագրումը սպասում էին ռուսական պրոլետարիատից:

«Չմոռանանք, որ եթէ մենք կողջակի, Դենիկինի, Վրանգէլի և Իւզինիչի թիկունքում այսպէս կոչուած «օտարազգիներ» չունենայինք, եթէ չունենայինք այդ ճնշուած ազգերին, որոնք քայքայում էին այդ զօրավարների թիկունքը... մենք թերևս այդ զօրավարներից և ոչ մէկին չկտցահարէինք»:^{*}

Աւելին:

Ստալինը պարաստ է ստորադաս ազգերը սիրաշահելու համար Ռուսաստանի անունը

^{*} Ստալինի ճառը Կոմմունիստական Կուսակցութեան XII-րդ Համագումարին («Ինի», 1924, Ապրիլ 25):

վերացնելու ոչ միայն Ռուսաստանի վրայից (որ, ինչպէս ծանօթ է, արդէն... վերացուած է), այլ և Համառուսական Կոմմունիստական Կուսակցութեան:^{*}

«Այդ, — ասում է Ստալին, — ռէակցիա է ընդդէմ վելիկորոս ազգայնամոլութեան: Այդ — ազգութիւնների ինքնապաշտպանութիւնն է: Պէտք է սպառել այն ժառանգութիւնը, որ կասեցնում է ժողովրդների զարգացումը: Առաջին լուծումը — միջոցներ ձեռք առնել, որ խորհրդային իշխանութիւնը հանրապետութիւնների մէջ լինի հասկանալի և հարազատ, որ խորհրդային իշխանութիւնը մեզ մօտ լինի ոչ միայն ռուսական, այլ և ազգամիջեան»:

Ահա թէ ազգային դատերի պաշտպանութիւնն ի՞նչ բնոյթ ու կերպարանք ստացաւ այդ դատերի բաժայտ հակաակորդների ու

^{**} Բ շէիկեան Ռուսաստանը նախապէս կոչուում էր Ռ. Ս. Ֆ. Ս. Ր. (այս սինգ գրերից առաջինը նշանակում էր Ռուսաստան), այժմ նա կոչուում է Ս. Ս. Ս. Ր. (այս գրերից եւ ոչ մէկը Ռուսաստանին չի վերաբերում): Բոլշէիկեան կուսակցութիւնը նախապէս կոչուում էր Ռ. Կ. Պ. (այս գրերից առաջինը նշանակում է Ռուսաստան), այժմ ենթադրուում է նրան տալ Կ. Պ. Բ. Ս. Ս. Ր. անունը (եւ սակայն այս գրերից եւ ոչ մէկը Ռուսաստանին չի վերաբերում):

թշնամիների մօտ :

Կեանքի երկամթեայ թելադրանքի տակ , հոկտեմբերեան դաւադիրները , որ հրապարակ էին եկել ընկերային կնճիռները լուծելու , հարկադրաբար մէկ կողմ ձգեցին այդ կնճիռները և ընկեցին ազգային դատերի լուծման :

Համայնավար գաղափարներից ժառանգութիւն մնաց նեպը , տնտեսական նոր քաղաքականութիւնը , որ մասնատիրական ինստիտուտի և դասակարգային շահագործման մի այլանդակ ու անսանձ սխտեմ է , իսկ ազգային քաղաքականութիւնից՝ մի ամբողջ գաղափարական կառուցուածք :

Բողեւելիները նախապէս անկախ յայտարարեցին Ռուսիոյ այն բոլոր ազգերը (մինչև իսկ ամէնէն աննշան , ազգայնօրէն գրեթէ չինքնորոշուած . գիր ու գիրք չունեցող) , որոնք ցանկացան լինել ազատ և անկախ (մինչև իսկ ամէնէն աննշան տարածութեան վերայ) :

«Որհնորդային Ռուսաստանը , ուր բոլշեւիզմի սկզբունքներն ազգերի ինքնորոշման մասին այնքան լայնօրէն գործադրուեցին կեանքի մէջ , — ասում է անդրկովկասեան ակադեմիայի բոլշեւիկներից Փիլիպպ Մախարաձէն , — դարձել է այն աւետեաց երկիրը , դէպի ուր ուղղուած է հայեացքը բովանդակ մարդկութեան , աշխարհի բոլոր ճնշուած ժողովրդների :

«Այնպիսի ժողովրդներ , ինչպիսիք են՝ շրջապատները , կալմուկները , չուվաշները , վոտեակները , եակուտները , կորեյները , մարիյները , որոնց մասին պատմութիւնը վաղուց ի վեր մոռացել է արդէն , իսկ եթէ յիշել է , ապա նրա համար միայն , որ ցոյց տայ նրանց այլասեռումը , աստիճանանական փչացումն ու ոչնչացումը , — ահա այդ բոլոր ժողովուրդներն ու շատ ուրիշները խորհրդային Ռուսաստանի կողմից արդէն հանուած են այդ անտանելի վիճակից և կոչուած կատարելագործուելու , լուսաւորուելու և իւրացնելու գիտութեան , փիլիսոփայութեան եւ արուեստի բոլոր գրաւունքները : Այս բոլորը ցոյց է տալիս , որ ազգային հարցի լուծման բանալին վերջապէս գտնուած է» : *)

Ֆիլիպպ Մախարաձէն քաջուամ է միայն աւելացնել , որ այդ բոլոր ժողովուրդներն ու նաև շատ ուրիշները յայտարարուած են միաժամանակ «անկախ» և բոլշեւիկեան դեկրետներով «տիրացած» իրենց երկրներին , իւրաքանչիւրը ստանալով մէկական «խորհրդային ընկերվար հանրապետութիւն» , ուսական մեծ հանրապետութեան մէջ :

Քաջուամ է , որովհետեւ դիւրին է շրջա-

*) Փ . Մախարաձէ . — «Մենշեւիկեան կուսակցութեան ղիկատաւորան Վրաստանում» , (ռուս .) , 1921 , Մոսկուա , էջ 81 — 82 :

զին ու կալմը կին, չուվաշին ու վոտեակին, եակուտին ու կորելին պատասպարել «լուսա-
 ւորութիւն» և «կատարելագործութիւն» խօս-
 քերի տակ, խօսքեր՝ որոնք ոչ սկիզբ ունեն և ոչ
 էլ վախճան, բայց հեշտ չէ բոլշեւիզմը պա-
 տրասպարել այն ծիծաղաշարժ «անկախութեան»
 հովանիի տակ, որ խորհրդային իշխանութիւ-
 նըն անթիւ դեկրետներով նետել է «հանրա-
 պետութեան» գործարանի, Ռուսաստանի վը-
 րայ:

Սակայն առայժմ կարեօրն այս չէ:

Տեւալ դէպքում, մեզ հետաքրքրող հարցի
 լուսարանութեան տեսակէտից, ամէնէն ու-
 շագրաւն ու նշանակալիցը այն է, որ մարք-
 սիզմի ամէնէն ուղղափառ հատուածը՝ ռու-
 սականը, և ռուսական մարքսիզմի ամէնէն
 «հաւատացեալ» թեւը՝ բոլշեւիզմը, այսքան
 զիջող դարձաւ ազգային հարցում և այսքան
 արմատական՝ նրա լուծման ժամանակ:

Ահա էականն այս է:

Հիմնականն այն է, որ մարքսիզմը վերջ-
 նականօրէն տեղի տուաւ, ոտքից մինչև գը-
 լուխ զինաթափուեց և միանգամ ընդմիջաւ իր
 ւիղացիայի ենթարկուեց այս առաջնակարգ
 ու կարեւորագոյն կէտում:

Այլևս հին երգերը չկան:

Հողմերին յանձնուած են այն տխմար
 բանդագուշանքները, թէ 12 միլիոնից պակաս
 ազգեր կան, որոնք «եզագլուխ» են, «բէակ-

ցիոն», «խղճուկ» ու «անօգնական» և, հե-
 տեւաբար, չքանալու դատապարտուած, իսկ
 ազգեր էլ կան, որոնք կոչուած են իրենց
 «ազատարար» տիրապետութիւնն ուրիշների
 վրայ տարածելու:

Հողմերին յանձնուած է նաև մարքսեան
 այն տեսութիւնը թէ՛ ազգութիւնը պատմա-
 կան սոսկ մի անցողակի կաթեգորի է, որ
 համայնավար կարգերի հետ մէկտեղ դատա-
 պարտուած է վերջնական չքացման:

Աշխարհի առաջին «համայնավար» երկիրը, և
 այն էլ «ուղղափառ մարքսիստների» միջոցով,
 կեանքի կոչեց—անչուշտ տեսականօրէն, առ-
 այժմ խօսքով—բոլոր մեծ ու փոքր ազգերը և
 խօսքով էլ սրբագործեց նրանց անկախական
 ձգտումները:

Իսկ այս չափազանց մեծ յաղթանակ է
 արդէն:

Վերջին տարիների վերիվայրումների հե-
 տեւանքով Ռուսիոյ ազգերը մէկ այնպիսի թա-
 փով ասպարէզ եկան, որ այլևս անկարելի էր
 հաշուի չնստել նրանց բաղձանքների հետ:

Գէթ ռազմագիտօրէն, գէթ ժամանակա-
 ւորապէս ու խաբուսիկ խօսքերով հարկաւոր
 էր տեղի տալ և ազգային պայքարների յոր-
 ձանուտը նետուել: Մի քայլ, որ այնքան հա-
 մարձակ ու յանդուգն ձեռով կատարեցին ռուս
 բոլշեւիկները:

Իսկապէս:

Ո՞վ կարող էր նախասել, թէ փրկչական 1917 թ ., Ռուսաստանի մէջ, ռուս մարքսիստներին նախաձեռնութեամբ «ընկերային» աննախընթաց յեղաշրջում պիտի սկսուի, որը պիտի վերջանայ հակաընկերային նեպոլ և տեղի տայ ազգային դատերի տեսական լուծման :

Ո՞վ կարող էր սպասել, թէ փրկչական 1924 թւին, նոյն Ռուսաստանում (. . . «համայնավար» Ռուսաստանում) պետական կառուցուածքն այսօրուայ կերպարանքը պիտի ստանայ :

Անշուշտ և՛ ոչ ոք :

Թարմացնենք ընթերցողի յիշողութեան մէջ, զէթ անցողակի կերպով, Ռուսիոյ պետական կեանքին վերաբերող մի քանի հիմնական տեղեկութիւնները, որպէսզի միանգամայն յստակ ու պարզ լինի այն ահռելի անդունդը, որ կայ մարքսիստական երէկուան ու մարքսիստական այսօրուան միջև :

Ի՞նչ է ներկայացնում այսօր իրենից այդ հսկայական բոլշեւիկեան կալուածքը, ըստ բոլշեւիկեան սահմանադրութեան :

Նախապէս Ռուսաստանը բաժանուած է չորս անկախ հանրապետութիւններէ՝ բուն Ռուսաստանի, Բելոռուսիայի, Ուկրայնայի և Անդրկովկասի :

Իր հերթին Անդրկովկասը ներկայացնում է իրենից դաշնակցային մէկ հանրապետութիւն, որի կազմի մէջ են մտնում երեք «անկախ»

հանրապետութիւններ՝ Վրաստան, Ադրբէյջան և Հայաստան :

Անդրկասպեան երկրի մէջ կան երկու «անկախ ժողովրդական հանրապետութիւններ»՝ Բուխարա և Նիվա : Իսկ այս հիմնական միաւորներից բացի ֆուսցած ամբողջ տարածութիւնը բաժանուած է մօտ երեք տասնեակ «անկախ», «կիսանկախ» ու «ինքնավար» երկրների ու շրջանների վրայ :

Օրէնսդրօրէն այս ամբողջ կալուածքը երկազալատեան պետական մարմնի ձեռն ունի :

Առաջին պալատը Համառուսական Գործադիր Կոմիտէն է, որ ընտրուում է համառուսական խոհուրդների համագումարից, իսկ երկրորդ պալատը Ազգութիւնների Խորհուրդն է, որ ընտրուում է ազգութիւնների կողմից, նրանց խորհրդային գործադիր մարմինների միջոցով :

Ահա այն անձնատուութիւնը, որին ենթարկուեց «մարքսիստական» բոլշեւիզմը «համայնավար» Ռուսաստանում :

Այսպիսի տուրք և՛ ոչ մէկ երկրում և՛ ոչ մէկ իշխանութեան կողմից ցարդ ազգութիւններին չէ տրուել :

Եւ առաջին անգամն է, որ դաշնակցային պետութիւն է ստեղծուում, որի օրէնսդրական մարմնի երկրորդ պալատը պաշտօնապէս ու ճեւակագործէն բաղկացած է ազգութիւնների ներկայացուցիչներից :

Այս ձևով չէր ստեղծուած ու չէ ստեղծուած տապալուած և գոյութիւն ունեցող պետութիւններէից և ոչ մէկի օրէնսդրական մարմինը :

Ահա թէ անողոք կեանքը ինչ գծերի վերայ դրեց մարքսիզմը ռուսական հողի վրայ :

Մենք գիտենք անշուշտ, որ սա մի աննախընթաց կեղծիք է, որ կատարուում է ազգութիւնների հետ : Գիտենք, որ սա մի այլանդակ դաւադրութիւն է այն ժողովրդների դէմ, որոնց օգտագործում է Ռուսաստանի իր աշխարհակալ նպատակների համար : *

Գիտենք, որ գարչանք բերող սին, դատարկ ու անբովանդակ խօսքեր են միայն «անկախութիւն», «ազգերի խորհուրդ», «դաշնակցային Ռուսիա» և այլ նման դարձուածքները :

Ու գիտենք նաև, որ յոգնել է այս խօսքերէից մինչև իսկ ճարպիկ դերակատարը՝ ինքը խորհրդային Ռուսիան՝ և արդէն «Ազգութիւնների Կեանքը» պաշտօնաթերթում (հրատարակուում է Մոսկուա) լուրջ դժգոհութիւններ են լրսւում այն մասին, որ «արդէն սկսել է զարգանալ այլազգիների ազգասիրութիւնը» և որ ժամանակն է «լիկւիդացիայի ենթարկելու ինքնավարութիւն խաղալը» : **)

*) Չափազանց ուշադրաւ են այս տեսակէտից այն ճառերը, որոնք արտասանուել են Կոմմունիստական Կուսակցութեան 8-րդ համագումարին և ապա դրուած են նոյն համագումարի մեծահասոր արձանագրութիւնների մէջ :

***) «Պոսլեդնիա Նովոստի», Պարիզ, 1 Մայիս, 1924 :

Սակայն, տուեալ դէպքում, մի անգամ էլ կրկնենք, մեզ հետաքրքրող հարցի քննութեան տեսակէտից, միանգամայն անարժէք են այս դժգոհութիւններն ու դաւադրութիւնները, այն կեղծիքն ու խաբեբայութիւնները, որ գործադրուում են ստորադաս ազգերի նրկատմամբ :

Կարևորը, էականն ու նշանակալիցը այն է, որ բոլշեւիզմը գաղափարօրէն, տեսականապէս երէկ ժխտելով ժխտում էր ազգութիւններն ու նրանց դատերը, իսկ այսօր ընդունելով ընդունում է թէ՛ մէկը և թէ՛ միւսը :

Սրդ, այսպիսի պայմաններում ո՞վ է արդեօք լիկւիդացիայի ենթարկուողը և ո՞վ՝ լիկւիդատորը :

Եւ ծիծաղելի չէ՞ միթէ, որ այսքան հիմնական ու լիակատար պարտութիւնից յետոյ ռուսական մարքսիզմը, յանձինս բոլշեւիկեան հոսանքի, խօսք է անում Դաշնակցութեան «լիկւիդացիայի» մասին նա՛և ազգային հարցում :

Սակայն դեռ չարունակենք մեր հետախուզութիւնը, որովհետև բոլշեւիզմը Չխախտուել է պայքարի ո՛չ միայն այս, այլ և մընացած կէտերում :

Ասացինք արդէն, որ Դաշնակցութեան եւ իր հակառակորդների հասարակական դաւանանքի տարբերութեան երկրորդ կէտը դառ-

նում էր այն խնդրի շուրջը, թէ ի՞նչ վերաբե-
րում պիտի ունենալ արդեօք պետականու-
թեան հարցում :

Աւելորդ չէ թերեւս գէթ մի քանի խօսքով
կանգ առնել Դաշնակցութեան յատկապէս այս
հարցում ունեցած ծրագրային ըմբռնման վրայ :

Կուսակցութիւնն իր ինը համագումար-
ների կողմից միայն չորս անգամ է իր ծրա-
գիրը պաշտօնապէս լոյս ընծայել :

Մէկ—1894-ին, երկրորդ անգամ՝ 1907. ին,
երրորդ անգամ, հազիւ նշմարելի փոփոխու-
թեամբ, 1909-ին և վերջին անգամ, անկախու-
թեան հռչակումով, 1919-ին :

Ծրագրերից զատ, կուսակցութեան պաշտօ-
նական դաւանագրերի թուին են պատկանում
նաև 1905-ի հանրածանօթ «Նախագիծ»-ն
ու 1909 թ. V-րդ Ընդհանուր Ժողովի կողմից
ընդունուած «Յայտագիր»-ը :

Անորոշ է Հ. Յ. Դաշնակցութեան պե-
տական-քաղաքական այն պահանջը, որ ձե-
ւակերպուած է 1894-ին լոյս տեսած ծրագրի
մէջ :

Ուստի կանգ առնենք այն դաւանագրերի
վրայ, որոնք իրենց մէջ ո՛չ երկիմաստ դարձ-
ուածք ունեն և ո՛չ էլ անորոշ միտք :

Ահա Դաշնակցութեան քաղաքական դա-
ւանանքն, ըստ «Նախագծի» :

«Յեղափոխութեան կռուի միջոցով Հ. Յ.
Դաշնակցութիւնը ձգտում է դաշնակցական (Ֆե-

դերատիւ) ուսմկավարական մի կազմակեր-
պութեան—ամբողջ Անդրկովկասի համար—ա-
մենալայն տեղական ինքնավարութեամբ» : *)

Վիէննայի Ընդհանուր Ժողովից (1907 թ.)
ընդունուած ծրագրի մէջ այդ պահանջը ձեւ-
ակերպուած է շատ աւելի որոշ ու յստակ ձե-
ւով :

Իերենք մեր հայրենիքի երկու հատուած-
ներին վերաբերող կտորները առանձին-ա-
ռանձին :

ԹՐԳԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

1.— Թրքա-Հայաստանը կը կազմէ Օս-
մանեան Սահմանադրական պետութեան
անբաժան մասը, հիմնուած տեղական լայն
ինքնավարութեան վրայ :

Օսմանեան կեդրոնական կառավարութիւնը
հիմնուած ժողովրդական ուսմկավար ներ-
կայացուցչութեան սիստեմի վրայ, կը վա-
րէ պետութեան ընդհանուր գործերը—ար-
տարին քաղաքականութիւն, գօրք, դրամ,
մարս, բոլորտարութիւն եւ հեռագիր—պե-
տական միւս գործերը ձգելով տեղական
ինքնավար շրջաններուն :

2.— Թրքա-Հայաստանը, Թուրքիոյ միւս
շրջաններուն պէս, իբրև օսմանեան դաշնակ-
ցական պետութեան մէկ մասը, ազատու-

*) «Նախագիծ», Ժընեվ, 1906, էջ 5.

թիւն կը վայելէ իր ներքին գործերուն մէջ : Անոր բոլոր շրջաններն ու համայնքները ներքին խնդիրներու մէջ նոյնպէս կը վայելեն տեղական ինքնավարութիւն :

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

4.— Անդրկովկասեան ռամկավար հանրապետութիւնը կը կազմէ Ռուսաստանի դաշնակցական հանրապետութեան անբաժան մասը, կապուած անոր հետ պետական ինքնապաշտպանութեան, դրամական սխտեմի, մաքսի և արտաքին քաղաքականութեան խնդիրներով :

5.— Ներքին բոլոր գործերուն մէջ Անդրկովկասեան հանրապետութիւնը անկախ է, ունի իր կեդրոնական Երեսփ. Ժողովը, ընտրուած՝ ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի և համեմատական քուէարկութեան դրութեամբ, Իւրաքանչիւր անդրկովկասցի, որ անցուցած է 20 տարին, առանց սեռի խտրութեան իրաւունք ունի ընտրելու :

6.— Անդրկովկասը Ռուսաստանի համապետական Երեսփ. Ժողովը կը ղրկէ իր ներկայացուցիչները՝ ընտրուած քուէարկութեան նոյն դրութեամբ :

7.— Անդրկովկասեան հանրապետութիւնը կը բաժնուի նահանգներու (canton), որոնք կը վայելեն տեղական ամենալայն ինքնավարութիւն, Համայնքները նոյնպէս կը

վայելեն ինքնավարութիւն՝ զուտ համայնական խնդիրներու մէջ» : *)

1909 թւի «Յայտագրով» Դաշնակցութիւնը, ցանկանալով որոշապէս ընդգծել ապակենտրոն պետական սխտեմի սկզբունքը, յայտարարում էր հետեւեալը .—

«Դաշնակցութիւնը վճռականապէս ետ մղելով անջատողական ձգտումները, պիտի տքնի վերակազմել երկրի քաղաքական և տնտեսական կարգերը, Օսմանեան պետութեան ամբողջութեան մէջ, հիմնուած բոլոր շրջաններու տեղական լայն ինքնավարութեան վերայ և ամրապնդուած բոլոր տարրերու դաշնակցական կապերով» :

Իսկ 1919-ի IX-րդ Ընդհանուր Ժողովը գումարուելով արդէ՛ն անկախ Հայաստանի մայրաքաղաքում, Երեւանում, վերաքննութեան ենթարկեց նուազագոյն ծրագրի քաղաքական պահանջներն իրենց ընդհանուր ըսկզբունքային առումով և իրականութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւնից յետոյ՝ ընդունեց հետեւեալ փոփոխութիւնը նաև ծրագրի մէջ .—

«Հ. Յ. Դաշնակցութեան IX-րդ Ընդհանուր Ժողովը հանդիսաւորապէս նուիրագործելով անկախ և միացեալ Հայաստանի յայտարարութիւնը և անոր ամբողջացման ու

*) «Ծրագիր», 1910, Ժընեվ, էջ 17—19.

զարգացման ձգտելով բոլոր զօրութեամբ, ժողովրդավար (դեմոկրատիկ) հանրապետութեան հիման վրայ, որոշեց՝

Ա.— Չեղեալ համարել կուսակցութեան նուազագոյն ծրագրի Ռուսահայաստանի եւ Տաճկահայաստանի վերաբերեալ քաղաքական պահանջները :

Բ.— Ամբողջական ծրագրի վերաքննութիւնը կը յետաձգուի յաջորդ Ընդհ. Ժողովին» : *)

Յաջորդ Ընդհ. Ժողովը նախատեսնուած թուականին այլեւ տեղի չունեցաւ :

Այսպիսով, Դաշնակցութեան ղաւանագրերի մէջ, իբրև հիմնական քաղաքական պահանջ, մնաց ապակենտրոնացման սկզբունքը — Հայաստանի երկու հատուածների նկատմամբ — որի համար Դաշնակցութիւնը պայքարեց շուրջ երեք տասնամեակ :

Ֆեդերալիզմի գաղափարը չի ժխտում անկախութեան սկզբունքը, ինչպէս և իր հերթին անկախութեան պահանջը չի բացասում Ֆեդերացիայի գաղափարը. ընդհակառակը, սրանք երկուսն էլ գաղափարական միեւնոյն հունից ձիւղաւորւող արտայայտութիւններ են, որոնք իրական կեանքի մէջ, այս կամ այն ձևի տակ, զուգորդոււմ և իրենց ներ-

*) Ibid., էջ 17-ի յաւելուածը :

դաշնակ լուծումն են գտնոււմ :

Երէկ անազատ Հայաստանը ֆեդերացիայի միջոցով կարող էր ձգտել անկախութեան, ինչպէս և վաղուան ազատ Հայաստանը, պատմական անցքերի այլ դասաւորումով, անկախութեան միջոցով կարող է ու պիտի ձգտի համայն մարդկութեան դաշնակցային յորինուածքին :

Սրանք հասկացողութիւններ են, որոնք ոչ թէ ժխտում, այլ, ինչպէս ասացինք, լրացնում են իրար, ինչպէս փոխաշարձաբար լորացնում են իրար նաև ազգութեան ու միջազգայնութեան գաղափարները :

Սակայն նիւթից չչեղուելու համար չընդարձակուենք այս ուղղութեամբ :

Դաշնակցութիւնը պարզ ու որոշակի, անփոփոխ ու անդաւաճան կերպով մօտ մի երրորդ դար պայքարեց այս սկզբունքների համար, որոնց կմախքը ծրագրային ձևակերպոււմով քիչ վերը տուինք :

Այդ ձևակերպման մէջ տեղ ունեն գտած և՛ ապակենտրոնացման գաղափարը (որոշ ուստատիկ ձևով) և՛ անկախութեանը (անորոշ ու զինամիկ ոգիով) :

Որովհետև Դաշնակցութեան նուազագոյն ծրագրի քաղաքական պահանջը նուազագոյն չափով է արտայայտուել ո՛չ այն պատճառով, որ Դաշնակցութիւնը սկզբունքօրէն ղէմ է եղել անկախ Հայաստանի գոյութեան :

Այդ պայմանների շարքում յատուկ ուշադրութեան արժանի էին հետեւեալները:

Դաշնակցային պետութիւնները, ինչպէս յայտնի է, ստեղծուած են կամ ամբողջացած և կենտրոնացած պետութեան տարրալուծուածով, ինչպէս, օրինակ, այդ տեղի է ունեցել Հարաւային Ամերիկայի հանրապետութիւնների կեանքում, կամ թէ, ընդհակառակը, մինչ այդ անկախ և անջատ կեանք ունեցող մասնիկները միանալով՝ ստեղծուած են մի և միացեալ դաշնակցային պետութիւն, ինչպէս այդ կատարուել է, օրինակ, Հիւսիսային Ամերիկայում կամ Զուլիցերիայում:

Թէ մէկ և թէ միւս դէպքում անհրաժեշտ է, որ՝

1. — Անկախ պետական մարմիններն իրենց տնտեսական զարգացման հակումներով և մշակութային ու ընկերային պայմանների հետեւանքով՝ կարիք զգան ընդհանուր քաղաքական կեանքի:

2. — Մի չափով կապուած լինեն ընդհանուր անցեալի պատմութեամբ:

3. — Եւ ունենալով ինքնուրոյնութեան ուժեղ կենտրոնախոյս ձգտում, ունենան նաեւ նոյնքան ուժեղ կենտրոնաճիւղ հակումներ:

Ահա այս պայմանները նկատի ունենալով, Դաշնակցութիւնը, համազործակցաբար այլ ուժերի հետ, պիտի ձգտէր, նախ՝ խորտակել երկու հզոր բռնապետութիւնները՝ թուրքա-

կան և ուսսական, և ապա՝ նրանց փլատակները վրայ վերստեղծել Թուրքիան և Ռուսիան՝ դաշնակցային հիմերով:

Այս կը լինէր ամէնէն ապահով, ամէնէն հաստատուն և ամէնէն վստահելի ճանապարհը թէ՛ պէպի Հայաստանի անկախութիւնը և թէ՛ դէպի համայն մարդկութեան մէկ ու ներդաշնակ ֆեդերատիւ ընտանիքը:

Արդ, ի՞նչ վերաբերում ունէր ընդհանրապէս մարքսիզմը և յատկապէս ուսսականը դէպի այս գաղափարները երէկ և ի՞նչ վերաբերում նա ունի այսօր:

Արդեօք կարողացա՞ւ նա իր երբեմնի զիրքերը պահել, թէ պայքարի նաեւ այս կէտում պարտուեց մարքսիզմը, տեղի տուաւ անփառունակ ձեռով եւ ենթարկուեց վերջնական ու լիակատար լիկաիդիայի:

Մարքսիզմը, ինչպէս յայտնի է, ջանք չինայեց ֆեդերացիայի գաղափարը վարկաբեկելու համար:

Ազգութեան սկզբունքի հետ միաժամանակ նսեմացնուած ու հարածուած էր նաև ֆեդերացիայի գաղափարը:

Այս պայքարի սկիզբը նորէն դրել էր «Կոմմունիստական Մասիֆեստ»-ը:

«Գիտական ընկերվարութեան» հիմնադիրներն իրենց հանրաձանօթ աշխատութեան մէջ գալիս էին այն միտքը հիմնաւորելու, որ ժողովրդական տնտեսութիւնը, այլ խօսքով՝

արտադրական ուժերը, աւելի որոշ՝ կապիտալիստական տնտեսածէն իրեն յատուկ ներքին օրէնքների ուժով ձգտում է կենտրոնացման, զուգընթացաբար, այդ նոյն կենտրոնացման միջոցով, փորելով մասնատիրական իրաւակարգի գերեզմանը և հարթելով ընկերվար հասարակարգի ուղիները:

Տնտեսութեան կենտրոնացման նախադրեալը, ըստ մարքսեան տեսութեան, ենթադրում էր կենտրոնացման հակումներ նաև այդ նոյն տնտեսութեան այսպէս կոչուած «վերնաշէնքի», պետական-իրաւական յօրինուածքի մէջ:

Եւ այդ պատճառով մարքսիզմը. «ճշմարտօրէն» ծառայած լինելու համար ընկերվարութեան, իր յեղափոխական պարտականութիւնն էր համարում, զինուելով «գիտութիւն» բոլոր զէնքերով, պայքարել ապակենտրոն ձգտումների և ընդհանրապէս ֆեոդալիստական գաղափարի դէմ:

Յետագային Մարքսը այս նոյն մտքերը էլ աւելի ուժգին և հմտալից ձևով հիմնաւորեց իր «Կապիտալ»-ի մէջ, որի ազդեցութիւնն այնքան հզոր եղաւ գրեթէ բոլանդակ աշխատաւոր մարդկութեան վրայ:

Այդ չորս գրքերից բաղկացած եռհատոր աշխատանքի հիմնական նպատակներից մէկն էր ապացուցել, թէ արտադրական ուժերը, ինչպէս ասացինք, մէկ ներքին հզոր ու տա-

րերալին մղումով կենտրոնացման են ձգտում մարդկալին տնտեսութեան բոլոր ասպարէզների մէջ՝ գիւղերից քաղաք և քաղաքներից գիւղ:

Կապիտալիստական տնտեսութեան ուժն ու թուլութիւնը դիւալեկտիկօրէն գտնոււմ էր այս երկրամաստ առանձնայատկութեան մէջ. ուժը նրա համար, որովհետև կենտրոնացման միջոցով մասնատիրական տնտեսութիւնը ըստանում էր աւելի՛ փարթամ, աւելի՛ ճոխ, աւելի՛ գունեղ ու հարուստ կերպարանք, և թուլութիւնը պարզ այն պատճառով, որ այս ճոխացման հետ զուգընթաց այդ նոյն տնտեսութիւնը, անկախ իր կամքից, փորում էր իր գերեզմանը:

Եւ այսպէս նրա համար, որովհետև, ըստ Մարքսի, շատ աւելի դիւրին էր պայքար տանել յանուն ընկերվար դաւանանքի յաղթութեան, երբ դասակարգային բախման մէկ բեւեռին կենտրոնացած են հսկայական սեփականազուրկ բազմութիւններ, իսկ միւս բեւեռին, ընդհակառակը, տեղաւորուած են հարստութեամբ թէեւ հզօր, սակայն թուլ քիչ սեփականատէրեր, որոնք ջլատուած դրութեամբ փոշիացած են ժողովրդական տրտեսութեան թոյլ ու տկար, փոքրածաւալ ձեռնարկների մէջ:

Մարքսի տրամաբանութեան երկաթեայ մուրճի տակ չկարողացաւ իր հաւատարակչու-

թիւնը պահել Լիբիանիստ (մեծը), որ, զօհ գընալով իր երեւակայութեան, կարծեց, թէ մի գեղեցիկ օր, ամենագոր «կենտրոնացման» անպարտելի ցանկութեամբ, մինչև իսկ բոլոր հարստութիւնները պիտի գիզուեն «մի լեւզլորդի» ձեռքերի մէջ, որին «պերեզման գլորելն» ու ընկերվարութեան դրօշը պարզելը դիւրին գործերից ամէնէն գիւրինը պիտի լինի:

Եւ որովհետեւ «ի սկզբանէ էր տնտեսութիւն և տնտեսութիւնն էր կենտրոնացում եւ կենտրոնացումը—ամէն ինչ»,—այդ պատժառով մարքսիզմը վճռականապէս ծառայեալ բոլոր ապակենտրոն հակումների դէմ:

Չմոռանանք ասել, որ մարքսիզմը պայքարում էր ապակենտրոնացման «մանր-բուրժուական» ու «հակաընկերվարական» ձրգտումների դէմ նաև այն նկատումով, որ այդ հակումները, պետականութեան հարցում, շլատում են պրոլետարիատի ուժերը և նուազեցնում նրա յաղթանակի հաւանականութիւնները. իսկ հակառակ ձգտումները, ընդհակառակը, հզօրացնում և բազմապատկում են այդ յաղթանակի շանսերը:

Ահա այս ու նման մի շարք պատճառաբանութեամբ մարքսիստական հոսանքն ոգի ի բոլին պայքարում էր ընկերվարական բանակի այն թևի դէմ, որ կանգնած էր պետական ապակենտրոն-ֆեդերատիւ տեսակէտի վրայ:

Այս սկզբունքների մասին չարտայայտ-

ուենք ըստ էութեան:

Ո՞րն է նախընտրելին արգեօք՝ կենտրոնացած պետական սիստեմը, թէ՞ ապակենտրոնը, —այս հարցերին պատասխանելը դուրս է այսօրուայ մեր նպատակից:

Սակայն գէթ մէկ-երկու փաստ բերենք պայծառօրէն ցոյց տալու համար այն խախտւած դիրքը, որ մասնաւորաբար ուսական մարքսիզմը ունէր երէկ, այն բուն ու պայքարոտ օրերին, և ունի այսօր, իր գաղափարական պարտութեան շրջանին, դէպի ֆեդերացիայի սկզբունքը:

«Պրոլետարիատի գործը չէ քարոզել ֆեդերալիզմ և ազգային ինքնավարութիւն, —ասում է «Իսկրա»-ն («Կայծ»), ուստի սոցիալ-դեմոկրատիայի կենտրոնական օրգանը, —պրոլետարիատի գործը չէ առաջադրել այն տեսակ պահանջներ, որոնք անխուսափելի կերպով առաջ կը բերեն պահանջ՝ ստեղծելու ինքնավար, դասակարգային պետութիւն:

«Պէտք է լինել մետաֆիզիկ-իդէալիստ՝ քաղաքական մտածողութեամբ և բուրժուանացիոնալիստ՝ սոցիալական հոգեբանութեամբ, —ասում է նոյն «Իսկրա» ն, —որպէսզէ—մի քաղաքական կուսակցութեան պարտաւորութիւններ որոշելու հարցում—մեկնել «ֆեդերատիւ սկզբունքից», ենթարկելով նրան պրոլետարիատի դասակարգային շահերը... Այդ շահերի տեսակէտից մեզ երբեմն պէտք է լի-

նուժ և պէտք կը լինի ապագայում ևս ցոյց տալ պրոլետարիատին, որ այսպէս կոչուած «ազգայնական» շահերը, որոնց անունով հրաւիրուժ են նրան ձգտել բաժանման կամ ֆեդերացիայի, ոչ այլ ինչ են, բայց եթէ ազգային բուրժուազիայի շահերը: *)

Այժմ յիշատակենք զէթ մէկ հատիկ քաղուածք այն յօդուածներից, որ յատկապէս ռուս բոլշևիկներն էին նուիրուժ ֆեդերացիայի ցաւոտ հարցին:

Գրուժ է կուսակցութեան պաշտօնական ու կենտրոնական բերանը («Նովայա ժիզն», թ. 6), գրուժ է այն հին ու վաղեմի օրերին, երբ «ֆեդերացիայի սկզբունքը» պաշտպանելը՝ հակաընկերվարական և հակայեղափոխական եօթը մահացու մեղքերից մէկն էր համարուժ մարքսիզմի կարծիքով:

«Սոցիալ-դեմոկրատիան, պրոլետարիատի կռուի ղեկավարը, իր սկզբունքներով կենտրոնացման կողմնակից է և ղէմ է ֆեդերալիզմին:

«Փոքրաթիւ մեծ պետութիւնների երևան գալը բազմաթիւ մանր պետութիւնների տեղ, որոնք բաժանուժ են միմիանցից քաղաքա-

*) «Իսկրա», 1903 յուլիս 13 և 1904 մայիս 13 (Ռուս աղբիւրները չունենալով մեր ձեռքի տակ, քաղուժ ենք Մ. Վարանդեանի «Շտանքներ»-ից) էջ 135—136):

կան և մաքսային պատնէշներով՝ նպաստեց կապիտալիզմի առաքելութեան՝ արդիւնաբերութեան միացնելու, կենտրոնացնելու և հասարակականացնելու գործում, մի հանգամանք, որ ինքնին նախապատրաստուժ է ընկերվարութեան յաղթանակը: Նպաստեց նոյնպէս կազմակերպած պրոլետարիատի ուժեղ և մեծ բանակների երևան գալուն, առանձին, մանր զօրախմբերի փոխարէն, որոնք կարող էին զբամատիրութեան և միահեծանութեան ղէմ միայն պարտիզանական կռիւ մղել:

«Այդ պատճառով յետադիմական քաղաքականութիւն կը լինէր ձգտել վերակազմելու կտրտուժ և մասամբ արգէն ջնջուժ ազգային սահմանագծերը»: *)

Պարզ է կարծուժ ենք այն չափազանց ժխտական վերաբերումը, որ կար ռուսական մարքսիզմի մենչևեիկեան ու բոլշևիկեան երկու հատուածների կողմից ղէպի ապակենտրոնացման՝ ընդհանրապէս և ֆեդերացիայի գաղափարը՝ մասնաւորաբար և առանձնապէս:

Քաղուժ քննելը կարելի է բազմապատկել, առանց խնդրի էութիւնը փոխելու:

Ռուսական սոցիալ-դեմոկրատիան և նրա

*) Ա. Շահխարունեան, — «ֆեդերալիզմ և դեմոկրատիզմ», էջ 97 (Թարգմանութիւնը ռուսերէնից իւրթին լինելով, քաղուժ ենք լեղուական որոշ շտկումներով):

ամէնէն անհաշտ ըողչելիկեան թեւ տարիներ շարունակ պայքարեց բոլոր այն հոսանքների դէմ, որոնք իրենց հասարակական դաւանանքի անկրկնաքարերից մէկն էլ ֆեդերացիայի գաղափարն ունէին:

Իսկ որ ամէնէն ուշագրաւն է, նաև այս հարցում մարքսիզմի հայ համհարզները եղան ամէնէն հետեոյականը և պայքարեցին ամէնէն թունտա ու մոլի զէնքերով Գաշնակցութեան ու «նրա ֆեդերացիայի» դէմ:

Պաշտօնաթերթ «Նոր Կեանք»-ի էջերը զարգարուած էին յօդուածներով, ուր «ուղղափառներից ուղղափառները», հայ սոցիալ-դեմոկրատները աքնուէին ապացուցել, որ ազգայնական ցնորքներ են մասնաւորաբար Անդրկովկասի ֆեդերացիայի մասին եղած Գաշնակցութեան ծրագրային առաջարկներն ու սկզբունքային ըմբռնումները:

Իսկ հարցը համապետական ծաւալով քննութեան առնելով, նրանք այնքան հեռուններն էին դնում, որ, կազմակերպչօրէն մայր կուսակցութեան միանալու համար, պայման էին դնում, որ ռուս սոցիալ-դեմոկրատիան միանալով ընդմիջտ ջնջի իր ծրագրից մինչև իսկ անմիտ ու անարիւն «ազգային ինքնորոշման իրաւունք» կոչուած գարծուածքը:

Ահա այսքան «հետեոյական» էին այս մարդիկ:

Միշտ աւելի ուղղափառ, քան ինքն ուղ-

ղափառութիւնը և միշտ աւելի մարքսիստ, քան ինքը Մարքսը:

Սակայն այս ամէնը — երէկ էր:

Այսօր նաև այս հարցում փոխուել է շատ բան, հիմն ի վեր շրջուել է ամէն ըմբռնում, սկսուել է մի խուճապահար նահանջ, մի չընաշխարհիկ լիկւիդացիա, որի նմանը գաղափարների պարտութեան աշխարհում շատ քիչ է պատահում:

«Սոցիալ դեմոկրատիան չի պարտաւորւում միշտ և ամէն անգամ պաշտպան կանգնելու միջկէս իսկ (որքան զգոյշ... Վ. Ն.) գաշնակցային սկզբունքին տարբեր ազգերի միջև միևնոյն պետութեան սահմաններում, — ասում է «Իսկրա»-ի յաջորդը, մենչեիկեան «Սոց. - Վեստնիկ»-ը. ընդունելով ժամանակակից կենտրոնացած տնտեսութեանց պահանջները, նա իրեն իրաւունք է վերապահում այս կամ այն դէպքում պաշտպանելու (նամուզումի ուժով. (որքան մեղմ... Վ. Ն.) առաւելութիւնները քիչ թէ շատ կենտրոնացած պետութեան, որը երաշխաւորում է իւրաքանչիւր ազգի ինքնավարութիւնն ու կուլտուրական զարգացման ազատութիւնը»:^{*})

Մենք տուինք ամէնէն խիստ արտայայտութիւնը, որ վերջին տարիները պետականութեան

^{*}) «Սոցիալիստ. Վեստնիկ», թ. 3, 1921, Մարտ 1, էջ 2:

թեան ծրագրային պահանջը, որի դէմ նա
այնքան թունալից ձևով պայքարել է տաս-
նամեակներ շարունակ:

Այս կապկային ընդօրինակութիւնը յըս-
տակօրէն ցուցադրելու համար մի անգամ էլ
յիշատակենք այն հիմնական սկզբունքները,
որոնք իբրև հիմ էին ծառայում մեր կուսակ-
ցութեան դաւանադրի (նուազագոյն բաժնի)
քաղաքական պահանջներին:

Գաշնակցութեան ըմբռնումով՝

1. — Անդրկովկասը պիտի լինէր միացեալ
և ամբողջական հանրապետութիւն, դաշնակ-
ցային կապերով կապուած Ռուսաստանի հետ:

2. — Անդրկովկասը պիտի ունենար իր
կենտրոնական Երեսփոխանական Ժողովը
(Սէյմ), իսկ համառուսական Երեսփոխանա-
կան Ժողովին պիտի մասնակցէր իր յատուկ
պատգամաւորներով, ընտրուած հինգանդամ
քւէարկութեամբ:

3. — Իր հերթին Անդրկովկասը պիտի բա-
ժանուէր շրջանների, ստեղծելով առաջին
հերթին երեք ամփոփ ազգային միաւորներ
(վրացական, թաթարական և հայկական), իսկ
այդ երեքի մէջ՝ նաև առանձին կանտոններ: *)

Արդ, ի՞նչ վերաբերում ունեցաւ գործնա-

*) Տե՛ս Ա. Մանթաթունեանի ուշադրաւ և արժե-
քաւոր մէկ ուսումնասիրութիւնը՝ «Անդրկովկասի
վարչական բաժանումը» խորագրով [ուստերէն]:

կան կեանքի մէջ դէպի այս սկզբունքները
մարքսիստական բաշխելիզմը, որ երէկ, յա-
նուն «ընկերվարութեան», վճռականապէս
մերժում էր այս ամէնը:

Աւելի որոշ:

Ի՞նչ է ներկայացնում իրենից այսօրուան
Անդրկովկասը, որ գտնուում է կոմ. մունիստա-
կան կուսակցութեան բացարձակ տիրապե-
տութեան տակ:

Ահա Անդրկովկասը, ըստ այդ կուսակ-
ցութեան որոշման.

1. — Անդրկովկասը միացեալ և ամբող-
ջական հանրապետութիւն է (բայց ոչ բամ-
կավար, այլ... խորհրդային) և դաշնակցա-
յին կապերով կապուած Ռուսաստանի հետ:

2. — Անդրկովկասը ունի իր կենտրոնա-
կան Երեսփոխանական Ժողովը (որը Սէյմ ա-
նունը չի կրում, այլ կոչւում է... կենտրո-
նական Գործադիր Կոմիտէ), իսկ համառու-
սական Երեսփոխանական Ժողովին (կարգա-
կենտրոնական Գործադիր Կոմիտէ) մասնակ-
ցում է իր յատուկ պատգամաւորներով, որոնց
թիւը ճշտուում է ազգաբնակչութեան քանա-
կով:

3. — Իր հերթին Անդրկովկասը բաժան-
ւում է երեք հիմնական միաւորների (վրաս-
տան, Ադրբէյջան և Հայաստան), իսկ այս միա-
ւորների մէջ էլ ստեղծուած են որոշ «ինքնա-

վար» կանտոններ : *)

Տարաբախտաբար , մեր ձեռքի տակ այժմ չունենք մի չափազանց ուշագրաւ աշխատանք , որ բոլշեւիկները լոյս ընծայեցին Անդրկովկասին տիրանալուց մօտ մէկ տարի վերջ , 1921-ին , Թիֆլիզում : **)

Մի ծաւալուն «Ժողովածու» , ուր բուշեւիկ ակնաւոր վարիչներից մէկը քննութեան առնելով Անդրկովկասի ապագայ պետական կառուածքի խնդիրը , նոյնութեամբ կրկնում էր այն , ինչ իր հիմնադրման օրից քարոզել է Դաշնակցութիւնը :

Ահա թէ ինչ կերպարանք առաւ այն կատաղի պայքարը , որ այնպէս կրքոտ ու բուռն ձևով տարւում էր կենտրոնացման հարցերի շուրջ :

Արդ , պայքարող երկու հոսանքներից ո՞ր մէկն արդեօք գաղափարօրէն տեղի տուաւ ,

*) Վրաստանի «սոցիալիստական խորհրդային հանրապետութեան» երկրամասի վրայ կան երեք «ինքնավար հանրապետութիւններ» — Աբխազիայի , Սլաւիայի և Վերին Օսեթիայի . Ազրբեյջանի երկրամասի վրայ՝ նոյնպէս երեք «ինքնավար հանրապետութիւններ» — Նախիջևանի , Ղաբարբաղի և Քիւրդիստանի . իսկ Շայաստանի ճակատագիրը դեռ եւս ճշտուած չէ , արօյհետեւ նա տակաւին իր մասնատման շրջանն է ապրում :

**) Սյդ «Ժողովածուն» հայ բոլշեւիկներէ անդրանիկ ազրական» արտադրութիւնն էր , չբերթէ մամուլութեամբ ուղղուած «հակայեղափոխական» Դաշնակցութեան դէմ :

պարտուեց ու վերջնականապէս զինաթափ եղաւ նաև այս կէտում :

Յաղթանակի խօսքը ո՞ր մէկին է պատկանում այն երկու ուժերից , որոնցից մէկը կանգնած էր ապակենտրոն տեսակէտի վրայ , իսկ միւսի համար կենտրոնացումից դուրս — չէր փրկութիւն :

Իսկապէս ո՞վ է լիկւիդացիայի ենթարկւողը եւ ո՞վ՝ լիկւիդատորը :

Սակայն մինչև այս հարցին պատասխանելը , չմոռանանք զէթ մի քանի խօսք ասել այն այլանդակ կեղծիքի , այն ստոր խաղերի ու դաւադրութեանց մասին , որ թոյլ է տալիս իրեն բոլշեւիզմը նաև այս խնդրում :

Ճիշտ չէ , ի հարկէ , թէ մարքսիզմի փտաւոր վիժուածքը՝ ուսական բոլշեւիզմը իրապէս և անկեղծօրէն կողմնակից է ազգերի ազատութեան և նրանց դաշնակցային կառուցուածքին :

Այն դովքը , որ այսօր Կրեմլի դաւադիրները շռայլում են ստորադաս ժողովրդների անկախութեան և ֆեդերալիզմի հասցէին , այդ — պարզապէս անակնկալ տուրք է , որ խուճապահար բանակն իր նահանջի ճանապարհին տալիս է յաղթական թշնամուն : Տալիս է , յետագային զրժելու և վատագոյն ձևով մահացու հարուածը տալու համար իրեն հարուածող թշնամուն :

Դեռ մինչև հոկտեմբեր , իսկ առաւել ևս

հոկտեմբերից յետոյ, բոլշևիկները յատակօրէն տեսնում էին, որ «ծածանուող դրօշակներով» կարող են կռուի դուրս գալ և յաղթել, եթէ միայն «խրենց ետեւն ունենան ըստօրադաս ազգերի վստահութիւնը, որոնք երբեք ազատագրուելը սպասում էին ոռւսական պրոլետարիատից» :

Ահա այս «յաղթանակը» տանելու մտահոգութեամբ է, որ նրանք արիւնառատ կըռիւնների ճակատագրական շրջանին գեկրետներով «պաշտպան» կանգնեցին ազգերի ե՛ւ ազատութեան և՛ անկախութեան : Իսկ յետոյ, երբ այդ «յաղթանակը» շահուած էր արդէն, երբ ոռւսական ներքին ճակատները ջախջախուած ու ճզմուած էին, երբ այլևս վտանգ չկար արտաքին աշխարհից, ահա այդ ժամանակ, փոխանակ խօսքը՝ գործ և դեկրետները՝ իրականութիւն դարձնելու, նրանք սկսեցին այդ խօսքերն ու խոստումները, իբրև «բուրժուական նախապաշարումներ», հեզնել ու ծաղրել :

Իսկապէս. ի՞նչ խոստացաւ բոլշևիկը Ռուսիոյ անազատ ազգերին և ի՞նչ տուաւ նա նրանց :

Նա խոստացաւ ամէն ազատութիւն նըրանցից ամէն մէկին, իսկ կաշկանդեց անխւտիր ամենքին, բռնութեան ամէնէն դաժան և ամէնէն անարդ շղթաներով :

«Հակառակ թղթի վրայ դրոշմուած բո-

լոր ինքնավարութիւններին և ֆեդերացիաներին, — արդարօրէն նկատում է մարքսիստական «Ոնկերվարական կրարեր», *) — և՛ ոչ մէկ երկիր ամբողջ աշխարհի մէջ չի կառավարում այնպէս քմահաճ միահեծանութեամբ միևնորս և մէկ հատիկ կենտրոնից, ինչպէս անում է Մոսկուան ամբողջ խորհրդային Ռուսաստանի նկատմամբ :

«Ի՞նչ կեանք բռնապարտիզը», կրկիննք կառուցիւ խօսքերը, ուրիշ կերպ չէր էլ կարող վարուել, եթէ մինչև իսկ կամենար :

Նա նպատակ էր դրել «ծովերից — ծով» մասնատուած ու բաժան-բաժան եղած երկրերը «ծովերից — ծով», ինչպէս երազում էր Օրթօնիկիձէն. վերականգնել և ստեղծել նախկին «մէկ, անբաժան և ամբողջական» Ռուսաստանը :

Եւ այդ պատճառով է, որ հոկտեմբերեան դաւադրութիւնից ժօտ երեք տարի վերջ, 1920-ի նոյեմբեր 28-ին, Մոսկուայի մէջ արտասանած իր ճառի մէջ, Տրոցկին, խորհրդային Ռուսաստանի գինուած ուժերի դերադոյն վարիչը, բարոյական ոյժ էր դրում իր մէջ Հայաստանի անկախութեան խորտակման անհրաժեշտութեան մասին հետեւեալ շընական յայտարարութիւնն անելու :

*) «Սոց. Վեստնիկ», 1923, թ. 13, էջ 1, (Ռուս. Սոց. Ներսկրատիայի կենտրոնական շաբաթաթերթը, հրատ. Բեքլին) :

այն է 1918—1921 թուերին խորհրդային հանրապետութիւններն ունէին զինական դաշնակցութիւն, որ նրանց հնարաւ որութիւն տրւաւ պահպանելու իրենց զոյութիւնը :

Բ. — «խորհրդային անկախ հանրապետութիւնների զինակցութեան այս շրջանին հետեւում է դիպլոմատիական միասնական ֆրոնտի շրջանը՝ 1921—1922 տարիները . . . Դիպլոմատիական այս միացեալ քաղաքականութիւնը ձեւականօրէն ամրացւած է յատուկ համաձայնութեամբ, որ կնքուեց Ճենովայի նախօրեակին Մոսկուայում ութ անկախ խորհրդային հանրապետութիւնների և Ռ. Ս. Գ. Խ. Հ. միջև :

Գ. — «Անցնելով միութեան երկու՝ օտարմական և զիպլոմատիական փուլից՝ այսօր խորհրդային հանրապետութիւնները կանգնած են տնտեսական միութեան փուլի առաջ, որի անհրաժեշտութիւնը այսօր, աւելի քան երբեւեցէ, դզալի է» : *)

Ահա ամբողջացման այն փուլերը, որ 1917. ի հոկտեմբերից մինչև այսօր անցել է Ռուսաստանը :

Քիչ վերք իշատակած մէջբերումները տրւապագրութեան տալուց մի քանի շաբաթ վերջ, նոյն թւի նոյեմբերին, Բազում տեղի ունեցաւ, նախ Անդրկովկասեան հանրապետու-

*) «Նորր», գիրք թ. 1, 1922, Երևան, էջ 238 :

թիւնների վերջնական միացումը և ապա՝ քիչ վերջ, գեկտեմբերին, Մոսկուայում՝ խորհրդների «համագաշակցային» համագումարում՝ վերջնականապէս մկրտուեց նաև «մէկ, անբաժան և ամբողջական Ռուսաստանը» :

Ահա թէ ինչ պիտի հասկանալ «ռազմական, դիպլոմատիական եւ տնտեսական փոսյերի միացում» դարձուածքի տակ, եթէ փորձելու լինենք այդ դարձուածքը տալ հայերէն լեզուով :

Ահա թէ ինչպէս պիտի հասկանալ «խորհրդային Սօցիալիստական Հանրապետութիւնների Միութիւնը ունի կամաւոր բնասորութիւն» շնական և անպատկառ յայտարարութիւնը :

Մի քիչ աւելի շօշափելի ձևով պատկերացնելու համար այդ «կամաւոր միութեան» «տնկախ անդամների» փոստական և իրաւական վիճակը, յիշատակենք այստեղ գէթ մէկ հատիկ փաստ :

Իսկապէս ի՞նչ ձևով են բաժնուած իրաւունքներն ու պարտականութիւնները Ռուսիոյ «իրաւահաւասար և հաւասարածէք» անդամների չնաչխարհիկ ընտանիքի մէջ :

Ռուսաստանի բովանդակ իշխանութիւնը բաժնուած է 15 կոմիսարիատների (կարդա՛ նախարարութիւնների) :

Այս 15 վարչութիւնները բաժնուած են 3 խմբի՝ հինգական նախարարութիւններով :

Պէտք է միանգամայն յստակ ու որոշ կերպով ըմբռնել այս կէտը, որովհետեւ ճիշտ այստեղ էլ թաղուած է շան գլուխը:

Ի՞նչ է իրենից ներկայացնում Ռուսաստանը:

Մի մեծ և ընդարձակ կալուածք, որի միակ տէրն ու տնօրէնը կոմմունիստական կուսակցութիւնն է:

Այն զիկտատուրան (չմոռանա՛նք... բանւորա-գիւղացիական ??? . . Մինչև իսկ կրկնելը ձանձրալի է), որ գոյութիւն ունի Ռուսաստանում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ կուսակցութեան զիկտատուրան ամբողջ Ռուսաստանի ու նաև, ի հարկէ, պրոլետարիատի վրայ:

«Կայ փաստերի տրամաբանութիւնը, — ասում է մի՛շտ «Իրիզախ» ու մի՛շտ վախկոտ Չինովիեվը, Գ. Միջազգայնականի պարագլուխը: Եթէ մենք ուղում ենք կառավարել երկիրը, ապա մենք չենք կարող ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք ճեղքուած են առաջացնում զիկտատուրայի հարցում և զուգահեռ իշխանութիւններ ստեղծում պետութեան մէջ, Որովհետեւ մենք հիմնում ենք երկաթեայ զիկտատուրայի սկզբունքի վրայ, այդ պատճառով էլ յարաբերութիւնները պետութեան և կուսակցութեան միջև պիտի լինեն այն, ինչ որ եղել են մինչև այսօր (այսինքն՝ պետութիւնն ամբողջութեամբ ենթակայ կուսակցութեան. վ. ն.): Կուսակ-

ցութիւնն իշխանութեան զուլն է, ամէն ինչի ոգին: Այս հարցերի մասին եղած ոչ-բուշելիկեան հասկացողութիւնները մնացորդները պիտի մաքրել ու սրբել երկաթով»:

Նոյնիմաստ յայտարարութիւնների շարանը կարելի է անվերջ երկարել, առանց հակառակը փաստող ապացոյցներ բերելու:

Մակայն գոհանանք միայն այսքանով:

Չինովիեվի խօսքերի մէջ խտացրուած ձեւով տրուած են կոմմունիստական կուսակցութեան պետական և հասարակական ըմբռնումները:

Ճիշտ է միանգամայն Գ. Միջազգայնականի վարիչը, որ «երկութեայ զիկտատուրայի սկզբունքի» վրայ հիմնուած պետութեան մէջ չեն կարող ստեղծուել «զուգահեռ իշխանութիւններ», իսկ առաւել ևս . . . մի քանի տասնեակ «անկախ» պետութիւններ: Չեն կարող ստեղծուել նաև նրա համար, որ «երկութեայ զիկտատուրա»-ն պատկանում է ոչ թէ ամբողջ կուսակցութեան, այլ այդ կուսակցութեան վարիչ խմբակին, որը բաղկացած է ընդամէնը մի քանի հոգուց:

Ամերիկեան Ծերակոյտին ներկայացրած իր տեղեկագրի մէջ Լաճը, հիմնուելով կառավարութեան տրամադրութեան տակ եղած միանգամայն ստոյգ տուեալների վրայ, Ռուսաստանի ազգաբնակչութեան ընդհանուր քանակը 1922. ի համար հաշուում էր մօտ 13

միլիոն, որից միայն 0,3 տոկոսն է պատկա-
նում կոմմունիստական կուսակցութեան, այլ
խօսքով՝ 380,000 հոգի: Սակայն ամէնէն ու-
շագրաւն այն աստիճանաւորումն է, որ գո-
յութիւն ունի այդ 0,3 տոկոսի մէջ:

380 հազարից 362 հազարը պարզ ան-
զամներ են, 18 հազարը պատասխանատու
պաշտօնեաներ: Այս 18 հազարից 8 հազարը
կարեւոր զիրքերում, այս 8 հազարից 11 հո-
գի բոլոր պաշտօնների մէջ, իսկ այս 11 հո-
գուց 3 հոգի՝ զիկատաւորներ:

Այլ կերպ էլ բուլշեւիկեան բռնապետու-
թեան մէջ անկարելի է պետութեան գլուխը
մնալ և մենատիրօրէն ու անպատիժ ձեռով
տարիներ շարունակ իշխել:

Միայն ծայրայեղ կենտրոնացումը կարող
է հնարաւորութիւն տալ, որ մի խումբ դա-
ւադիրներ, կոթնած սուինի ուժին, կոռա-
վարեն աշխարհի մէկ վեցերորդը միեւնո՛յն
կենտրոնից, միեւնո՛յն բռունցքով ու միև-
նո՛յն ձեւերով:

«Ճեղերացիա» և «անկախ հանրապետու-
թիւն» խօսքերը պարզ հեզնանք են Մոսկուա-
յի իշխանութեան ենթակայ ազգերի հասցէին,
որոնք տառապում են «երկաթեայ զիկատա-
տուրայի» արիւնոտ ճիրաններում:

Ու ճիշտ այս նկատումներով է, որ միւ-
շե իսկ պարզ անցագրային թոյլտուութեան
խնդիրը (արտասահմանից Անդրկովկաս մըտ-

նելու համար) վերապահուած է ոչ թէ Անդր-
կովկասի «անկախ հանրապետութեանց» Մի-
ութեան լիազօր ներկայացուցիչներին, այլ...
Ս. Խ. Հ. Միութեան *) (կարգա՛՛ Ռուսաստա-
նին):

Այո, մինչև իսկ այսքան աննշան հար-
ցում չի կարող կենտրոնացումը այսքան ալ-
լանդակ չափերի չհասնել մի երկրում, ուր
բազմութիւնները, տարբեր ազգերն ու ժողո-
վուրդները — կամազուրկ և իրաւազուրկ — լծ-
ուած են անասնական կեանքի և պարտաւոր-
ուած լուռ ու անխօս կրելու մի խումբ բռու-
նաւորների արիւնոտ ու դաժան լուծը:

Այսպէս ուրեմն:

Ռուսաստանի պետական կոռուցումը
հարցը միանգամայն անարժէք խնդիր է, ու-
րովհետեւ երկրի բովանդակ իշխանութիւնը
պատկանում է կոմունիստական կուսակցու-
թեան, ուր տիրում է, ուր ջի կարող ջտիրել
բացարձակ մենատիրական ու լիակատար կեն-
տրոնացում:

Կոմմունիստական կուսակցութեան ներ-
սը գոյութիւն ունեցող կարգերին համապա-
տասխանում են երկրի մէջ իշխող պետական
կարգերը, կառավարելու սիստեմին՝ կառավա-
կան սիստեմը, իսկ կուսակցական գոյութեան

*) Անդրժողովոմխորհի 1924-ի Մարտ 15-ի
որոշումը:

ձեռքին՝ պետական ձեռք :

Պետութիւնը արտագոյում է իր մեջ այն պատկերը, որ ունի իշխող կուսակցութիւնը :

Առաջինը չի կարող վերջինից տարբերուել, որովհետեւ պետութիւնը չէ որ գունաւորում է պետական կեանքը, այլ, ընդհակառակը, կուսակցութիւնն է, որ ընթացք եւ ուղղութիւն է տալիս ամբողջ հասարակական կեանքին, պայմանաւորում իրմով երկրի բովանդակ կեանքը և, ի հարկէ, նաև պետականը :

Եւ որովհետեւ կոմմունիստական կուսակցութեան մէջ իշխում է աննախընթաց ու անսահման կենտրոնացում, որովհետեւ դաւադիրներն «երկաթեայ դիկտատուրան» պահուում է այս անիծակուռ կենտրոնացման գընով, ուստի բնական է և հասկանալի, որ ճիշտ յար և նման կենտրոնացում էլ գոյութիւն պիտի ունենայ, գոյութիւն ունի ու չի կարող չունենալ նաև պետութեան մէջ :

Եւ ճիշտ այս նկատումներով է նաև, որ բոլշևիկեան կուսակցութեան յառաջիկայ է Համագումարին առաջարկ է մտցրուած «անուանափոխել Վրաստանի, Հայաստանի եւ Ազրբէյջանի կոմմունիստական կուսակցութիւնները՝ խորհրդային հանրապետութիւնների միութեան կամուրջատական (բուլշ.) կուսակցութեան Վրաստանի, Հայաստանի, Ազրբէյջանի կազմակերպութիւնների :

«Միաժամանակ անուանափոխել ազգային կուսակցութիւնների կենտրոնական կոմիտէները՝ կոմմունիստական կուսակցութեան Վրաստանի, Հայաստանի, Ազրբէյջանի կոմիտէների» : *)

Այս անուանափոխութեամբ գոյութիւն ունեցող կացութեան մէջ ոչինչ, ի հարկէ, չի փոխուում, սակայն աւելի հարազատօրէն տրուում է այն փաստական վիճակը, որ կայ իրականութեան մէջ :

Հայաստանի, Վրաստանի և Գնացեալ «անկախ» հանրապետութիւնների մէջ չկան ու չեն եղել «անկախ կոմմունիստական կուսակցութիւններ», այլ եղել են ու կան բռնակալ կենտրոնի կամքը ներկայացնող կամակատար ստրուկների գրասենեակներ, որոնք այժմ ու ժամանակաւորապէս «կազմակերպութիւններ» անունը պիտի կրեն :

Այս «կազմակերպութիւններն» ի վերջոյ պիտի ունենան, ի հարկէ, այն ճակատագիրը, ինչ դաժին ընկաւ հրէական «Բունդ»-ին (սոցիալ-դեմոկրատ), որ նոյն կուսակցութեան 1920-ի ժԲ. Համագումարի որոշմամբ որդեգրեց Գ. Միջազգայնականի գաւանանքը, համոզուած, որ «ընկերվարական մշակութային

*) «Մարտակոչ», 17 Մայիս, 1924, 112 թիւ. (ընդգծումները «Մարտակոչ»-ինն են) :

ձեռքն՝ պետական ձեռք :

Պետութիւնը արտացոլում է իր մեջ այն պատկերը, որ ունի իշխող կուսակցութիւնը :

Առաջինը չի կարող վերջինից տարբերուել, որովհետեւ պետութիւնը չէ որ գունաւորում է պետական կեանքը, այլ, ընդհակառակը, կուսակցութիւնն է, որ ընթացք եւ ուղղութիւն է աւելիս ամբողջ հասարակական կեանքին, պայմանաւորում իրմով երկրի բովանդակ կեանքը և, ի հարկէ, նաև պետականը :

Եւ որովհետեւ կոմմունիստական կուսակցութեան մէջ իշխում է աննախընթաց ու անսահման կենտրոնացում, որովհետեւ դաւադիրների «երկաթեայ դիկտատուրան» պահուում է այս անիծակուռ կենտրոնացման գընով, ուստի բնական է և հասկանալի, որ ճիշտ յար և նման կենտրոնացում էլ գոյութիւն պիտի ունենայ, գոյութիւն ունի ու չի կարող չունենալ նաև պետութեան մէջ :

Եւ ճիշտ այս նկատումներով է նաև, որ բոլշեակեան կուսակցութեան յառաջիկայ է Համագումարին առաջարկ է ժողովուրդ «անուանափոխել Վրաստանի, Հայաստանի եւ Ազրբէյջանի կոմմունիստական կուսակցութիւնները՝ խորհրդային հանրապետութիւնների մութեան կոմունիստական (բուլշ.) կուսակցութեան Վրաստանի, Հայաստանի, Ազրբէյջանի կազմակերպութիւնների :

«Միաժամանակ անուանափոխել ազգային կուսակցութիւնների կենտրոնական կոմիտէները՝ կոմմունիստական կուսակցութեան Վրաստանի, Հայաստանի, Ազրբէյջանի կոմիտէներին» : *)

Այս անուանափոխութեամբ գոյութիւն ունեցող կացութեան մէջ ոչինչ, ի հարկէ, չի փոխուում, սակայն աւելի հարազատօրէն տրուում է այն փաստական վիճակը, որ կայ իրականութեան մէջ :

Հայաստանի, Վրաստանի և մնացեալ «անկախ» հանրապետութիւնների մէջ չկան ու չեն եղել «անկախ կոմմունիստական կուսակցութիւններ», այլ եղել են ու կան բռնակալ կենտրոնի կամքը ներկայացնող կամակատար ստրուկների գրասենեակներ, որոնք այժմ ու ժամանակաւորապէս «կազմակերպութիւններ» անունը պիտի կրեն :

Այս «կազմակերպութիւններն» ի վերջոյ պիտի ունենան, ի հարկէ, այն ճակատագիրը, ինչ ռաժին ընկաւ հրէական «Բուռը»-ին (սոցիալ-դեմոկրատ), որ նոյն կուսակցութեան 1920-ի ԺԲ. Համագումարի որոշմամբ որդեգրեց Գ. Միջազգայնականի դաւանանքը, համոզուած, որ «ընկերվարական մշակութային

*) «Մարտակոչ», 17 Մայիս, 1924, 112 թիւ. (ընդգծումները «Մարտակոչ»-ինն են) :

ստեղծագործութիւնը հնարաւոր է միայն ազգային լեզուի և ազգային մշակոյթի միջոցով, պայմանով, որ աշխատաւորական զանգուածները իրապէս ազատօրէն ստեղծագործեն և իրական հսկողութիւն ունենան մշակութային ասպարէզում գծուած աշխատանքի բոլոր օրգանների վրայ», *) իսկ դեռ տարին չբոլորած, 1921-ի յունուարի 25-ին, Գ. Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտէի որոշմամբ առաջարկ ստացաւ վերջնականապէս հրաժեշտ տալու իր ցնորքներին և միանգամ ընդմիջած ձուլուելու ու չքանալու համառուսական Կոմմունիստական Կուսակցութեան պըղտոր խառնարանին մէջ:

Չեւականօրէն ահա այս ճակատագիրն է սպասում նաև մնացեալ մեծ ու փոքր «Բունդ»-երին, որոնք փաստօրէն վաղուց ի վեր ձուլուած են կենտրոնի հետ, ենթակայ են նրան և զրկուած իրաւունքից անկախաբար որևէ քայլ առնելու:

Սակայն մեզ հետաքրքրող հարցի լուսաբանութեան տեսակէտից կարևորն առ այժմ այս չէ:

Հիմնականը, բնորոշն ու էականը այն է, որ բոլշեւիզմը տասնամեակներ շարունակ պայ-

*) «Սոց. Վեստնիկ», 1921, Մարտ 1, Թ. 3, էջ 3:

քարեց ֆեդերալիզմի և ապակենտրոն գաղափարների դէմ, ժահր ու ժանդ թափեց նրանց հասցէին, որոնք պաշտպան կանգնեցին այդ սկզբունքներին, և ի վերջոյ, պարտուած ու ջարջախուած վիճակում, թողեց իր վաղեմի դիրքերը, լքեց իր դէնքերը և անձնատուր եղաւ մեր դարու լուսաւոր և յառաջադէմ գաղափարներին:

Կարևորն ահա այս է:

Հիմնականն ու բնորոշը այն է, որ գաղափարօրէ՛ն, տեսականապէ՛ս բոլշեւիզմն այլ ևս անոյժ է ապակենտրոնացման, ֆեդերալիզմի ու ստորագաս ազգերի անկախութեան պահանջների դէմ ծառանալու, թէեւ գործնական կեանքի մէջ, իր դոյութիւնը քարչ տալու մը տահոգութեամբ, նա հարկադրուած է դաւել ու դաւադրել շարունակ այդ գաղափարների դէմ:

Արդ, այսպիսի պայմաններում, նորից ենք հարցնում, մեզնից ո՞վ է լիկւիդատորը և ո՞վ լիկւիդացիայի ենթարկւողը:

Սակայն այս հարցին վերջնական պատասխան տալուց առաջ դեռ շարունակենք հետապնդել մեր սնանկ, թշուառ ու մերկացած թշնամուն, որի խօսքի միակ ոյժը գտնուում է իր սուկինի ծայրին:

Իրապէս. ի՞նչ կատարուեցաւ մարքսիզմի գաղափարական բերդի մնացած դիրքերում:

Մասնաւորաբար հողային հարցի մէջ ի՞նչ ըմբռնում կար երէկ և ի՞նչ է մնացել այսօր:



Պակաս կատարի չէր այն պայքարը՝ որ ընկերվար մտքի երկու թևերի միջև տարուում էր հողային հարցի շուրջ։

Դաշնակցութիւնն այս կէտում գրեթէ ամբողջութեամբ իւրացրեց այն տեսակէտներն ու ըմբռնումները, որ տարիներին ընթացքում արծարծել ու մշակել էր սոցիալիստ յեղափոխականների կուսակցութիւնը։

Սակայն կարեորն աւելի շուտ ոչ թէ ագրարային հարցի այս կամ այն կերպ լուծումն էր, այլ հիմնականն ու էականը այն վերաբերմունքն էր, որ տուեալ քաղաքական հասանքն ունէր զէպի գիւղացիական աշխատաւոր զանգուածը։

Իսկ այս սահմանների մէջ Դաշնակցութիւնն աւելի քան ճշտած ունէր իր գիրքը գէպի հայ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը, զէպի աշխատաւոր գիւղացիութիւնը։

Համարձակ կարելի է յայտարարել, որ ընկերվար բանակի տարբեր թևերի միջև եղած հակադիր ըմբռնումների անկիւնաքարը կազմում էր այսպէս կոչուած հողային հարցը։

Դադափարական այն դպրոցը, որին յարած էր Դաշնակցութիւնը՝ գտնուում էր որ.

1. — Աշխատաւոր մարդկութեան երազած ապագայ հասարակարգին պիտի ձգտի ու ձրգտում է հասնել ոչ միայն քաղաքների արդիւնաբերութեան ծոցում ծնունդ առած բանուորք,

այլ և հողին փարած աշխատաւոր գիւղացին։

2. — Այդ պատճառով, այդ դպրոցի — ունակ և, ի հարկէ, Դաշնակցութեան — դաւանած ընկերվարութիւնը կրում էր ոչ միայն ինդուստրիէլ, այլ և ագրար բնոյթ։

Այդ հիմնական ըմբռնումից ելնելով ու գտնելով միաժամանակ, որ աշխատանքով հողին փարած գիւղացիութիւնը այն հզօր բանակն է, որ պիտի հարթի ընկերվար հասարակարգի ուղիները, Դաշնակցութիւնն ըստ այնմ էլ փոխանցման շրջանի համար, մասնատիրական իրաւակարգի սահմաններում, որպէսզի ունէր համապատասխան հողային ծրագիր։

Այդ — հողերի համայնացման սկզբունքն էր։

Հողը — չի պատկանում ոչ ոքի և պատկանում է բոլոր նրանց, որոնք ցօղում են նրա երեսը իրենց քրտինքով։ Իւրաքանչիւրը այնչափով հող մշակելու իրաւունք ունի, որչափով նա կարող է այդ սնել, առանց ուրիշի աշխատանքը շահագործելու։

Հողի տնօրինութիւնն ու նրանից օգտուելու ձևերի որոշումը պատկանում է, նախ՝ ամէնէն փոքրիկ միաւորին, գիւղին իր գիւղացիով և ապա՝ վարեց. վեր՝ այդ առաջին միաւորի վրայ աստիճանաբար բարձրացող յետագայ միաւորներին։

Տարաբախտաբար մեր նիւթի սահմանները թոյլ չեն տալիս երկարօրէն կանգ առնելու

այն չափազանց բնորոշ ու իմաստալից ծրագրերի վրայ, որ Դաշնակցութիւնը որդեգրեց հողային խնդրում :

Նաև այստեղ, հողային հարցի մէջ, արտացոլում է ապակենտրոն գաղափարների այն վեհ սկզբունքը, որ հիմնաքարն է կազմում Դաշնակցութեան դաւանանքի, որ արտայայտւում է նաև ազգային ու պետական հարցերի մէջ և որ իր կենսունակութիւնը պահում է, պիտի պահի ոչ միայն այսօր, մեր պայքարի այս վառ ու բախտորոշ շրջանին, այլ և պիտի պահի վաղը, երբ խաչածեղած զէնքերը հանգիստ կ'առնեն հաւասարութեան, եղբայրութեան և ազատութեան երիցս նուիրական յազութանակի տակ :

Ապա, այստեղ ևս, նաև այս հարցի լուծման ուղիները գծելու ժամանակ, Դաշնակցութեան ղեկավար սկզբունքը եղած է պահել կօօպերացման, աստիճանական համայնացման և աշխատաւորական տնտեսութիւնների ստեղծման այն կարեւորագոյն զէնքը, որ ղիւրուութիւն պիտի տայ ուրոյն, ուղղակի և անմիջական ճանապարհներով, առանց անհրաժեշտօրէն այսպէս կոչուած «կապիտալիստական մաքրարանից» անցնելու, ոտք կոխելու ապագայ հասարակակարգի սեմէն ներս :

Սակայն չխօսենք ըստ էութեան այս հարցերի մասին, որովհետև այդ դուրս է մեր այսօրուայ նպատակներից :

Սահմանափակուենք միայն այսքանով, որովհետև այս մի քանի խօսքերի մէջ արդէն կմախքօրէն տրուած է հողային հարցի ըմբռնման այն հիմնական սկզբունքները, որ ունի Դաշնակցութիւնը :

Արդ, ի՞նչ էր մարքսիզմի դիրքը այս հարցում :

Ինչպէ՞ս էին մտածում մեր «ուղղափառները» երէկ և ինչպէ՞ս են մտածում ու գործում այսօր :

Ուղղակի զաւելտական, առարկայօրէն ապշեցուցիչ ու յուսահատական է այն նահանջը, որ սկսուել է նաև այս հիմնական հարցում :

Մարքսիզմը, մասնաւորաբար իր փթթման սկզբնական շրջանին, բացառաբար բանու՛ր դասակարգի ուսմունքն էր :

Աւելի որոշ :

Միայն կապիտալն ու կապիտալիստն էին կազմում ժխտական ատաղձը այն կառուցուածքի, որից անխուսափելիօրէն, արտադրական ուժերի գերազանց զարգացման հետեւանքով ու դասակարգային պայքարի մէկ վճռական ժամին ծնունդ պիտի առնէր ընկերվար հասարակակարգը :

Կապիտալը պիտի երկնէր պրօլետարիատին, իսկ պրօլետարիատը ծնունդ պիտի տար սոցիալիզմին. — ահա այն պարզ ու շիտակ ձամբան, որ մարքսիզմը գծեց իր դաւանանքի

աշխարհում:

Հուլիական «Կապիտալ»-ը եկաւ վերջնա-
կանապէս հիմնաւորելու այն մտքերը, որ
խանձարուրապատ ձեռով արծարծուած էին
«Մանիֆեստ»-ի մէջ:

Գիւղն ու գիւղացին դուրս հանուեցին
տնտեսական այն մրցաշխարհից, ուր հակա-
դիր բեւեռներով կեցած էին իրար գէժ սեփա-
կանազուրկ բանուորութիւնն ու սեփականա-
տէր կապիտալիստները:

Ընկերվար հասարակակարգին անկեղծօ-
րէն ձգտելու համար միակ առաքինութիւնը
սեփականագրկութեան հանգամանքը նկատուեց
և աշխատանքի ու շահագործման պարագանե-
րը էապէս ու փաստօրէն ստորագաս արժէք-
ների բնոյթ ստացան:

Աշխատաւոր գիւղացին — մինչև իսկ չափա-
զանց չքաւոր, աւելի քար շահագործման են-
թակայ, սակայն տէր մի փոքրիկ կտոր հողի
— համարուեց, այնուամենայնիւ, իբրև ան-
հարազատ տարր զուտ ընկերվար պայքարի
համար և մարքսիստական ըմբռնումով հիմ-
նովին զատուեց իր անբաժան հատուածից՝
աշխատաւոր բանուորից:

Նաև գիւղի համար գծուեց այն ճամբան,
ինչ յատուկ է քաղաքին և քաղաքային ար-
գիւնարբերութեան:

Արտադրական ուժերի յարաձուռն զար-
գացման զուգընթաց գիւղը պիտի ենթարկ-

ուէր, նախ՝ կապիտալացման և ապա՝ ան-
խուսափելիօրէն ու բնականաբար՝ նաև պրո-
լետարացման. ու նոր միայն, երբ այս երկու
երևոյթներն իրենց ամբողջ հասակով կը ցըց-
ուէին գիւղական աշխարհի մէջ, այն ժամա-
նակ հնարաւոր կը լինէր խօսել աշխատաւոր
գիւղացու մասին, իբրև ընկերվար պայքա-
րին ստտարող ազգակի:

Եւ որովհետև տեսականօրէն այսքան ժըխ-
տական էր մարքսիզմի դիրքը ղէպի գիւղն ու
գիւղացին, ապա նաև գործնական կեանքի մէջ
այս վերաբերումը կրեց բացայայտօրէն թըշ-
նամական բնոյթ:

Յրանսական առաջին սոցիալական յեղա-
փոխութեան պարտութեան օրերին, էնգէլսը
ճամբորդական ցուպն առած ոտքով Պարիզէն
ճամբայ ելաւ ղէպի զուգեցերիական սահման-
ները՝ գտնելու համար ձախողած հոյակապ
ընդվզումի յանցաւորներին:

Եւ նա «գտաւ» նրանց:
Այդ — ֆրանսական գիւղացիներն էին, ու-
րոնց «հակակոմունիստական գանկը» անըն-
դունակ էր ըմբռնելու գեղեցկութիւնն այն
«ազատութեան ծառերի», որոնք Մարքսն ու
էնգէլսը մարտելեօլի նուազի տակ 1848-ին
տնկում էին Պարիզի փողոցներում: Յատկա-
պէս այդ թուրից սկսած «ընկերվար առաքի-
նութիւն» դարձաւ կարճես անարգել շարու-
նակ գիւղական ամբողջ աշխարհը և աշխա-

տաւոր գիւղացու մէջ տեսնել ընկերվարու-
թեան մահացու թշնամուն :

Յետագային այս վերաբերումն իր պաշ-
տօնական արտայայտութիւնը գտաւ գերմա-
նական ծանօթ «Էրֆուրտեան Ծրագրի» մէջ,
որ 90-ական թուականներին խմբագրուեց
Կառուցկու ձեռքով :

Այս ժխտական վերաբերումն էլ աւելի
արտառոց կերպարանք առաւ ռուս ուղղա-
փառների մօտ, որոնց խօսքերը կրկնակիօրէն
այլանդակելով, թուժակում էին ամէն տեղ
ու ամէն անգամ մեր հայ «սպեցիֆիկները» *)
(ինքնատիպներ) :

Գրեթէ անկարելի է սպասել այն մեծ
գրականութիւնը, որ նուիրուեց այս հարցին :

Իւրաքանչիւր սոցիալ-դեմոկրատական
գրիչ իր առաջին մելանը չորացրեց սեւով սպի-
տակի վրայ որեւէ անարգական խօսք դրոշմե-
լով մանր հողատիրութեան հասցէին :

Վիճակագրական թւերն ու փաստերը,
գիւղական կեանքի լուրջ ուսումնասիրութիւն-
ներն ու մանր հողատիրութեան նուիրուած
գիտական աշխատանքները անկարող եղան
համոզելու մեր մարքսիստներին, որ «Կապի-
տալ»-ի մէջ Անգլիոյ հողատիրութեան մասին
գրուած մարքսեան տողերը շատ քիչ կապ

*) Կովկաս հայ սոցիալ-դեմոկրատներին նաև այդ-
արդար տիտղոսով էին սրակում :

ուենն եւրոպական ցամաքի, մասնաւորաբար՝
Ռուսաստանի, իսկ առաւել ևս՝ ասիական յե-
տամնաց երկրների հետ :

Մարքսիզմը տասնամեակներ շարունակ
կանգնած մնաց կապիտալիզմին և պրո-
լետարացման տեսակէտների վրայ և, ընկեր-
վար ձգտումներ գտնելով միմիայն դտարիւն
սեփականադրկութեան՝ բանուորական աշ-
խարհի մէջ, թերացաւ մինչև իսկ գործնական
քաղաքականութեան որեւէ հանրապարտագիր
(պարտագիր իրենց՝ սոցիալ-դեմոկրատների
համար) ծրագիր մշակել կուսակցութեան հա-
մար :

Եւ այդ պատճառով ռուս մարքսիստները
մի շարք խաչաձևող առաջարկներ ունեցան
հողային հարցում, սակայն ինքք կուսակցու-
թիւնը պաշտօնապէս իր ամբողջութեանը մէջ
ազրար ծրագիր երբեք չունեցաւ :

Ահա այսքան ողբալի էր պատկերը :

Սակայն այդ նոյն կուսակցութիւնն իր
ամբողջութեան մէջ—իսկ այս ամէնէն կարե-
ւորն է մեզ համար—դիմ էր ու մնաց դիմ հողե-
րի համայնացման ծրագրին, որի կողմնակից-
ները մարքսիստական որակումով «մանր բուր-
ժուաններ», «բուրժուաչիկներ» ու «քաղքենի-
ներ» էին :

Այդպէս էր սակայն երէկ :

Տարիներ ու տասնամեակներ սահեցին,
ծաւալեցին և ուռճացան բանուորական եւ

գիւղացիական շարժումները այլևայլ երկրներին մէջ, ու պարզուեց մինչև իսկ մարքսիզմի համար, որ գիւղական աշխարհը ենթակայ չէ քաղաքային արդիւնաբերութեան զարգացման սովորական օրէնքներին, որ եւրոպական ցամաքն ու ասիական երկրները բնաւ տրամադիր չեն Անգլիոյ անցած ճամբան կտրելու, ուր, ի գէպ, Մարքսը տեսած էր երևոյթների միայն մի կողմը՝ խոշոր անտեսութիւնների յազթանակը, ու չէր տեսած միւս երեսը՝ մանր տրանտեսութիւնների ցուցադրած կենսունակութիւնը գոյութեան պայքարի մէջ:

Եւ անա Բերնշտայնի՝ աջից, Մերինգ՝ ձախից ու նոյն ինքը կառուցկին՝ կուսակցութեան կենտրոնից սկսեցին նահանջը նաև ազրար հարցի մէջ և հարկադրուած եղան ի վերջոյ խոստովանելու, որ գիւղական աշխարհը ունի, այո՛, իր զարգացման բոլորովին ուրոյն օրէնքները, որոնք չեն համապատասխանում քաղաքային արդիւնաբերութեան զարգացման օրէնքներին:

Նրանք գտան, որ մի շարք երևոյթների հետ Մարքսն անձանօթ լինելով (երևոյթներ, որոնք ի յայտ եկան նրա մահուանից յետոյ), կարող էր սխալուել, ուստի պարտականութիւն է ընկնում նրա հետեորդների վրայ գիտակցել այդ սխալները և օր առաջ նրանք սրբազրել:

Չափազանց ուշադրաւ և իմաստալից է այն նահանջը, որ ձեռնարկեց այս գծի վրայ

ընդհանրապէս մարքսիզմը:

Սակայն ուղղակի զաւելչտական է այն խուճապը, այն բացայայտ զինաթափութիւնն ու անձնատուութիւնը, որ յատկապէս այս կէտում ապրեց ռուսական բոլշեւիզմը:

Մի շարք կոկետութիւններից յետոյ, որ թոյլ տուաւ իրեն այդ փխտաւոր հոսանքը մինչև հոկտեմբեր, 1917-ի հոկտեմբերեան դաւազրութիւնից յետոյ, անցնելով իշխանութեան գլուխ և վերջ տալով իր կոկետութիւններին, խորհրդային վարիչները, մեր այդ երբեմնի մարքսիստները, յատուկ գեկրետով յայտարարեցին, որ Ռուսաստանում հողը եւ քարկուռն է համայնացման:

Այսպիսով, ճակատագրի մէկ չարածնի խաղով, հողերի համայնացման սկզբունքը գալիս էին պաշտօնապէս նուիրագործելու եւ նրա գործադրութեան ձգտելու այն մարդիկ, որոնք տարիներ ու տասնամեակներ շարունակ ժանր ու ժանգ էին քափում բոլոր նրանց հասցէին, որոնք հողերի համայնացման սկզբունքներն էին պաշտպանում:

Գիտէ՞ք, յիշու՞մ էք արդեօք գաղափարական սնանկութեան, գաղափարական լիկււրացիայի մէկ այլ, այսքան շոնդօլից, այսքան փայլուն ու հոյակապ օրինակ:

Կարո՞ղ էք փախուստի ու նահանջի մէկ ուրիշ գէպք բերել, որ լինէր այսքան խայտառակ ու այսքան վարկաբեկիչ:

ի հարկէ, ո՛չ :

Սակայն էլ աւելի զաւելտական է այն բացատրութիւնը, որ տրուեց այս նահանջին :

Սկզբնական շրջանին, բացայայտ գողութեան առաջին իսկ օրերին, գաղափարապէս անանկացած բուլշեւիկները յայտարարեցին, որ նրանք հողերի համայնացման կողմնակից են իբրև կառավարական իշխանութիւն, բայց ոչ երբեք՝ իբրև կուսակցութիւն :

Որ նրանք դեկրետով ուսու գիւղը ենթարկում են համայնացման, որովհետև գիւղացիական զանգուածները այդ պահանջն են առաջադրում, որից բուլշեւիկ կուսակցութիւնը՝ զանգուածներին (!?) այդ քաղաքական հոսանքը՝ իբրև այդպիսին, իբրև մասսայական կազմակերպութիւն, խուսափել անկարող է :

Սակայն յետագային, երբ անակնկալ գողութեան ստեղծած սկզբնական շփոթը մի քիչ անցաւ և Մոսկուան աւելի ամուր զգաց իրեն իշխանաւորի աթոռի վրայ, «մեծ բախտախրն՝ դիրը» (իրենց իսկ որակումով)՝ Լէնին՝ Երրորդ Միջազգայնականի Երրորդ Համագումարին արտասանած իր նշանաւոր ճառի մէջ յայտարարեց, որ իրենք, ճիշտ է, գողացել են էս. էրական ագրար ծրագիրը, սակայն «վերցրել են եսէրներին այդ ծրագիրը, նախ՝ նրա համար, որ յաղթեն նրանց, իսկ, երկրորդ՝ նրա համար, որ փոքրամասնութիւնը իրենք գիւղացիները նրա անպետքութեան մէջ

համոզուեն» : *)

Այս մի քանի շնական տողերի մէջ խրատացրուած ձևով տրուած է բուլշեւիզմի բովանդակ էութիւնը :

Այո, խորհրդային յետադէմ, խաւար ու բռնակալ ուժը չէր կարող ու չի կարող, ի հարկէ, անկեղծօրէն որևէ յառաջադէմ գաղափարի զօրավիգ հանդիսանալ : Նա հարկազրուած է շարունակ զանգուածների առջևից վազել, միշտ դաւադրաբար իւրացնելով նրանց նշանաբանները ու միշտ էլ դաւադրաբար խաբելով նրանց :

Ինչպէս պետականութեան խնդրում ու նաև ազգային հարցի մէջ այդ ախտաւոր ու նեխած հոսանքը դաւողաբար խոստացաւ ամէն ինչ, գնաց ամէն զիջումների, իսկ փաստօրէն և էպպէս վատագոյն հալածանքը տարաւ թէ՛ ազգութեանց ու թէ՛ նրանց քաղաքական պահանջների դէմ, այդպէս նաև ագրար հարցի մէջ «կարմիր» բռնաւորները իրենց ուսերին առին հողերի համայնացման լուսաշող ծիրանին, որպէսզի մութին մէջ անարգօրէն դաւեն ու դաւադրեն նրա դէմ :

Ու չի կարելի չխոստովանել, որ նրանք մի չափով իրենց նպատակին, ի հարկէ, հասան :

*) «Ռեվոլյուցիոննայա Բոսսիա», Բեռլին, 1923, թ. 28—29, էջ 8 (Զերնովի յօդուածը) :

«Եւ այժմ դուք յաճախ կը լսէք ու նաև շատ սոցիալ-դեմոկրատներէց . — «այ՛ո՛ր, հողային հարցի մէջ յաղթանակեցին էս-էրները, բայց նրանք յաղթանակեցին բոլշեւիկներէ միջոցով : Հէնց նրանց (էս-էրներէ) ողբերգութիւնն էլ կայանում է նրանում, որ իրենց ագրար ծրագիրը, միակ համապատասխանը ուսասկան իրականութեան, գործադրուեց բոլշեւիկեան ձեռքերով» : *)

Այս տողերի մէջ որոշ ճշմարտութիւն կայ անշուշտ, որովհետեւ բոլշեւիկները իրապէս ջանք չխնայեցին իրենց իսկ դեկրետը գործնական կեանքի մէջ յետագային վարկաբեկելու և ձախողման մատնելու, որպէսզի մէկ հարուածով երկու նապաստակ բռնած լինեն . նախ՝ խաբեն գիւղացիներին . նրանց խոստանալով հողերի համայնացում . իսկ յետոյ՝ եղծելով ու խաթարելով այդ նոյն ծրագիրը, վարկաբեկեն այն բարոյակաւ յաղթանակը, որ տարել են էս-էրները :

Եւ իսկապէս «ագրար կողակտը» (օրէնսգիրք), որ յետագային . տարիներ վերջ, մշակեց ու գործադրութեան դրաւ կոմմունիստական կուսակցութիւնը, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ հողերի, գիւղական աշխատանքի ու գիւղական տնտեսութեան համայնացման գեղեցիկ սկզբունքի ու համապատասխան դեկրետի ժըխ-

*) Ibid., էջ 8.

տումն ու վարկաբեկումը :

«Ինչպէս հողերի համայնացման օրէնքը ուսասկան յեղափոխութեան վերելքի նշանաւոր վկայութեամբն է, այդպէս նաև հողային օրէնսգիրքը (նորը, բոլշեւիկեանը . Վ. Ն.) նրա անկման կարևորագոյն փաստաթուղթն է», — ասում է հակաընկերվարական ու հակաբոլշեւիկ Ռուցկուս, որ չափազանց գոհ է բոլշեւիկներից նրա համար միայն, որ նրանք վարկաբեկեցին հողերի համայնացման սկզբունքը, իսկ յետոյ էլ՝ վերահաստատեցին հողային սեփականատիրութիւնը, որ «միայն տրամաբանական վերջին կէտն է ընդգրկած ուղղութեան, պատկուհին է այն շէնքի, որ Նորին Վեհափառութիւնն ագրարային Նեպ (տնտեսական նոր քաղաքականութիւն) անունն է կրում» *) :

Այս վիճակը ցոյց է տալիս, որ ուսասկան մարքսիզմը յանձինս բոլշեւիկեան հոսանքի շարունակում է տառապել իր հին ախտով, այն է՝ ագրար հարցի մէջ զուրկ մնալ որևէ որոշ ու յստակ ծրագրից :

«Որքա՞ն երկար ժամանակ մենք պիտի շարունակենք հեծնել ընդհանուր խօսքի վրայ

*) Ռուցկուս . «Խորհրդային իշխանութեան հողային քաղաքականութեան եւոյլիցիայի մասին», «էկոն. վեստնիկ», թ. 1, էջ 34—35 : («Քաղում ենք «Ռեվ. Ր.» , թ. 28—29, էջ 11) :

— բանուոր դասակարգի միութեան՝ գիւղացիական զանգուածների հետ :

«Մեր կուսակցութիւններից եւ ոչ մէկը ոչ միայն ջուրի ագրար ծրագիր, այլ եւ չգիտե գիւղացու վիճակը» : *)

Այս դառն խօսքերը պատկանում են այնպիսի մի ականաւոր բոլշեւիկի, ինչպիսին Ռադեկին է, և արտասանուած են խորհրդային կարգերի գոյութեան ոչ թէ առաջին օրերին, այլ նրա եօթերորդ տարում, կոմմունիստական կուսակցութեան ԺԳ. համագումարին :

Այս ակամայ խոստովանութիւնը ցոյց է տալիս միաժամանակ, թէ իրապէս որքան «անկեղծ էին» Մոսկուայի բռնաւորները, երբ 1917-ին, իրենց դաւադրութեան սկզբնական օրերին, հողերի համայնացման դեկրետը յղացան :

Տարիները սահեցին ու անցան և սակայն բոլշեւիկները, այնուամենայնիւ, ըստ Ռադեկի հեղինակաւոր խոստովանութեան, մնացին առանց ագրար ծրագրի :

Ու պարզ է թէ ինչու :

Բոլշեւիկները մնացին առանց ծրագրի, որովհետեւ իրենց հիմքին և էութեան մէջ նրանք բնաւ չփոխեցին ղէպի գիւղացիութիւնն ունեցած իրենց քղնամական վերաբերումը :

Գիւղի իր աշխատաւորով եղաւ ու մնաց

*) «Պոս. Նովոստի», 6 Յունիս, 1924 :

խորհրդային կարգերի հզօր հակառակօրդը, որից կարմիր բռնաւորները սարսեցին ամէնից ուժգնօրէն և ամէնից աւելի :

«Զգոյշ եղէք, որ այսպէս կոչուած ընդդիմադիր վերաբերումը առաջին բաղիտումը չըլինի մեր դռներին զարկուած», — դեռ մի քանի ամիս առաջ՝ յունւար 27-ին՝ ասում էր կամենեւի բոլշեւիկ ընդդիմադիրների հասցէին :

Ինչո՞ւ :

«Որովհետեւ կեանքը աւելի կայուն է դառնում, գիւղացին եւ բանուորը սկսում են աւելի ճետաքրքրուել ընդհանուր հարցերով :

«Եւ նրանք, որոնք հաւատում էին կոմմունիստներին, որոնք պարզ հրամանով հաց էին տալիս, պիտի ասեն. — Դուք է՛լ գիտէք, թէ ինչ վիճակ է ապրում ձեր կուսակցութիւնը :

«Այս գուեհիկ դեմոկրատիզմը առաջին ծիծեռնակն է այն իրական ննշման, որ գիւղացին գործադրում է մեր կուսակցութեան վրայ. այս անխուսափելի չարիք է և այս բոլոր վտանգներից մենք չենք կարող փրկուել, եթէ մեզ օգնութեան չզայ համաշխարհային յեղափոխութիւնը» :

Պարզ չէ՞ միթէ այս խօսքերի իմաստը : Այն հոսանքը, որ ճառում է շարունակ գիւղացու և բանուորի միութեան անունից, որ կրում է «բանուորա-գիւղացիական իշխանութեան» անունը, որ կուրծք է ծեծում շարունակ յա-

նուն աշխատաւորութեան, ահա այդ կուսակցութիւնն այսքան «մտահոգ է» («Տենդ է ապրում»), —ասում էր Լէնինը՝ Վ. Ն.) . կեանքը դարձել է աւելի «կայուն», որովհետեւ գիւղացու զրուծիւնը բարւոքուել է մի քիչ աւելի, որովհետեւ գիւղացին սկսել է «աւելի հետաքրքրուել ընդհանուր հարցերով» :

«Յանձինս զոյուծիւն ունեցող օպպոզիցիայի (բոլշեւիկեան . Վ. Ն.) — կարգում ենք 1924-ի յունուար 9-ին Մոսկուայում տեղի ունեցած արտակարգ խորհրդաժողովի բանաձեւի մէջ, — մենք ունենք ոչ թէ բոլշեւիզմը վերաքննութեան ենթարկելու մի փորձ, ոչ թէ Լէնինի գծից անմիջականօրէն բաժանուելու ձեռնարկ, այլ աւելին . կասկած չկայ, որ այդ օպպոզիցիան առարկայօրէն արտացոլում է այն մանր-բուրժուական (կարգա՝ գիւղացիական . Վ. Ն.) նկրումը, որ ուղղուած է պրոլետարական կուսակցութեան դիրքերի եւ նրա քաղաքականութեան դէմ :

Ներկուսակցական զեմոկրատիայի սկզբունքները արդէն սկսում են աւելի լայն իմաստով հասկացուել կուսակցութիւնից դուրս, այսինքն խօսուում է այն մասին, որ թուլացել է պրոլետարական դիկտատուրան և որ քաղաքական իրաւունքներ պիտի տրուին նոր բուրժուակային» : *)

*) «Մարտակոչ», 1924, թ. 27 (283) :

Այսպիսով, կուսակցութեան բարձրագոյն մարմինն իր պաշտօնական բանաձեւի մէջ «գիւղացիական (իւրեց ժալգոնրով — մայր. բուրժուական . Վ. Ն.) ճնշում էր» տեսնում այն վիճարանութեան մէջ, որ սկսուել էր կուսակցութեան կենտրոնի (Ստալին, Զինովիեւ, Կամենեւ), աջ բեւի (Ռադեկ, Ռիկով, Կրասին), ձախ բեւի (Պետապով, Ստրուկով) և «դեմոկրատիկ ցենտրալիստների» (Պրեորբաժենըսկիյ, Սապրոնով, Օսինսկիյ) միջև մի շարք հիմնական հարցերի շուրջ : Եւ որովհետեւ բոլշեւիզմը ոչ միայն «բանուորա-գիւղացիական իշխանութիւն» չէ (իսկ որ բանուորական չէ՝ այդ գիտեն Ռուսիոյ բանուորները), այլ մահացու կերպով վախենում է գիւղացիութիւնից, այդ պատճառով էլ Զինովիեւը չէր քաշուում այդ նոյն օրերին իր կուսակից ընդդիմադիրներին յայտարարելու .

«Կուսակցութիւնը իշխանութեան գլուխն է, ամէն ինչի ոգին : Այս հարցերի մասին եղած ոչ-բոլշեւիկեան հասկացողութեանց մընացորդները պիտի մաքրել ու սրբել երկաթով» :

«Այո, մենք ի վիճակի ենք դեռ տասնեակ անդամներ ընդդիմութեան (ու նաև . . . բոլշեւիկեան . Վ. Ն.) գլուխը սրածելու» :

Ահա թէ ինչ լեզուով ընդունակ է խօսելու խորհրդային իշխանութիւնն այն մարդոց հետ, որոնք կուսակցութեան դեկավար դէմքեր լինելով, «առարկայօրէն արտացոլում են — իր»

իշխանութեան կարծիքով անշուշտ—գիւղացիական ճնշումը, որ ուղղուած է պրոլետարական կուսակցութեան դիրքերի ու նրա (հակագիւղացիական) քաղաքականութեան դէմ) :

Չերկարենք սակայն այս մէջըրումները, որովհետեւ նրանք միշտ և ամէն անգամ նոյն թունալից խօսքերն ու ակնարկներն են պարունակում, ինչ որ մենք քիչ վերը—նմուշի համար միայն—մի քանի օրինակներով յիշատակեցինք: *)

Արդ, այս բոլոր անժխտելի, աղաղակող ու վարկաբեկիչ փաստերից յետոյ ո՞վ է արդեօք, կրկնենք նորից մեր ծանօթ հարցը, լիկնիդացիայի ենթարկուողը եւ ո՞վ լիկնիդատուրը :

Գաղափարապէս ո՞վ սնանկացաւ տասնամեակներ աւելոյ յամառ պայքարի մէջ և ո՞վ կարողացաւ պահել ու պահպանել իր վաղեմի դիրքերը :

Վերջնական պատասխան տալուց առաջ սակայն՝ մի երկու խօսք էլ հասարակագիտական ըմբռնումների տարբերութիւնը յատկանշող վերջին ու հիմնական հարցի մասին :

Ի՞նչ գունաւորում կար արդեօք մարք-

*) Բոլշևիկ տեսաբաններից Լարինը գիւղին նուիրած իր մէկ աշխատանքի մէջ չի խնայում և ոչ մէկ սուր ամական «բանուորագիւղացիական իշխանութեան» «սիւններից» երկրորդի՝ գիւղացիութեան հասցէին :

սիգմի ու հակամարքսիստական ընկերվար թեւերի փիլիսոփայական ըմբռնումների աշխարհում՝ պատմական երեոյթները, նրա հիմնական ազդակները և անհատների ու գաղափարների կատարած դերի մասին պատմութեան մէջ :

«Որոշ» էր մարքսիզմի դիրքը նաև այս կէտում :

Դեռ ևս «Մանիֆէստ»-ի մէջ Մարքսն ու էնգելսը այն միտքն էին արծարծում, որ ընկերվարութիւնը բղխում է փաստերից եւ ոչ՝ գաղափարներից :

Ապա յետագային Մարքսն իր «Բաղաբաւտնետուրեան քննադատութեան» մէջ (1859) գալիս էր հիմնաւորելու այն ծանօթ եզրակացութիւնը թէ՛ «հասարակակցութիւնն է որ որոշում է մարդու գիտակցութիւնը և ոչ թէ գիտակցութիւնն է որ որոշում նրա կեցութիւնը» :

Ու քիչ վերջ, ընդամէնը մի քանի տարի յետոյ, իր դասական աշխատութեան՝ «Ապիտալ»-ի մէջ, Մարքսը տալիս էր այսպէս կոչուած «անտեսական մատերալիզմի» ամբողջական պատկերը, որ էնգելսը՝ փիլիսոփայական հարցերի մէջ Մարքսից թերեւս աւելի ձեռնհաս ու կարող հիմնադիրը մարքսիզմի՝ էլ աւելի հիմնաւորեց ու խորացրեց Զէյլերբախին նուիրած իր աշխատութեան և մի շարք ուրիշ ռուս մասիրութեանց մէջ :

Ըստ այս ուսմունքի, մարդկութեան բովանդակ հոգեկան կեանքը՝ կրօն, իրաւունք, գեղարուեստ, ընտանեկան յարաբերութիւններ ու բարոյական հասկացողութիւններ, ճաշակ, ըմբռնում ու հայեացքներ և չն. և չն. այս բոլորը ինքնուրոյն արժէքներ չեն բնաւ, այլ արուած են նախապէս և պայմանաւորուած տուեալ վայրի մէջ իշխող արտադրական ուժերի կացութեամբ և այդ ուժերի զարգացման աստիճանաչափով:

!Այսպէս, օրինակ, ըստ էնգէլսի դիտողութեան, «Վերածննդի ամբողջ շրջանը XV-րդ դարի կէսերից սկսած և մասնաւորաբար այդ օրերից նորէն արթնացած փիլիսոփայութիւնը արդիւնք էր քաղաքների զարգացման, այսինքն՝ բուրժուազիայի ֆիլիսոփայութիւնն էապէս միայն արտացոլումն էր այն մտքերի, որոնք համապատասխանում էին մանր և միջին բուրժուազիայի ձեւափոխութեան՝ խոչորի»:^{*})

Մարքսն իր «Կապիտալ»-ի առաջին հատորի մէջ գալիս էր վկայելու. որ Հնդկաստանի մէջ կատարուած պեղումներով կարելի է դարեր առաջ եղած հասարակական յարաբերութիւնների պատկերն արտադրել իրեն.

^{*}) Նովգորոզեւ. — «Հասարակական իդեալի մասին» (ռուս.), 3-րդ հրատ., Բերլին, 1921, էջ 176:

յարակից «վերնաշէնքով», ինչպէս և քրիստոնէութիւնն իր «վերացական մարդու իդէալով» պարզել ապրանքափոխանակութեան այն վիճակով, որ գոյութիւն ունէր այդ շրջանի հասարակութեան մէջ:

Եւ որովհետեւ այսպէս բացարձակօրէն ժխտելում էր անհատի ու զաղափարների ինքնուրոյն դերը պատմութեան ստեղծագործ աշխատանքի մէջ, ուստի նաև գործնական քաղաքականութեան սահմաններում մարքսիզմը գալիս էր գրաւելու միանգամայն ուրոյն և միայն իրեն յատուկ դիրքեր:

Այս տեսակէտից ամէնէն հիմնականն այն է, որ մարքսիզմը ծառայեալ անաբեկման սկզբունքի գէմ: Քանի որ անհատը ինքնուրոյն դեր չունի պատմութեան մէջ, ուստի նաև անարժէք է անաբեկման փորձը այս կամ այն անհատի վրայ, — ահա այս էր դատողութեան և ըմբռնումի այն հիմնական կէտը, որ զրգեց մարքսիզմը իր պայքարի զինապահեստից մէկզդի նետելու կռուի այս հատու գէնքը:

Բոլորովին հակադիր տեսակէտների վրայ էր կանգնած բնկերվարական մտքի այն թեւը որին յարում էր նաև Դաշնակցութիւնը: Այս դպրոցը չէր բացասում անտեսական գործօնների յեղաշրջիչ մեծ դերը, սակայն նաև չէր ժխտում այն նշանակութիւնը, որ վերապահուած է անհատին ու մարդկային զաղափարների մարդկային պատմութեան մէջ:

Այսպիսով, Դաշնակցութեան որդեգրած պատմափիլիսոփայական ուսմունքը բռնում էր միջին ճամբան այն երկու հակադիր ուղղութիւններ, որոնցից մէկը ամէն ինչ վերապահում էր միայն անտեսական գործօնին, իսկ միւսը, ընդհակառակը, կտրականապէս ժըխտում էր այս վերջինի որոշիչ դերը և պատմութեան ճակատագիրը յանձնում միմիայն գաղափարներին:

Արդ, պահե՞ց արդեօք մարքսիզմը իր վաղեմի դիրքերը: Գէթ միմիայն մարքսիզմի համար մնա՞ց արդեօք իբրև անյողգողէ ճշմարտութիւն այն, ինչ երկնել էին նրա հիմնադիրները (ու շարունակել՝ հետևորդները), ըմբռնումների նաև այս բնագաւառում:

Ոչ, չմնաց:

Դեռ ևս էնգելսը հարկադրուած եղաւ հետևեալ խոստովանութիւններն անելու.

«Մեր հետևորդները եթէ անտեսական կողմին երբեմն աւելի նշանակութիւն են վերագրում, քան հարկաւոր է, դրանում մասամբ Մարքսն ու ես ենք մեղաւոր:

«Մեր հակառակորդների վերաբերմամբ մենք ստիպուած էինք ընդգծել այն հիմնական սկզբունքը, որ նրանք ժխտում էին. բայց ժամանակը, տեղը եւ հանգամանքները բոլիջէին տալիս հարկաւոր ջափով ուշադրութիւն նուիրել փոխադրեցութեանը մասնակցող մնա-

ցած մոմենտներին:»^{*)}

Ահա պատմական առաջմղիչ գործօնների «փոխադրեցութեան» այս հիմնական սկզբունքն էր, որ նախապէս ժխտելով՝ յետագային աստիճանաբար սկսեց իւրացնել նաև մարքսիզմը:

Սոցիալ-դեմոկրատների շարքերում մինչև իսկ վերաքննական ահազին հոսանք ստեղծուեց, որ բեվիզիոնիզմ անուան տակ (Բերնշտայնի գլխաւորութեամբ) եկաւ շեշտակի հարուածներ տալու մարքսիզմի նաև այս խարխուլ դիրքերին:

Սակայն նիւթից չչեղուելու համար մենք կը կամենայինք կանգ առնել այս հարցերից բղիտղ գործնական յատկապէս մէկ խնդրի վերայ, այն է՝ տերրորի:

Ի՞նչ, մնա՞ց մարքսիզմը հաւատարիմ ինքքն իրեն: Նրա «ձախ» թեւը, յանձինս բուշելիզմի, երբ Ռուսիոյ մէջ տիրացաւ իշխանութեան, արդեօք հրաժարուե՞ց տէրրորից:

^{*)} Արարատուկի. — «Բաղ. կուս. Ռուս.», էջ 26 (Թէ այս և թէ ուրիշ շափազանց ուշագրաւ կտորներ ու մտքեր—քննադատաբար մարքսիզմը վերլուծող—կան Բերնշտայնի «Die Voraussetzungen des Sozialismus und die Aufgaben der Sozialdemokratie» աշխատութեան մէջ, որ ժամանակին թարգմանուած է նաև ռուսերէն լեզուով):

կարծում ենք, թէ այս հարցին այլևս աւելորդ է պատասխանել:

Ռուսաստանի մէկ ծայրից միւսը, հսկայական երկրի բոլոր մարդաբնակ քաղաքները, գիւղերի և ավանների մութ ու խոնավ նկուղները, ուր գործել է Չեկայի զազիր կացինը,—անա այս բոլոր արնահոտ զնդանների մէջ երբեք չպիտի լռի այն տասնեակ հազարաւոր անմեղ զոհերի ձայնը, որոնք անասելի տանջանքների մէջ յաւէտ փակեցին իրենց աչքերը:

Ինչպէս ամէն սրբութիւն և ամէն նուիրական ըմբռնում խաթարեց ու եղծեց մեծ պատերազմի այս անարգ վիժուածքը, ճիշտ նոյն ձեւով այլանդակեց ու ապականեց ժանիքաւոր բոլշեւիզմը նաև անարեւի ման սկզբունքը՝ դարձնելով այն պարզ մարդասպանութիւն:

«Մեծաքանակ» ու «փոքրաքանակ» ապրանքի ձեւով հնձուեցին Ռուսիոյ լաւագոյն զաւակները, մարդասպանութեան անարգ արհեստը «յեղափոխական» արուեստի կատարելութեան հասաւ և մինչև իսկ երկրի մանուկները, հետեւելով մեծերի օրինակին եւ ընդօրինակելով Չեկան, հնարեցին մի չտեսնուած զուարճալիք և պուպրիկներով սկսեցին «կախաղան խաղալ»:

«Մենք պատերազմ չենք տանում անհատների դէմ: Մենք ոչնչացնում ենք բուրժուա-

զիան իբրև դասակարգ»^{*)}, — հնձում ենք, ուզում է ասել բոլշեւիկ դահիճը, գերազանցօրէն «յեղափոխական» միջոցներով, այն է՝ «իրեն դասակարգ»՝ խմբերով ու զանգուածօրէն, և ոչ թէ գործադրում ենք պայքարի «հակայեղափոխական» զէնքը՝ անհատական տէրրօրը՝ չարիքի անուղղայ ազբիւր դարձած այս կամ այն բացառիկ անհատի դէմ:

Ինչ փաստը—մերկ ու դաժան—այն է, որ սրածոււմ են մարդասպանութեան բոլոր ձեւերով՝ անհատաբար, խմբերով ու մասսայօրէն բոլոր նրանք, որոնք ոուս երկրի ազգաբնակչութեան 0,3 տոկոսի հետ չեն, այլ գտնուում են մարդկային ըմբռնումների այն բեւեռի վրայ, ուր խմբուած են այդ նոյն երկրի ազգաբնակչութեան 97,7 տոկոսը:

Սակայն մի վերջին խօսք՝ ոուս սոցիալ-յեղափոխական կուսակցութեան պարագլուխ Չերնովին և մենք կը փակենք այս հարցը:

«Պատահական երևոյթ չէ երբեք, որ ամբողջ Չեկան լիքն է հիւանդ, հոգեպէս աղճատուած մարդկանցով:

«Չկայ այնպիսի անյատակ անդունդ, մարդկային հոգու այնպիսի անկում—այդ սոցիալապէս դեռ բաւական թոյլ կրթուած նախագազանի ներկայացուցիչ՝ մարդու մօտ—

^{*)} Լացիս. — «Կարմիր տերրօր» թերթում, 1 հոկտեմբեր 1918 («Չեկա», էջ 16):

որ չբացուի այդ զնդաններում անարգ արհեստի ամէնօրեայ գործադրութեան տակ :

«Այո, ես ջեմ կարողանում քնել, ինձ ամբողջ գիշերը տանջում են մեռելի երբ», — *ինքնաբերաբար ասել է բոլշեւիկեան դահիճներից մէկը: Մէկ ուրիշը — Արխանգելսկու գաժանութեանց հերոս Կեդրովը իր կեանքը վերջացրել է խելագարանոցում :*

«Ձախ էս-էրները, որոնք բոլշեւիկների հետ ունեցած իրենց բարեկամութեան կարճատեւ շրջանին մասնակից եղան Չեկայի գործունէութեան, Մարիա Սպիրիդոնովայի (ռուս յայտնի յեղափոխական և ահաբեկիչ (կին) . Վ. Ն.) բերնով յայտարարեցին ի լուր ամբողջ աշխարհի, թէ ինչպէս իրենց ներկայացուցիչները «չնչամեղձ էին լինում մարդկային մարմնի եւ հոգու վրայ եղած անարգանքների այդ սպանիչ մթնոլորտում, ուր տանջանքները, խաբէբայութիւնները, ամեն ինչ կլանող կաշառքները, պարզ քայանք եւ սպանութիւնները — սպանութիւններ առանց հաշուի, առանց քննութեան, միմիայն մե'կ խօսքի, մե'կ ցուցմունքի, մե'կ ջապացուցում ու ոչ որի կողմից ջնաստատուած ակնարկի վրայ», թէ «ինչպէս փախչում էր մեռելի պէս տոգունաձ Լիբսանդրովիչը, խնդրելով, որ հենց այսօր անմիջապէս իրեն ազատեն Չեկիստի պարտականութիւններից», թէ ինչպէս արբեցայտ աստիճան խտուձ էր եմելեանովը, ասելով. «սպանեցե՛ք ինձ,

սկսել եմ խմել, ջեմ կարող, այնտեղ սպանում են, արձակեցեք պաշտօնից, ես ջեմ կարող...»

«Եւ միթէ՞ պիտի զարմանալ, որ նրանք հարկադրուած են կամ իրենց քնացնել՝ դառնալով մորֆինիստներ ու կոկաինիստներ, կամ վերածուել պարզ սաղիստների: Մի՞թէ պիտի զարմանալ, որ Չեկաները դէպի իրենց են քաշել հասարակութեան ամբողջ տականքը, նրա բարոյական վիժուածքները, մէջն առնելով նաև ցարական կարգերից մնացած այն հրէշներին, որոնք «վերամկրտուել» են նոր իշխանութեան աւազանում: Եւ զարմանալ արդեօք, որ հին ու նոր լրտեսներն ու մարդասպանները այդքան արագօրէն ձուլուեցին, կազմելով հոգեկան և բարոյական մի ամբողջութիւն :

«Փոխանակ բոլշեւիզմը ազատելու կեղտոտ ու արիւնոտ գործից, Չեկաները փտախտ դարձան, որ տարածում են վարակը «խորհրդային իշխանութեան» ամբողջ մարմնի վրայ :

«Նրանց գործունէութիւնը — անարգանք է մարդկութեան հասցէին: Բայց և միաժամանակ նա — «փալչն ու փառքն է կոմմունիստատական կուսակցութեան»: Որովհետեւ նրա մէջ է — վերջնական կէտը այդ կուսակցութեան հիմնական գաղափարի, այն է՝ վերադարձ դէպի այսպէս կոչուած «լուսաւոր միահեծանութիւնը», «լուսաւոր բռնապետութիւնը»՝ կոմմունիստական շղարշի տակ :

«Բռնապետութիւն, որ դարերով ստորկուծեան ընտելացած ուս մարդու մէջ նորէն սպանում է քաղաքացիական անհատը և վերակոչում ստրուկը:

«Բուշեւիկեան կարգերը, որ գոլորշիացրին ընկերվարութիւնից նրա ճշմարիտ ոգին—ազատութիւնը, և թողեցին նրանից միայն անչնչացած և նեխող դիակը—կոմմունիստական տաժանքը, Չեկաների մէջ գտան իրենց տրամաբանական անխուսափելի լրացումը:

«Ով ցանկանում է այդ կարգերը պահել, բայց ոչնչացնել Չեկաների սարսափը,—նա ցանկանում է պահել կաթոլիկութիւնը՝ բայց առանց Պապի, աշխարհակալութիւնը՝ բայց առանց պատերազմի, միապետութիւնը՝ բայց առանց զուգարովչինայի (ցարական բուշեւիզմ. Վ. Ն.)»: *)

Այս տեղոյն ու տկար տողերի մէջ շատ թոյլ կերպով տրուած է սարսափներով լի այն անաւոր վիճակը, որ այսօր իշխում է բովանդակ Ռուսաստանի մէջ:

Երբեմնի փարթամ, վերածնող ու հզոր երկիրը, ուր թէև զժողարութեամբ, սակայն անդրդուելիօրէն կերտւում էին նիւթական, մտաւոր և բարոյական գեղեցկագոյն արժէքներ, այսօր սպրում է այդ արժէքների անկ-

*) Ձերնով.— «Արիւնտ պսիխոզները», («Չեկա», էջ 17—18):

ման նեխող ու քայքայող շրջանը:

Հարևր միլիոնից աւելի մի անգլի բազմութիւն, դարձած կամազուրկ և իրաւագուրկ անասունների մի հսկայական հօտ, եօթերորդ տարին է, որ լուռ է բռնութեան տակ և կարօտ մեր մոլորակի ամէնէն հմայիչ ու գեղեցկագոյն զարդին՝ ազատ ու անկաշառ մարդկային խօսքին:

Սակայն չչարունակենք այս ուղղութեամբ, որովհետև ի զուր չէ, երբ հանգուցեալ Բ. Իշխանեանն իր այնքան թանկարժէք ու յուզիչ բանտային յուշերի սկզբնական տողերի մէջ յուսահատօրէն գրում է.

«Վախենում եմ, որ անկարող լինեմ իրականութիւնը իր լի բովանդակութեամբ ու եզրերով պատկերացնել:

«Վաղուց այն կարծիքին եմ, որ բոլշեւ վիկեան իրականութիւնը գերազանցում է ամեն մի նկարագրական ուժին ու տաղանքին՝ թէկուզ վերջինս հասնէ կիկերոնեան պիճախօսութեան և Զօլայի գրչի կատարելագործող աստիճանին»): *

Եզրափակենք: Մենք հարեանցիօրէն քննութեան տակից բոլշեւիզմի զաղափօրական շէջի պայտապ վտերաց թղտր

*) Բ. Իշխանեան.— «Երկու ամիս բօլշեւիկեան բանտում», Տպարչ. «Յոստաթի», 1924, էջ 1—2:

հիմներն ու տեսանք, որ մարքսիզմի այդ ուս-
սական վիժուածքից կենդանի խօսք չէ, որ
ժառանգութիւն է ստանում ապրող սերուն-
դը. այլ տխուր աւերակներն մի ամբողջ շեղ-
ջակոյտ:

Բուլճեւիզմը վերջնականօրէն տեղի տուաւ
այն բոլոր կէտերում, ուր ցցուած էին նրա
գաղափարական բերդի պատնէշները, ուր նա
իրեն անպարտելի էր զգում և տասնամեակներ
շարունակ մոլեգին ձեռով յարձակումներ գոր-
ծում հակառակորդ բոլոր ընկերվար հոսանք-
ների վրայ:

Ազգային հարց, պետականութեան խըն-
դիր, հողային կնճիռ և պատմա-փիլիսոփայա-
կան ըմբռնում, —ահա երէկուայ չորս գլխա-
ւոր ամբոցները, որոնցից սակայն այսօր չի
մնացել զրեթէ ոչ մի հետք:

Այս բոլոր կէտերում բուլճեւիզմը դիմել է
ոչ միայն խուճապահար փախուստի, այլ եւ
ամէնէն անարդ ձեռով գողացել է իր հակա-
ռակորդների գաղափարները, ձգտելով, այդ-
պիսով, իր ազդեցութեան տակ պահել ալեկոծ
զանգուածները և ապա՝ գործնական կեանքի
մէջ եղծելով ու խեղաթիւրելով այդ նոյն
գաղափարները՝ յուսահատութեան մղել ընչա-
զուրկ բազմութիւնները, որոնցից այնքան
մահացու կերպով սարսափում է նա:

Արդ, այս բոլորից յետոյ ո՞վ է արդեօք լիկ-
ւիդացիայի ենթարկուողը և ո՞վ լիկւիդատորը:

Պայքարող երկու գլխաւոր հոսանքներից
ո՞ր մէկն արդեօք գաղափարապէս սնանկացաւ
վերջնականօրէն և ո՞րը պահեց ու պահպանեց
իր վաղեմի դիրքերը:

Պատասխանել այս հարցերին, այդ կը նը-
շանակէ միաժամանակ պարզել գաղտնիքն այն
կենսունակութեան, որ այսօրուայ հաւեր
պայմանների մէջ դեռ շարունակում է իր մէջ
ամբարած պահել Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Արդարեւ. ինչո՞ւ արդեօք հայ մեծ քա-
ղաքական հոսանքը, ենթարկուելով հանդերձ
անլուր հալածանքների, հետապնդուելով ու
սրածուելով մէկտեղ, այնուամենայնիւ, այն-
քան ներգոր կերպով ազդում է հայ իրակա-
նութեան վրայ, մնալով իրրեւ մեր կեանքի
կարևորագոյն քաղաքական ազդակը:

Պատճառը պարզ է:

Որովհետև պարտուած են դաշնակցական-
նե՛րը, բայց ո՛չ Դաշնակցութիւնը, տկար է
երկու մեծ բռնակալութեանց հանդէպ հայ յե-
ղափոխականի՝ բուռնցքը, բայց ո՛չ նրա դա-
ւանած գաղափարը:

Ու ճիշտ այստեղ էլ թագնուած է նրա
հզօրութեան և ուժի կենսատու աղբիւրը:

Որովհետև երբ չի մեռել գաղափարը,
երբ նա դեռ լուսաւորում ու պայծառ գիծ է գը-
ծում զանգուածների որոնումների առջևից,
ապա վստահ ու անսխալ կարելի է պնդել, —
ասա՛ ու կրկնի՛ր, — որ բռնաւորի եսթաղանին

զո՞՞ գացած տասնեակները փոխարէն՝ գաղափարական մի հզօր ու անպարտելի մղումով ծնունդ պիտի առնեն հարիւրաւորներն ու հազարաւորները :

Աւելին :

Թերևս և ոչ մէկ բան այնքան փայլ ու հմայք է տալիս որևէ կենդանի գաղափարի, որքան հալածանքը, որ բռնաւորը նիւթում է այդ գաղափարը կրողի դէմ :

Ապահիր գաղափարը, ու նրա պատգամախօսը կը դատապարտուի ինքնին ամէնէն դատան մահուան :

Իսկ երբ չի՛ պարտուել այդ գաղափարը, ապա դիր սուրբ պատեանիդ մէջ, որովհետեւ ուսերից թռած մէկ գլխի փոխարէն՝ անտեսանելի ձևով հարիւրաւոր ուրիշ գլուխներ պիտի բարձրանան ուրիշ հարիւրաւոր ուսերի վրայ :

Պարիզի ազգային պանթէոնի մուտքի ձախ պատը զարդարուած է մի սքանչելի նկարով : Առաջին իսկ վայրկեանից պարզ է այն յղացումը, որ արգասաւորել է արուեստագէտի (Bonnat) վրձինը :

Նկարի վրայ փռուած են մի քանի անձիտուած դիակներ : Վերջին անգամ, կրք դահիճը կացնի մէկ շեշտակի հարուածով մի կողմ է նետում հերթական զոհի գլուխը, այս անգամ անձիտուած առաջեայն իր գլխառուած պարանոցից փոխանակ արիւն յրդելու, լոյսի պայծառ, փայլուն ու բիւրաւոր շողեր :

է ժայթքում, որոնցից դահիճը սարսափի մատնուելով՝ արիւնյոււայ կացինը նետում է մի կողմ և մահուան երկիւղի մէջ ցցուած այս անաւոր տեսիլքի առջև :

Գլխատուած մարմնի երկու ձեռքերը կուրօրէն երկարում են դէպի գետին փռուած գլուխը՝ վերստին գաղափարի այդ անմեռ անօթը շառափնաթափ պարանոցի վրայ դրնելու համար, ու այդ ժամին բարձունքներից իջնում է մէկը՝ ձեռքին դափնիազարդ պսակը բռնած՝ գաղափարի զոհը յաղթանակի պսակով պսակելու համար :

Այո, երբ կենդանի է գաղափարը, բացարձակապէս անիմաստ է այլևս թուր գործածել այդ գաղափարը կրողի դէմ :

Ահա թէ ինչու Մարքսն այնքան իմաստուն ձևով նկատում էր ամէն կարգի ցնորատեսների հասցէին .

«Երբ դուք ցանկանում եք ձեզ եւ ուրիշներին համոզել նրանում, որ ձեզ անպայման յաղորտօրին եւ սպասում եւ ոչ պարտութիւն՝ դուք պետք եւ սպացուցեք, որ ձեր ենթակայական ճգտումները չեն հակասում հասարակական զարգացման առարկայական բնրացքին, այլ գուգաղիպուում են նրա նետ եւ հանդիսանում իբրեւ նրա արտայայտութիւնը» :

Իսկ բողջեւիզմն ապացուցեց, որ նրա դաւանած ձգտումները բացարձակապէս հակասում են հայ կեանքի հասարակական զար-

գացման առարկայական ընթացքին, ուստի այդ անտառը հոսանքը վիժեց, սնանկացաւ գաղափարապէս և թոյլ վահան դարձաւ բռնաւորների այն «սեղմ ընտանիքի» համար, որ «հայ համայնավար կուսակցութիւն» անունն է կրում:

Եթէ ամբողջ տարի հրով ու սրով իշխելուց յետոյ հայ քրիստոնեայ երկրում, այսօր, այդ եթէ տարին անցնելուց յետոյ, համայնավար կուսակցութեան կենտրոնական կոմիտէի պաշտօնական տեղեկաբերը՝ Պ. Աշոտ Յովհաննիսեան՝ իր կուսակցութեան Գ. համագումարին յայտնում է, որ բոլշեւիկեան հոսանքին անդամագրուած հետեւորդների թիւը 71. ից (մինչև հոկտեմբեր) բարձրացել է ընդամենը 1824 հոգու:

Այս 1824-ի մէջ են և՛ հաւատացեալը և՛ անհաւատը, և՛ կեղծը և՛ անկեղծը, և՛ նա, որ տեղ ու բարիք է որոնում, ու նա, որ սպառնալիքից սարսափած՝ հպատակութեան տուրք է բերում արնանոտ բռնաւորին, իր հոգու խորքում միշտ դանայեաններից մնալով:

Տարօրինակ է մարդկային մտքի ընթացքը: Ընտելանալով որևէ փաստի—յաճախ անզօր ու փխրուն, —նա նրան յարատեւութեան արժէք է տալիս և պայծառ ու հզօր դալիքը յամառօրէն մոռացութեան մէջ պահում:

Ահա մինչև և իսկ այսօր, երբ ամէն ինչ պարզ է օրուան լոյսի պէս, կան անշուշտ

կամովին կոյրեր, որոնք չեն ուզում անսնել, որ օդի մէջ միայն բոլշեւիկեան սուխններ կան ցցուած, իսկ զանգուածների, երկրի ու ժողովրդի մէջ այդ սուխններին ոյժ ու կենդանութիւն տուող գաղափարները չկան:

Տաճար չո՛ւնի կերտած մարքսիստական ընկերակարութեան անաւոր վիժուածքը՝ անտառը բոլշեւիզմը, որի զանգերը յաւերժօրէն կարողանային զողանջել, ուխտաւորների բազմութիւններ քաշելով դէպի իրենց նուիրական յարկը:

Ընդամենը 1824 հոգի, եթէ երկար ու ձիգ տարիների բացարձակ տիրապետութեան շրջանին, իսկ անգին, մարդկային ըմբռնումների միւս բևեռին վրայ, կեցած է գրեթէ բովանդակ հայ ժողովուրդը, մօտ մէկ ու կէս միլիոն մարդ և այն էլ... միայն մայրենի երկրում, ուր մահուան երկիւղի մէջ նա իր օրհասն է ապրում բռնաւորի մահաշունչ հաթաղանի տակ, շարունակելով հանդերձ, ինչպէս նոյն Յովհաննէսեանն է վկայում, «կարտով յիշել բուրժուական «խօսքի» ազատութիւնը, կուսակցութիւնների եւ խմբակցութիւնների «ազատ» աշխատանքը» *):

Դաշնակցութեան գաւանած գաղափարների կենսունակութեան ու յաղթանակի ուրիշ աւելի փայլուն ապացոյց արդեօք կարե-

*) «Խորհրդային Հայաստան», թ. 106, 1924:

լի՞ է յիշատակել :

Բուշեւիզմի գաղափարական յուսանատ անանկութեան աւելի ցայտուն փաստ արդեօք կարելի՞ է բերել :

Զուր չէ անշուշտ, որ բուշեւիկեան աւարգ վոհմակը Հայաստանի զիւղերի, քաղաքների ու աւանների մէջ տիւ և զիչնր դաշնակցականներ է որսում և նրանց բոլորի բերնի մէջ դնում Մեծ Մարգասէրի սուա վկաների խօսքերը .

«Սա ասեր . կարող եմ քակել գտանարն Աստուծոյ, եւ գերիս ասորս շինել» :

Զուր չէ, որովհետեւ Դաշնակցութեան անհամար զոհերի ու զոհաբերութեանց գնով կերտուած հրաշափառ տաճարը, որի դռները դոց են այսօր, իսկ դանգերը՝ լուռ, վաղը, երեք օրուան մէջ, նորէն պիտի ցցուի մայր հայրենիքի ծոցում ու հարթի ճանապարհը դէպի մարանչող հայութեան Մեծ Երազը, — դէպի ազատ և անկախ Հայաստանը, դէպի ժողովրդների իսկական եղբայրութիւնը, դէպի ճշմարիտ ընկերվարութեան պայծառ ու լուսաշող յաղթանակը :

«Դաշնակցութիւնը կարող է վերագրուել գործողութեան նոր յեմակետներ, — «Դաշիրեան» թախիծով խոստովանում է Դաշնակցութեան գերեզմանափորը, Աշոտ Յովհաննիսեան :

«Պոկ գալով սոցիալական հարազատ հանգրուանից, Դաշնակցութեան քաղաքական նա-

ւր, հողմահար ու հողմավար, յածում է հիմա պատմական ահաւոր ալիքների վրայ :

«Բայց կարող է փոխուել բամբակի բնաքացրը, ճին նաւը կարող է մտնել բաւուկ հունի մէջ :

«Հարազատ անկարութիւնն ու օտար ուժերի աննպաստ դասաւորութիւնը հարկադրեցին Հայաստանի քաղքենուն կապել իր բախտը պրոլետարական յեղափոխութեան հետ . Բայց պրոլետարական յեղափոխութեան համաշխարհային կռիւը բուրժուական հակաիդափոխութեան դէմ դեռ չէ աւարտուած : Յեղափոխութիւնը յաղթական է միայն վերջին հաշուով :

«Պայքարի բնաքցումն ննարանոր է նախանշ, ննարանոր է ուժերի նոր դասաւորութիւն : Նշանակում է ննարանոր է նաեւ քաղքեմու (կարգա՝ հայ աշխատաւորի . Վ. Ն .) նոր դիմադրանքութիւնը : Նա դաւաճանեց բուրժուազիային, կարող է դաւաճանել և պրոլետարիատին :

Յեղաշրջումը իր «օրիէնուացիան» փարոս կարող է վառել հակաիդափոխական այն յուսակայանի վրայ, որտեղ Դաշնակցութեան յածող նաւը քաղաքական խարխալս նգեյու . ննարջունի նիմա :

«Բաւական չէ, ուրեմն, արձանագրել թըշնամու խուճապը, քանի դեռ իր մասնաւոր ու բնաքցիկ պարտութիւնը նախասարագօր չէ մեր

յադրանակին՝ բնդնանուր եւ վախճանական : *)

«Անհրաժեշտ է կանխել ուժերի իր հաւաքումը, քանի ղեռ չէ յեղաշրջուած առմիշտ սոցիալական այն շերտի զարգացման ընթացքը, որից նա իր մարտական եռանդն է քաղում : Կոմմունիստական մտքի լուսարձակը պիտի հետապնդի մինչայդ ոտխի մրրկահար թափառումները և պայքարի մեր բանակը ունենայ պիտի ցցուած թնդանութիւնը խաղաղութեան և ստեղծագործութեան այն օթեանում, որտեղ պարտուած թշնամին պատերազմի ու աւերածութեան նորանոր յենակէտներ է փնտրում : **)

Մէկզի նետեցէք այս «ակադեմիական» ոճի աւելորդաբանութիւններն ու խճողումները և դուք այս տողերի մէջ պիտի գտնէք ճշմարտութեան ոսկեայ հատիկը :

Այո՛, վաղաժամ է Դաշնակցութեան «լիզելիզացիայի» մասին խօսելը, երբ բոլշեւիզմն ապրում է իր անբուժելի սնանկութեան պրոցէսը :

Որովհետեւ մեր մասնաւոր ու ընթացիկ պարտութիւնը, ճիշտ է Յովհաննիսեանը, բը-

*) Ընդգծումները մերն են :

***) Աշոտ Յովհաննիսեան. — «Դաշնակցութեան եղեղագիտական ընթացիկ կուրսը». — («Նորք» հանդէս, թ. 3, էջ 163, Երեւան, 1923) :

նաև հաւասարադօր չէ թշնամու յաղթանակին՝ ընդհանուր և վախճանական :

Մեր մոլորակի վրայ դեռ չատ բան պիտի փոխուի, պիտի փոխուի նաև քաղաքական քամիների ընթացքը ու Դաշնակցութեան հին նաւը անպայման պիտի մտնի բանուկ հունի մէջ :

Իսկ մինչ այդ, զինուած մեր օրերի հզօրագոյն զէնքերով՝ համբերութեամբ, տոկուսութեամբ և զգուշաւորութեամբ՝ պատրաստուենք այդ վարդագոյն պայքարի արևոտ օրերին :

Պատկանանք, որ զրկանքների և հալածանքների մէջ կռած զէնքերը միշտ հատու-



(ՎԵՐՋ)

ՄԱՏԵՆԱՆԵՐ "ՅՈՒՍԱՐԵՐ",

ԼՈՍՍ ՏԵՍԱՍ ԵՆ

1. — **ԼԻԱՄ ՋՐԱՂԱՅԸ** Հ. Ջառերման 2 Շիլին
(բարգձ. 7. Մխիթարեանի)
2. — **ԻՆՉ ՉԷՐ ՍԻ ԻՆՉ ՉՊԻՏԻ ԼԻՆԻ**
ՄԵՐ ՈՒՂԻՆ Վ. Նալապարդեան 1 Շիլին
3. — **ՀԱՅ-ՔՐԻՔԱԿԱՆ ԿՆՏԻՒԸ**
Փարին 6 Ս. Դ.
4. — **Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆՆԼԻՔԸ**
Վ. Նալապարդեան 8 Ս. Դ.
5. — **ՆՐԿՈՒ ԱՄԻՍ ԲՈՂՇԵՎԻՔԵԱՆ ԲԱՆՏՈՒՄ**
Սոխաշի Իշխանեան 10 Ս. Դ.
6. — **ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ «ԼԻԿԻՒԴԱՑՈՒԱՆ»**
(բոլշևիզմի սեանկոչեան ստիբոլ)
Վ. Նալապարդեան 7 Ս. Դ.

ԳԻՆ 7 Ե. Դ